JEAN EGLI
PAPETERIE-RELIURE
MORGES

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Թիւ մատենից 71
ՄԻՀՐԴԱՏ ԹՆԿՐԵԱՆ
ՅԵՒՐՈՊԱՅ 1904
ST. AUBIN (Neuchâtel) Suisse 1914

ՌԱՍԻՆԱՅ

ՄԻՀՐԴԱՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՄ

ՌԱՍԻՆԱՅ

ՄԻՀՐԴԱՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏԻՉ ՏԱՄԱՏԵԱՆԻ

ՀԱՄԱՁԱՅՆԻ
ՆՇԱՆ ՓԱԿԱՆՑԵԱՆ ՀԵՄԱՐԱՆ
ՍԱՏԵՆԱՐԱՐԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե· Մ· ՏՆՏԵՍԵԱՆ

Կ· ՊՕԼԻՍ

ՕՏՈՒՆ ԳԱԲՈՒ ՀԱՏՏԷՍԻ 465 ՏԱՄԱՏԵԱՆ ԽԱՆ

1874

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Ա.

Արդէն ծանօթ իսկ է լեզուագիտացն բանասիրաց մեծահռչակն յողբերգակս Ռասին, որոյ գործք օրինակ և օրէնս են տուեալ Գալլիացի թատերախօսից և թերեւս և այլազանց։ Եւ մին յերեւելեաց իւրոց գործոց թուի լինել անտարակոյս Միհրդատայ ողբեգութիւնն զոր ճահաւորագոյն և ընտրելագոյն 'ի թարգմանել համարեցաք քան զայլ ամենայն գործս իւր՝ իբրեւ ազգային ինչ հնութեան պատկեր, յորում անմահ բանաստեղծն զկեանս մեծի դիւցազնին անթերի անձնաւորէ 'ի թատերական բեմին։ Հայն անտարակոյս պարտի հրճուիլ յայնմ առաւել քան զօտարն, և մակաւելի 'ի տեսանելն զնա կամ յընթեռնուլ յիւրն լեզու 'ի նորոյ իմեքէ լեզուէ ածեալ՝ և զհնութիւն ազգային 'ի հնութիւն իւր անդր վերածեալ։ Այս և եթ կարծիք թելադրեալն էր զմեզ 'ի ձեռնարկ դուզնաքէիս այսր աշխատութեան՝ 'ի պատանեկանն անտի տիոց մերոց, այն է՝ հնգետասան ամօք յառաջագոյն։ Այլ զբաղանք բազմադիմիք մոռացուցեալ իսկ էին մեզ զայս աշխատութիւն մեր անտի և այսր, և կայր մնայր խառն ընդ շեղջակոյտս թղթակոտորոց և զինչպէտ գրութեանց, և 'ի վերջին ժամանակս գոգցեաս դիպուածաւ իմն ընդ միտ մեր հարեալ՝ և որոնեալ գտաք զնա։ Խրախուսեալ և ողերձեալ մանաւանդ 'ի մտերմաց ոմանց բանասիրաց՝ առ որս ընթերցաք մասունս ինչ 'ի նմանէ, ձեռն արկաք սրբագրել առ 'ի լոյս ընծայել իբրեւ երեխայրիս մերոյն քրտանց։

Բ.

Ոչ ինչ ապարթանեմք կամ պարծել յանդգնիմք յայսպիսի ինչ գործ սակաւավաստակ, այլ համարձակիմք ասել փարթար, եթէ որչափ մարթն էր՝ գուն գործեցաք աչալուրջ հսկողութեամբ 'ի թարգմանելն մեր զայս վերջայանգեալն տաղաչափութիւն 'ի վերջայանգեալ տաղաչափութիւն և 'ի շրջելն յեւրոպական և արդի բարբառէ 'ի յարեւելեան և 'ի հնագոյն իմն լեզու, ոյց ոչ գոյ բնաւ խնամութիւն, չկորուսանել զոգի (génie) Գալլիականին (որպէս ամենայն լեզու զիւրն ունի.) և զհանճար մեծի հեղինակին, միանգամայն եւ չմեղանչել ընդդէմ հայերենին՝ յարտառոց նորութեանց և 'ի չփոթելեաց ոճից և յերկդիմութեանց մտաց բանին՝ նա եւ և յաւելորդութեանց կամ 'ի յապաւմանց՝ կարեաց չափ խորշեցեալ, զոյդ ընդ նմին և զթարգմանութիւն բառ առ բառ գործել։ Որ բաղդատեսցէ ընդ բնագրին ստուգեսցէ զայս ամենայն։

Գ

Գտանիցին թերեւս և բանասէրք որոց հաճոյագոյն երեւեալ՝ ընդ հօրն Արսէնի Բագրատունւոյ՝ նախնեացն մերոց հնագունից ոճ տաղաչափական, այն է՝ խառն վանկաչափութիւն՝ և մասուն.ք տողից և անյանգ ոտանաւորն, յանդիմանեսցեն մեզ առ չհետեւելոյն մեր նոցուն օրինակի՝ իբրեւ նսիր տարապարտ անձին տուեալ առ 'ի զչափաբանեալ վանկաչափութիւն պահել և զվերջայանգն կամ զնոյնավերջն յարմարել։ Ընդդէմ այսր են և մեր փաստք և պատճառք կարծեմ ոչ նուազ իրաւացիք՝ յաղագս նախամեծար և արդոյ առդրելոյ զյանդաւորեալն տաղաչափութիւն՝ և ոչ դլխովին օրինակ մեզ զնախնեացն ունել պարտելոյ զչափաբանութիւն։ Սակայն անձկութիւն տեղւոյս և անյարմարութիւն առթիս արդել մեզ արկանեն երկարել, և եթէ պէտք

լինիցին յայլում առթի պատեհագունի լիովին խօսել խոս-
տանամք, բաւականացեալ առ այժմ ասել եթէ քաղցրա-
գոյն մեզ թուի արդի ճաշակ տաղաչափութեան ամենայնիւ-
քան զհինն, որպէս առ յոգունս 'ի բանասիրաց, և բաւա-
կան է զի եթէ ուշի ուշով հոգ և փոյթ տարցէ գրիչն կամ
թարգմանիչն խորշել 'ի խորթութեանց, և զքաղցրութիւն
հին հայերենին հոգւով չափ պահել ջանայցէ . . . . . :

Առ 'ի ներածութիւն և 'ի գիտութիւն ընթերցողին թէ
'ի մասին պատմականի՝ թէ բանաստեղծական սկզբանցն Ռա-
սինայ, շատ համարիմք թարգմանել աստանօր զյառաջա-
բան նորին իսկ հեղինակի, սակաւ ինչ համառօտեալ 'ի տե-
ղիս տեղիս, յորում լիովին՝ թէպէտ և հակիրճ՝ բացատրի
ամենայն ինչ զոր պարտն է կանխաւ գիտել ընթերցողին:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ·

Ոչ գոյ 'ի հնութեան անուն ծանօթագոյն քան զՄիհրդատայն · կեանք իւր և մահ նշանաւոր մասն իմն կազմեն 'ի Հռովմայեցի մատենագրութեան՝, և առանց թուելոյ զմեծամեծ գյաղթութիւնս իւր, հնար իսկ է ասել՝ եթէ անկումն իւր փառս անբաւ է հայթայթեալ առ երիս մեծանուն սպարապետս Հռոմոց, այն է՝ Սելլայ՝ Լուկուլլոսի և Պոմպէի: Առ այս ոչ կարծեմ եթէ պարտ ինչ իցէ ածել զպատմութիւնս 'ի վկայութիւն · քանզի՝ 'ի բաց առեալ քանի ինչ դէպս զորս գոյզն ինչ յեղաշրջեցի բանաստեղծական իրաւամբ, գիտասցէ ընթերցողն եթէ կարի յոյժ հաւատարմաբար զհետ գնացի պատմութեան: Ոչինչ դէպ կամ գործ երեւելի 'ի վարս Միհրդատայ՝ որոյ ոչ իցէ գըտեալ տեղի յողբերգութեանն իմում · ներածի 'ի նմա զամենայն որ կարէ պարզել զբարս և զզգացմունս իշխանիս այսորիկ, կամիմ ասել զանհնարինն իւր քէն ընդդէմ Հռոմոց, զմեծն իւր արութիւն սրտի, զխորագիտութիւնն իւր, զկեղծմունս, և վերջապէս՝ զբնաւորն իւր նախանձոտութիւն որ բազմիցս 'ի մահ մատնեալ է զտիկնայս իւր:(1)

Իսկ որ միայն կարծելին է ոչ լինել հանրածանօթ՝ այն

---

(1) Յաւելոյր Միհրդատ բարս բռնաւորս 'ի բեղմնաւորն իւր հանճար և 'ի յընդարձակն իւր ծանօթութիւնս գիտութեանց · · · · Սա ոչ խնայեաց և ոչ 'ի հարազատն իւր արիւն · քորքն իւր և որդիք և մինչեւ իսկ մայր իւր զոհ եղեալ են վայրագն իւր մոլեգնութեան · այլ ձեռնարկք իւր մեծամեծք ընդ քողով զեղծուանս իւր արկանեն · · · · սակայն 'ի վերջին աւուրս կենացն իւրոց ոչ երեւէր լինել նոյն ինքն բռնաւորն նախանձամբ՝ կեղծաւորն և անգութ, այլ ընդ հակառակն արքայ ոմն որ մարտնչի և մեռանի առ 'ի պաշտպանել զիրաւունս իւր և զանկախութիւն:

ԺԷՕՖՐՕԱՑ

է դիտաւորութիւնն իւր զոր ես տամ ունել՝ անցանել յի-
տալիա։ Այլ ըստ որում նպատակն իւր այս պաճարեաց
ինձ զմին 'ի տեսարանացն յաջողագունից յիմում ողբեր-
գութեան, ինձ թուի եթէ հաճութիւն ընթերցողին կրկ-
նապատկեսցի յորժամ գիտիցէ եթէ ամենայն պատմու-
թիւնք զնոյն ասեն՝ զոր ես տամ խօսել Միհրդատայ։

Փլորս՝ Պլուտարքոս և Դիոն Կասսիոս տան զանուն
աշխարհացն ընդ որս խորհէր Միհրդատ անցանել։ Ապպի-
անոս Ալեքսանդրացի մանրամասն ևս պատմէ, և զկնի
ցուցանելոյ զդիւրութիւնս և զօգնութիւնս զորս Միհրդատ
յուսայր դատանել յարշաւանս իւր, յաւելու եթէ՝ այս կէտ
նպատակին իւրոյ առիթ ետ փառնակեայ վտարանջեցու-
ցանել մարթելոյ զբանակն ողջոյն, և թէ զօրականք սո-
սափեալք 'ի ձեռնարկէն հօրն իւրոյ՝ համարեցին զայն իբ-
րեւ յուսահատութեան ինչ արդասիք իշխանի միոյ որ կո-
րընչել միայն խնդրէ փառօք։ Այսպէս ապա դիտաւորու-
թիւն իւր այդ եղեւ առիթ մեծաւ մասամբ մահուն իւրոյ՝
որ է նիւթ իմոյս ողբերգութեան։ . . . .

Անհաւասիկ խորհրդածութիւնք Դիոնի Կասսիոսի
առ այս նպատակ մտացն Միհրդատայ։ «Այրդ այդ ար-
դարեւ ծնեալ էր 'ի զակատիլ 'ի ձեռնարկս մեծամեծս։ Եւ
ըստ որում բազմիցս առեալ էր զփորձ աջողուածի և ձա-
խողութեան՝ ոչ մի ինչ համարէր 'ի վեր քան զյոյս իւր
և զարութիւն, և չափէր զխորհուրդս իւր առաւել
ընդ զօրութիւն քաջութեանն իւրոյ քան ընդ անյաջող ըն-
թացս իւրոցն գործոց, վաղ իսկ որոշեալ, եթէ ոչ 'ի ձեռ-
նարկին իւրում յաջողեսցի, առնել վախճան վայելուչ մե-
ծի միոյ արքայի և թաղիլ ընդ աւերակօք պետութեանն
իւրոյ յաւէտ՝ քան կեալ աննշան և նկուն։»

Զմոնիմէ ընտրեցի 'ի միջոյ տիկնայցն զորս Միհրդատ
սիրեաց։ Ըստ ասիցն Պլուտարքեայ՝ սէ թուի լինել առա-
քինագոյնն 'ի նոցունց՝ և «իբրեւ եհաս առ նէ հրաման 'ի

Միհրդատայ 'ի մեռանել, հանեալ 'ի գլխոյ իւրմէ զապարոշն արքունի և 'ի պարանոց իւր զնա դալարեալ կախեցաւ 'ի բարձուէ։ Այլ ապարոշին գտեալ անզօր՝ խզեցաւ անմիջապէս. և նէ ասէ յայնժամ. «Հիւսուա՛ծդ անիծեալ և թշուառական, ոչ բնաւ ծառայեսցես ինձ դու 'ի տխուրս այս 'ի պաշտօն։» Զայս ասացեալ՝ էարկ զնա յերկիր, և թքեալ 'ի վերայ՝ կարկառեաց զպարանոցն իւր առ մարդապետն։» —

Քսիփարէս էր մի յորդւոցն Միհրդատայ 'ի Ստրատոնիկէ անուն կնոջէն։ Սէ մատնեաց Հռոմոց զքաղաքաբերդ մի (Սիմիորիոն կոչեցեալ) կարեւորագոյն յոյժ՝ յորում էին գանձք Միհրդատայ, առ 'ի շահել առ որդին իւր զՊոմպէի։ Մատենագիրք ոմանք համարին ըզ պայազատս զայս խողխողեալ 'ի Միհրդատայ՝ առ 'ի զվրէժ լուծանել ժանտութեան մօրն իւրոյ։

Զփառնակէսայ ոչինչ խօսիմ, զի ծանօթ է ամենից եթէ նա ինքն ըմբոստեցոյց ընդդէմ Միհրդատայ զմնացորդ իւրոյ բանակին, և ստիպեաց զՄիհրդատ դեղել զանձն և թափ անցուցանել զսուսեր ընդ կուրծս իւր՝ առ 'ի չլինել ձերբակալ 'ի թշնամեացն իւրոյ։ Սոյն ինքն փառնակէս յաղթեցաւ ապա 'ի Յուլիոսէ Կեսարէ, և անկաւ յերկրորդի ճակատամարտին։

Միհրդատայ կին էր Արտաշատ. Արդ-շես Ա-ռաջին և Ա-ի-գրա-ն Բ. Ա-ի-ն գ-ոյ-ն։—

Միհրդատայ էր Քաշուռ կամ այլ (Քաշուռ կին էշած է (Արտաշատ, Մոնիմ, Ապրպատրիկ) և Մեր-

ԱՆՁԻՆՔ

ՄԻՀՐԴԱՏ, Արքայ Պոնտոսի և այլոց բազմաթիւ աշխարհաց.
ՄՈՆԻՄԷ, խօսեցեալ Միհրդատայ և Թագուհի հրատարակեալ.
ՓԱՌՆԱԿԷՍ } որդիք Միհրդատայ՝ յուրոյն մարց.
ՔՍԻՓԱՐԷՍ }
ԱՐԲԱՏԷՍ, Նախարար Միհրդատայ և Թեմակալ Նիմֆիոյ.
ՓԻԴԻՄԷ, Նաժիշտ մտերիմ Մոնիմեայ.
ԱՐԿԱՍ. սպասաւոր Միհրդատայ.
ԹԻԿՆԱՊԱՀՔ և ԶՕՐԱԿԱՆՔ.

Տեսարանն է 'ի Նիմֆիէ՝ Նաւ[illegible]
բականն Բոսփորի՝ 'ի Քերսոնէսն [illegible]



Εὐρύθη = ny 6 Nymphée

Cimmérien Bosphore

Chersonèse (Ker-so-nè-se continent, et nésos île), nom que les Grecs donnaient à quatre presqu'îles: 1° La Chersonèse de Thrace, aujourd'hui presqu'île des Dardanelles ou Gallipoli; 2e Chersonèse Taurique, aujourd'hui la Crimée; 3e La Chersonèse Cimbrique, aujourd'hui le Jutland danois; 4e Chersonèse d'or, qui est probablement l'Indochine actuelle.

ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ Ա.

ՔՍԻՓԱՐԷՍ, ԱՐԲԱՏԷՍ

ՔՍԻՓԱՐԷՍ

Հաւատարիմ էր համբաւն զոր տային մեզ, ո՛վ Արբատ.
Ստուգիւ Հռովմ յաղթանակէ և է մեռեալ Միհրդատ.
Ի կողմանս անդ Եփրատայ Հռոմք ըզհայրն իմ հարին
Եւ ընտէն իւր հսկողութեանց 'ի գիշերի պատրեցին.
Յետ յամառ իմն ճակատու բանակն համայն իւր ցրրուեալ՝
Ի խրդան անդ մեռելոց լրքին ըզնա խոյս տուեալ։
Եւ լուայ իսկ թէ զօրական ոմքն ածեալ աւանդէր
Ի մէջ ձեռաց Պոմպէի ըզսուր նորա և զյաղթեր.
Այսպէս արքայն՝ որ քառասուն ամս անընդհատ՝ մենաւոր(1)
Յաղթահարեալ է ըզՀռովմայ զամենայն պետս մեծազօր,
Ի՛որ յԱրեւելս ըզբազդ ազգացն տատանեալ 'ի կրչիռ՝
Պահանջէր զվրէժ պետիցն ամեն՝ հասարակացն 'ի կընճիռ(2),

---

(1) Պատերազմունք Միհրդատայ ընդ Հռովմայեցիս եռեսուն ամաք և եթէ են տեւեալ և ոչ քառասուն, ընդդէմ Սիլլայ, Լուկուլլոսի և Պոմպէի։ Զախողումն իւր վերջին ոչինչ վհատեցուցեալ էր զինքն և խորհէր իսկ որպէս Աննիբալ խաղալ՝ վարել պատերազմ յԻտալիայ. Թերեւս գտանիցի և պատմիչ որ քառասուն ամաք զտեւողութիւն ասպսցէ պատերազմացն Միհրդատայ, և հեղինակդ անտի առեալ և բազմութիւնն տարեաց ճոխ և հաճելի ևս դատեալ և զայն ընտրեալ իցէ։

(2) Կամի ասել եթէ զվրէժ ազգացն Ասիոյ նուաճելոցն 'ի Հռոմոց՝ թափէր, վանեալ զՀռոմս և աղատեալ զաշխարհս նոցուն՝ միջամտեալ 'ի կնճիռս այնց ազգաց և Հռոմոց զինու զօրութեամբ։

Մեռանի՝ թողեալ զՀետ իւր՝ 'ի խընդրել զքէն իւր մահուան,
Տարաբաստիկս որդիս երկու որք ոչ գտանին միաբան։

ԱՐԲԱՏԷՍ

Դու, ո՛ տէր, և ի՞բրու այս · գեղձդ իշխելոյ ընդ նորա
Արդէն ոսոխ յարուցանէ ըզքիսիփարէս փառնակեայ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛չ, սիրելիդ ո՛ Արբատէս, ոչ բնաւ գընել է ինձ կամ,
Այդու գընոյ ըզբեկորս վատաբաղդիկդ պետութեան ·
Գիտեմ յարգել յեղբայրըն իմ զերիցութիւն հասակին ·
Եւ շատացեալ աշխարհովքն 'ի յիմ բաղեալ 'ի բաժին,
Անապաշխար նկատեցից երբ ընկալցի նա զամէն
Զոր Հռոմոցն սիրելութիւն խոստացեալ յինքն է արդէն։

ԱՐԲԱՏԷՍ

Սիրելութի՛ւն Հռոմոց · Միհրդատա՛յ որդին, տէր ·
Հաւաստի՞ ինչ իցէ այս։

ՔՍԻՓԱՐԷՍ

Արբա՛տ, մի՛ բնաւ երկբայեր ·
Փառնակէս՝ 'ի սէր նոցուն 'ի վաղընջուց խանդակաթ՝
Ի Հռովմայ և յաղթողէն ամենից յաքանքէ արդ ·
Իսկ ես՝ յաւէտ հաւատարիմ առհայրն իմ այժմ քան յառաջ՝
Հռովմայեցւոց ընդդէմ պահեմ ատելութիւն աննուաճ ·
Սակայն թէ քէն իմ առնոսա և թէ նորուն ակնկալիք
Ի պիղմիս մեր են շարժառիթք փոքրագոյնք և չընչենիք։

ԱՐԲԱՏԷՍ

Եւ ո՞ր այլ շահ անձին իցէ որ ընդդէմ իւր զքեզ վառէ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Լո՛ւր ուրեմն և ապշեա՛ց · չըքնաղադեղն Մոնիմէ՝
Որ յանկոյց յինքն զիրձս համայն թագաւորին՝ մերում հօր,
Եւ ումապա փառնակէս զանձն իւր յայտնեաց տարփաւոր · · · ·

ԱՐԲԱՏԷՍ

Եւ ապա, տէ՛ր։

ՔՍԻՓԱՐԷՍ

Սիրեմ ըզնէ (1) · այլեւս լըռել ոչ կամիմ,
Զի չիք այլ ոք ինձ նախանձորդ բայց միմիայն եղբայրն իմ։
Անտարակոյս՝ ոչ 'ի լըսել ակն ունէիր դու ըզսա,
Սակայն, Աբբատ, ոչ եթէ սա գաղտնիք իմն է երկօրեայ։
Ի վաղընջուց մոգացեալ 'ի լըռութեան է այս սէր։
Էր չատակեմ պարզել աչացդ ըզխարուանս իմ կարեվէր՝
Եւ ըզնախկինն իմ ըզթառանչս և ըզտաղտուկըս արդեան։
Այլ 'ի պահոցս այս դառնաղէտ յորում ընկճեալ կամք սերկեան
Ոչ է ժամ ըզբաղելոյ զյիշատակ իմ և ըզբան
Առ 'ի յուշ ածել ըզշար սիրազեղուն պատմութեան.
Բայց զի լիցիս իրաւարար՝ զայս գիտել քեզ բաւ լիցի,
Թէ զՄոնիմէ ե՛ս նախ տեսի ե՛ս նախ ըզնէ սիրեցի,
Ցաւ թէ՝ հայրն իմ գիտէր և ոչ զանուն անգամ Մոնիմէ,
Մինչ յըղացայ օրինաւոր սէր իմն 'ի սիրտն իմ առ նէ։
Տես զնէ հայրն իմ· այլ փոխանակ նուիրելոյ չըքնաղին՝
Հարսանիս և ձիրս շնորհաց հաճոյականըս նըմին,
Կալաւ կարծիս զի նէ ոչ այլ ինչ խընդրեալ փառս գերազանց՝
Տեղի տացէ հեշտուին անպատեհն իւր պահանջմանց.
Գիտես՝ քանի՛ ճըգամբք փորձեաց ըզվերհուութիւն իւր ոգւոյն։
Եւ հուսկ ուրեմն վըհատեալ ընդ նանիրն իւր մըրցութիւն,
Ի բացեայ՝ այլ 'ի յաղդոյ սիրոյն զեղեալ յարեւեթ,
Ի ձեռըն քո ըզթագ իւր 'ի գլուխ նէրա ուղղեալ եդ։
Զաղախարշանս իմ դու դատեա՛, իբրեւ անսուտ ինձհամբաւ
Ըզխորհըրդոցն և զսիրոյ արքային յունկ իմ հարաւ,
Ի՛ իբրեւ լուայ զի յառաջաստ իւր որոշեալ Մոնիմէ

---

(1) Նէ, «է· իգականքն Նա և «ա դերանուանց, գրեթէ միայն 'ի Խորենացւոյն են 'ի կիր արկեալ, և իբրեւ յունաբանութիւն՝ 'ի գիտնոց 'ի բաց ընկեցեալ։ Այլ 'ի թարգմանութիւնս մեզ լաւ թուի դնել նէ կամ «է, յորժամ իգական է անունն և մանաւանդ յորժամ չփոթ 'ի միջի մտանէ՝ և թարգմանիչն պարտի զանունն կրկնել, որ է աւելորդութիւն։

Ընդ քեզ յուղի եղեալ գընայր հրամանաւ իւր 'ի Նիմիէ։
Ո՛վ եղկութեանս, 'ի դառնաղէտն այն աւուրս դէպ եղեւ այս՝
Յորժամ մայրն իմ ադահեաց Հռովմայեցւոցն 'ի յընծայս։
Կամ առ 'ի զվրէժ լուծել սիրոյն իւր նենգեալ յայս հարսանիս, (1)
Կամ ըստանալ կամեցեալ ըզՊոմպէի շնորհս առ իս,
Դաւեաց հօրն իմ և մատնեաց Հռովմայեցւոց նէ ինքնին
Ըզբերդարէս և ըզդանձս որք 'ի ձեռս իւր յանձն էին։
Ի լուր մօրն իմ եղեռանց իրրե՛ւ ոգիս խռովեցաւ։
Հայրն իմ ոչ ևս յայնմհետէ ինձ նախանձորդ թուեցաւ.
Ի մոռացօնս արկի զսէր իմ՝ առ որ նորայն եղուչ կայր.
Ոչ ևս ինձ գոյր առ աչօք բայց նախատեալն իմ հայր։
Մարտընչեցայ ընդ Հռոմն, և մայրն իմ՝ շուարեալ՝
Ետես զիս, անդ 'ի թափելս անդրէն ըզվայրըդ մատնեալ,
Մահահրաւէր բիւր հարուածոց նոցուն զանձն իմ նուիրել
Եւ խնդրել իսկ՝ 'ի մեռանելս՝ յինքենէն յուրաստ լինել։
Եւ յայնմանէ Եւքսին ազատ եղեւ և է տակաւին.
Եւ Պոնտոսին 'ի յափանց մինչեւ յեզերս Բոսփորին
Հայրն իմ անդրէն ծանուցաւ տէր. և նաւացն իւր երջանիկ
Զէին այլեւս թըշնամիք բայց թէ հողմունք և ալիք։
Իղձ էր առնել ինձ զաւելին, և խընդրէի, ո՛ Արբատ,
Ընդ թիկունս հօրն իմ ես ինքնին խաղալ յառաջ առ Եփրատ։
Ի դուժկան անդ մահու իւրոյ զարհուրեցայ աղեկարծ։
Ընդ արտասուս իմ յայնժամ— կամիմ և զայս յայտնել ասա—
Մոնիմէ զոր հօրն իմ 'ի ձեռս քո էր աւանդեալ
Հրապուրանօք համայնդեղոյ իւր դրաւեաց զմիտս իմ դարձեալ։
Զի՞նչ ասեմն. 'ի վիշտս իմ այս սոսկացի վասն իւր կենաց,
Եւ խիթացի արքային 'ի քինազէն տարփանաց.
Գիտես քանիցըս անդամ նախանձոտն իւր դորովանք

---

(1) Մայր Քսիփարեայ կոչէր Սարատոնիկէ որ, առ 'ի լուծանել զվրէժ սիրոյն նախատելոյ 'ի Միհրդատայ հարսանեօքն Մոնիմոյ .... մատնեաց Հռոմոց զքաղաքաբերդն Ամիսորիոն, ուր էին գանձք Միհրդատայ։

Եռուն առիթ վաւերել զմահ տիկնայց իւր բաւանդակ։
Սլացեալ գնացի 'ի Նիմիէ. և տխրայինն իմ նայեաց
Պատահեցաւ Փառնակեայ ընդ առաջ իւր պարբսպաց.
Խոստովանիմ, սրդային ինն ըզդայի աղդ նախատես.
Ասպընջական եղեր երկուցս մեզ, զայլն ամեն քաջ գիտես։
Փառնակէս՝ որ 'ի խորհուրդս իւր յարաժամ խրոխտաւոր,
Ոչ իսկ կեղծեաց պանտ 'ի պանտէ ըզկիրբս իւր ժպրհաւոր.
Զարկած դրժխեմ հօրն իմոյ առ թագուհին նա ծանոյց,
Հաւաստեաց զմահ նորուն առնէ՝ և փոխան զանձրն մատոյց։
Եւ որպէս ինքն ապարթանէ, կամի առնել զնոյն, Արբա՛տ.
Այլ 'ի կարգին իմ վերջապէս կամիմ և ես գալ 'ի յայտ։
Ցորչափ պատկառ կայր սէր իմ առ զօրութեամբ հօրն իմոյ,
Հօր՝ ում ուխտեալ էր անձն իմ 'ի մանկական 'ի տիոյ,
Նոյնչափ սոյն իսկ սէր այժմիկ ըմբոստացեալ յինքենէ՝
Այր նորայայտ ոսոխի զիշխանութիւն անգոմնէ։
Արդ՝ կամ Մոնիմ հակարաշ գըտեալ սիրոյն իմ դուցէ՝
Զդաւանութիւնն զոր արարիս դատապարտեալ մերժեսցէ,
Եւ կամ — թէպէտ և վախճան չար անտի յառաջ եկեսցէ —
Մահու իմով և եթ այլ ոմն ըզնէ տանալ կարասցէ։
Գաղտնի՛ք իմ բնաւ՛ք զորս կամէի առնել քեզ յայտ՝ աւասիկ.
Քո է ընտրել թէ յոր կոյս միտել պարտիս արդ այժմիկ.
Ո՞ յերկոցունց թուի քեզ վըստահութեանդ արժանին,
Անձնամատն գերի՞ն Հռովմոց՝ թէ արքայի քո որդին։
Խանչացեալ ընդ մտերմութիւն նոցուն յուսայ Փառնակէս
Հրամայել 'ի Նիմիէ և իշխել ինձ իսկ՝ թերեւս։
Այլ աստանօր զօրութիւն իմ ոչ ճանաչէ ըզնորայն,
Պոնտոս բագեալ է 'ի նա և կոլքոս իմ է միայն։
Եւ յայտ իսկ է զի կոլքիդ և իշխանք իւր միշտ և յար
Արկեալ եդեալ են զքոսփոր մարդկոյն իւրեանց 'ի համար։

ԱՐԲԱՏԷՍ

Հրամայեա՛ տէր։ Ցանդարձ եթէ իցեն ոյնքըն իմ,
Ընտրութիւն իմ լեալ է արդէն և արարիս զոր պարտիմ.

Նովին փութով նախանձայոյզ և արութեամբ իսկ սրտիս,
Իւ հօրըն քո ծառայէի ե՛արդիլէի զայս վայրիս
Եթէ ընդդէմ եղբօր քո և թէ ընդդէմ քո և ևս,
Յետ արքային մահու հանուրց ընդդէմ պաշտօն տարայց քեզ։
Առանց քո՝ ո՞չ գիտեմ ես եթէ ինձ մահ աներկբայ
Ի տեղիս այս գտանէր մուտ ըղհետ գայլիցն փառնակեայ.
Ո՞չ գիտեմ զի արիւն իմ ձեռամբ իւրով սրբրսկեալ
Պղծելոց էր զայս ակառնդ զընդդէմ նորուն արդիլեալ։
Զընտրութենէ և զսրբրտէ թագուհւոյն լե՛ր վստահ, տէ՛ր։
Նա զի կամ վարկ իմ իցէ ինչ վարկպարազի զեդ ըստուեր,
Կամ թողեալ փառնակէսին 'ի ձեռըս քո ըղբոսփոր,
Ի Հոռոմոցն երթիցէ վայելել շնորհըս այլուր։

ՔՍԻՓԱՐԷՍ

Քանի եղէց շնորհապարտ եռանդեանդ այդ վեհադին,
Բայց ումըն գայ, բարեկա՛մ. փութա՛. նէ ինքն է Մոնիմ։

ՏԵՍԻԼ Բ.

ՄՈՆԻՄԷ, ՔՍԻՓԱՐԷՍ

ՄՈՆԻՄԷ

Տէ՛ր, աւասիկ դիմեմառ քեզ. քանզի այսօր հուսկ ուրեմն
Եթէ թողեալ լքցես զիս՝ ո՛ լիցի ինձ ապաւէն։
Զիրկ 'ի ծնողաց՝ զիրկ 'ի մտերմաց՝ յանդահացեալ՝ վշտադին,
Յոգնուստ անուամբ թագուհիս՝ սակայն դերիս ճըշդովին,
Եւ ահա այժըմ այրի՝ ոչ արամբեալ բընաւին։
Ա.յլ այս ամենն յաղետից իմ, տէր, է յաւէտ չընչենին։
Սարսեմ զանուն տալ քեզ թամին որ բրռնանայ յանձըն իմ.
Ա.յլ դարձեալ յոյս մեծ է յիս զի սիրտ վեհաղն զերդ քոյին՝
Ո՛չ զոհեսցէ՝ ոչ երբէ.ք հիքացելոցն զարտասուս
Ի շնորհս արեանն հարազատի որ զօդէ զձեզ իսկ զերկուս։
Յայսըմ բանիս ճանաչել ըղփառնակէս է քեզ մարթ.
Նա ինքն է, տէ՛ր, նա ինքն է, ոյր լրբութիւն պատժապարտ

Խընդրէ բուռըն զօրութեամբ կալանդել զիս իւր բաղդին
Հարսանեօք իմն որ վասն իմ է քան ըզմահ ժանտագին,
Այլ ընդ որո՞վ թշնամի աստեղք ելցէ իմ ծնեալ.
Այն ինչ 'ի լծոյ հարսանեաց իմն՝ յոր թարց սիրոյ վիճակեալ,
Հազիւ զերծիմ և զճաշակ խաղաղութեանըն առնում՝
Ի՛ահա պարտիմ անձնատուր գոլ ատելւոյ իսկ իմում.
Յաւէտ խոնարհ լեալ յաղէտս՝ թերևս խորհել էր ինձ պարտ՝
Եթէ լինիմ ամբաստան առ եղբայր իւր հարազատ.
Այլ իրաւունք իմ՝ կամ խարուանք՝ կամ ռիմ քինոյս իմ ելցէ
Որ ընդ Հոռոմն զնա շրփոթէ՝ յորոց թիկունքս խընդրէ,
Սակայն ոչ գոյ հարսանիք ապախտարօք յոյժ նրսեմ
Որ չափեսցի 'նդ պատուհաս հարսանեաց այսր իւ պախեմ.
Եւ թէ Մոնիմ արտասուօք իւր զքեզ ոչ շարժէ յարգահատ,
Եւ թէ ինձ ոչ այլ ինչ մնայ բայց վիճակն իմ յուսահատ,
Առ ոտքս նոյն իսկ բադնին յորում եմքս ըսպասեալ՝
Տեսցես զիս, ո՛ Պայազատ, գրաւաթափ զանձն արարեալ,
Պատառեալ զայս սիրտ տրխուր առ որ կամին բրռնանալ՝
Զայս սիրտ առ որ ոչ տակաւին տիրել հընար է ինձ լեալ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ըզհլութենէն իմմէ, տիկին, խընդրեմ՝ լիցիս հաւաստի.
Ի վայրիս յայսմիկ է քո իշխանութիւն անթերի,
Եւ փառնակէս՝ թէ կամի՝ գնասցէ այլուր բրռնանալ։
Բայց քո չև ևս զամենայն ըզխարուանս քո է ուսեալ։

ՄՈՆԻՄԷ

Զի՞նչ. և ո՞ր այլ նոր աղէտ տառապեսցէ զՄոնիմէ,
Ո՛վ իշխանդ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ըզքեզ սիրել թէ եղեռն մեծ իմն է,
Մ՛չ այսօր է միայնակ պատժապարտ ոմն փառնակէս,
Քանզի բիւրիցս քան ըզնա յանցանական իսկ եմ ես.

ՄՈՆԻՄԷ

Դո՛ւ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Համարեա՛ զայդ աղէտ դառնադունիցն 'ի կարդին,
Եւ թէ պէտք են՝ 'ի վկայութիւն կոչեա՛ ըզզօրս երկնային
Ընդդէմ արեանըն թշնամեաց՝ 'ի խոշտանկանս քո ծընեալ,
Հայր և որդիք ետ զետէ 'ի հալածանս քո վառեալ.
Այլ 'ի տաղտուկ մեծ ոգւոյդ թէպէտ հասու լինիցիս
Զայսքր սիրոյ մեղապարտ՝ որ խրոովէ զքեզ զարդիս,
Սակայն խարուանքդ այդ համայն հաւասարել ոչ կարեն
Զարեացն զորրս կրրեցի 'ի ծածկել զայս սէր 'ի քէն։
Բայց սակայն մի՛ թուիցի քեզ եթէ զօրէն փառնակեայ՝
Ծառայեցից քեզ այսօր՝ առ տալ զանձն իմ ընդ նորա։
Կամիս աղատ կալ 'ի կամդ, զայդ խոստացայ քեզ արդէն,
Ո՛չ 'ի նմանէ ունիցիս կախումն և ոչ իսկ յինէն։
Սակայն յորժամ գոհունակ արարիցՁքեզ լրապէս՝
Ցորո՞ւմ վայրի օթեւան քեզ հաստատել ընտրեսցես.
Մօտակալո՞ւտ ուրեք լիցի, տիկին, դեհիցս թէ հեռի,
Եւ ընկերել քեզ ցայն վայր եղիցի՞ ինձ ներելի։
Ընդ մի հայեա՞ց դատեսցես զանմեղութիւն և զյանցուած.
Եւ ընդ խուսելդ յոսոխէս՝ փախչի՞ս և յիմն յերեսաց։
Առ 'ի բաւանք փոխարինի կատարելոյ զհաճոյս քո՝
Պարտ լիցի՞ ինձ տալ վրճիռ անձին զլանալ քոյդ տեսոյ։

ՄՈՆԻՄԷ

Ո՛հ, զի՞նչ ինձ ուսուցանես։

ՔՍԻՓԱՐԷՍ

Եւ զի՞նչ, Մոնի՛մդ գեղանի։
Թէ ժամանակըն կարէ տալ իրաւունս օրինի,
Պա՞րտ է ասել աստանօր թէ կանուխ քան զամենայն
Ես տեսի զքեզ և 'ի մտի եդի լինել քոյդ ինքեան,
Մինչ դեռաբոյս գեղ քոյին՝ չև ևս ծանօթ հօրն իմ դեռ,
Ցակաւին մօր քո միայն եթէ առ աչօք երեւէր։
Ո՛հ, ըստիպեալ 'ի պարտուց՝ 'ի տրրոհիլն իմ 'ի քէն,
Եթէ բոլոր սէր իմ չիշխեաց վերերեւել իսկ անդէն։

Ո՞չ ևս ածես դու 'ի յուշ, թարց պատմելոյ զայլն ամեն,(1)
Եթէ իբրև բողոքէի ընդդէմ պարտուցս այս դըժխեմ
Ո՞չ ևս յիշես, անդ 'ի թողուլն իմ ըզչըքնաղ քո հայեաց,
Դառնակսկիծ ո՞ր շափառուկ զվերջին ողջոյնն իմ խռովեաց։
Ես միայնակ ածեմ 'ի միտ. խոստովանեաց դէթ, տիկի՛ն,
Թէ յուշ ածեմ քեզ երազ մի ջընջեալ յոգւոյ իսկ քոյին։
Ի հեռաւորս մինչ 'ի քէն՝ և 'ի դարձէս լուսազուրկ՝
Պարարէի տակաւին ըզնոյն իսկ սէր ողորմուկ,
Քո եղեալ գոհ և հաւան 'ի հարսանիս հօրըն իմ՝
Ամենայն աղէտք որդւոյն ոչինչ զոգիդ ճըմլէին։

ՄՈՆԻՄԷ

Եղո՛ւկ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Երբէք իցէ՞ քո արդահատեալ ընդ վիշտս իմ։

ՄՈՆԻՄԷ

Մի՛՝ Պայազատդ.... մի՛ զեղծաներ ընդ վիճակ յոր գըտանիմ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Զեղծե՛լ ընդ այն, ո՛վ երկինք. մինչ 'ի թիկունս քեզ թաղեմ,
Թանց իշխելոյ ըղձալ ինչ՝ թանց խնդրելոյ ինչ 'ի քէն,
Զի՞նչ ասացիր վերջապէս, մինչ խոստանամ ես ինքնին
Թողուլ ըզքեզ 'ի կացութեան յոր մի՛ տեսցես զիս բնաւին։

ՄՈՆԻՄԷ

Սակայն խոստումնըդ քո այդ 'ի վեր քան զկար քո է ինչ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Զի՛նչ. զհակառակն կարծես՝ զերդմունս դրեալ առ ոչինչ.
Համարիցի՞ս զի չարաչար զիշխանութիւնն իմ վարեալ՝
Յաղատութիւն անձին քո կամ լիցի ինձ բըռնանալ։
Այլ գայ ահա ոմն ասա. խընդրեմ ըզմիտսըդ պարզեա՛.
Բառ մի միայն.

ՄՈՆԻՄԷ

Պաշտպանեա՛ զիս 'ի մեչութեանցն փառնակեայ։

---

(1) Թարց պատմելոյ զայլն ամեն աւելորդ և անտեղի թուի 'ի տեղւոջդ, և որպէս ասեն մեկնիչք հեղինակին, առ 'ի յարմարելոյ զտողն և զվերջայանգն է եղեալ։

Իսկ առ՝ի զքեզ տեսանել, տէ՛ր, 'ի հաճել զիս դիւրաւ՝
Ոչ ինչ պիտոյ լիցի քեզ զօրութիւն իմն անիրաւ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛հ տիկի՛ն։

ՄՈՆԻՄԷ

Ահաւասիկ, տէր, զեղբայր քո տեսանես։

ՏԵՍԻԼ Գ.

ՄՈՆԻՄԷ, ՓԱՌՆԱԿԷՍ, ՔՍԻՓԱՐԷՍ

ՓԱՌՆԱԿԷՍ

Մինչեւ ցերբ, ո՛ տիրուհիդ, հօրբն իմոյ մընասցես.
Յամեն վայրկեան ականատես.ք մահուն իւր դան աստանօր
Դատապարտել զերկուանըս քո և զյապաղմունսդ օրէ յօր։
Փութա՛ հապա խոյս յերեսաց տալ վայրենի գաւառիդ
Որ ոչ պարզէ աչաց քոց բայց դերութիւն տըխրաւիթ.
Ժողովուրդ իմն հեգահամբոյր 'ի գուճքս քեզ ակն ունի
Ընդ երկնիւ.ք իմն երանաւէտ և քեզ յաւէտ արժանի։
Յոգնուստ Պոնտոս ճանաչէ ըզքեզ իւրում թագուհին,
Եւ զնըշան իւր պետական կըրես 'ի քեզ տակաւին.
Եւ ապարօշդ այդ արքունի անդ 'ի ճակատ քո եղաւ
Իբր Պոնտոսեան տէրութեան վաւերական իմն գըրաւ։
Լեալ տիրապետ իմ աշխարհիդ այդ զոր հայրն իմ՝ ինձ եթող,
Ի՞նձ պատկանի, ո դըշխոյդ, կալ խոստմանցն իւր կատարող։
Արդ՝ անկ իսկ է, լո՛ւր դու ինձ, ոչ մնացեալ աստ ընդ երկար,
Թէ զհարսանիս մեր հապճեպել և թէ զչու մեր փութաբար.
Օգուտ.ք անձանց մեր երկոցունց և կամ.ք իմ՝ զայս պահանջեն.
Նաւ.ք իմ պատրաստ.ք յընդունել զքեզ՝ աւասիկ մեզ ըսպասեն.
Ի յոտից անտի բագնին մըտանել անդր կարասցես՝
Իբրեւ ծովուցդ թագուհի որ.ք պարտին տանել ըզքեզ։

ՄՈՆԻՄԷ

Այդ.քան շընորհ.ք, ո՛ իշխանդ, ինձ շըփոթից տեղի տան.

Այլ զի անձուկ է ամանակդ ։ Ինձ պէտք է տալ պատասխան,
Մա՞րթ ինձ իցէ՝ մերժեալ զպարտակ և զպատճառանս կեղծաւոր,
Ի վեր հանել քեզ զբզդացմունս իմ բզդաղանիս աստանօր։

ՓԱՌՆԱԿԷՍ

Ցամենայնի ես կարող։

ՄՈՆԻՄԷ

Կարծեմ ծանօթ եմ ես քեզ։
Հայրենիք իմ է Եփեսոս · սակայն սերեմ Էապէս
Ի Հաւուց, տէր, կամ յարքայից՝ կամ դիւցազանց զորս վաղ ինն
Զիրք բարուցն իւրեանց՝ 'ի Յոյնս՝ վեր քան զարքայս դասեցին։
Միհրդատ տես զիս · Եփեսոս և Յոնիա ևս յայնժամ
Ցաւելեալք էին 'ի մարդս երջանիկն իւր պետութեան ·
Դատեաց արժան նա յբղել ինձ զայս գրաւ սիրոյն իւր 'ի վկայ։
Սա եղեւ ազգատոհմին իմոյ օրէնք գերակայ ·
Հրապատակել պարտ էր առ այս։ Ես աղախինս թագադրեալ
Ցուզի եղէ վասն հարսանեաց առ որ էի վիճակեալ։
Թագաւորն որ մինայր ինձ 'ի ծոց իւրոց աշխարհաց
Հարկադրեցաւ շրջել այլուր ըզխորհուրդս իւր և ըզգնաց,
Եւ պատերազմն մինչ ըզբօսնոյր զարիութիւնքն նորա՝
Առաքեաց զիս 'ի տեղիս այս 'ի մերերկաց հեռակայ։
Եկի և աստ եմ տակաւին։ Սակայն, ո՛ տէր պայազատ,
Հայրն իմ դքնոյ ծանու հատոյց զվտանգալից շուքդ զայդ ·
Քանզի Հռոմք յաղթականք՝ իբր առաջին ինն յաշտեայ՝
ԶՓիլոպիմէն իսկ կալան, նոյն ինքն ըզհայրն Մոնիմեայ ·
Խողխողեցաւ նա յայդ անուն աղիողորմ հայրութեան ·
Եւ զայսմանէ էր, իշխա՛նդ, զի քեզ խօսել էր իմ կամ։
Իրաւացի թէպէտեւ սրրամիտութեամբ վառիցիմ,
Այլ Հրոովմայ ընդդէմ բանակ յարուցանել չը մարթիմ.
Զարշարանացրն իւրոց ես՝ վրկայ իմին նանիր՝
Ոչ են իմ զօրք՝ ոչ արքունի ինչ դաւազան վրէժխնդիր ·
Հուսկ ուրեմն չիք իմ բայց սիրտ մի։ Եւ զոր առնել հընարիմ՝

Այն է՝ հաստատ մընալ յուխտին զոր ուխտեցի առ հայրն իմ,
Ոչ յարիւն իւր թաթաւել ըզձեռըս իմ բընաւին՝
Եղար 'ի քեզ լինելով, քեզ՝ Հռոմոցդ դաշնադրին։

ՓԱՌՆԱԿԷՍ

Է՞ր իցեն բանքդ ըզՀռովմայ և ըզնորուն ըզդաշանց.
Առ իմէ՞ տորբանականդ խօսք՝ և խորհուրդդ երկուանաց։
Ո՞ ծանոյց քեզ եթէ կամիմ գոլ դաշնակից ընդ նոսա։

ՄՈՆԻՄԷ

Դու ինքըն, տէր, դու ինքն իսկ կարե՞ս յուրաստ կալ ըզսա.
Ի՞բր նուիրել էր քեզ մարթ ըզմուտ և զթագ աշխարհի
Որ յամենուստ 'ի բանակաց նոցուն պատեալ պաշարի՝
Եթէ դաշինք դաղտնածածուկք որ զքեզ յարեն ընդ Հռոմն՝
Ոչ հաւաստի քեզ առնէին զպետութիւն իւր և զպողոտս։

ՓԱՌՆԱԿԷՍ

Ըզնրկատմանց իմոց ծանօթ ըզքեզ առնել էր ինձ մարթ,
Եւ են իմ փաստք իրաւացիք զորս առնէի առ քեզ յայտ՝
Թէ իսկ և իսկ մերկացեալ նանրապատիր ըզկեղծիս՝
Վերհանէիր դու առ իս զբղդացմունս քո ըզդաղանիս.
Այլ հուսկ ուրեմն սկսանիմ, յետ այդ քանոյ դարձուածոյ,
Ամփոփել, ո՛ տիրուհի, զբազմադիմի բաղայս քո.
Եւ տեսանեմ՝ կարծեմ՝ ըզշահ զոր պարտակել դու խընդրես.
Եւ այլ ոք է քան թէ հայր քո որ տայ խօսել քեզ այսպէս։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛ր և իցէ շահ անձին որ տայ խօսել թագուհւոյն,
Պատասխանիդ, ո՛ իշխան, պա՞ռտ է լինել յողդողդուն.
Եւ Հռոմոցըն ընդդէմ ատելութիւն որ 'ի քեզ՝
Պալ տի՞ւր՝ առ գալ յերեւան՝ վարանել պահ մի այսպէս։
Եւ զիա՞րդ. թշուառութեանցն հօրըն մերոյ անդ 'ի լուր՝
Լորտք 'ի զվրէժ լուր լուծանել և փոյթք 'ի ընուլ զտեղի իւր,
Ի մոռացօնս արկցուք զպատիւ մեր և զարիւնքն նորա.
Այո՛ մեռաւ, այլ գիտիցե՞մք եթէ թաղեալ իցէ նա։
Ո՛ գիտէ թէ 'ի ժամուս՝ յոր շուրթափեաքն քո ոգի

Ըղքաղցրալիրն հարանեաց երկնէ զխորհուրդ հեշտալի,
Արքայդ այդ, զոր Արևելք՝ զեղեալ յիւրոց քաջութեանց՝
Իրաւապէս կարէ կոչել զվերջինն իւրոց թագաւանց,
Ի սեպհական երկրին իւրում 'ի ծոց՝ թափուր 'ի չիրմաց՝
Կամ անկեալ անփառունակ ընդ շեղջակոյտս գբուեհեաց՝
Ո՛չ ամբաստան լիցի զերկնից որ 'ի ձաղանս զինքն թողու,
Եւ զորդւոցն իւր անարժանից որք չիշխեն կալ վրիժառու։
Ո՛հ, մի՛ ծրմրեալ մընասցուք աստ 'ի խորշ իմն Բոսփորի·
Թէ՝ նդ տիեզերս տակաւին գոյ արքայ ոմն աղիկամի,
Պարթեւ կամ Սկիւթ կամ Սարմատ՝ ազատութեան հետայոյզ,
Աւասիկ մեր համահարգք· և խաղասցուք այնց 'ի կոյս։
Ապրեսցուք կամ կորիցուք՝ իբր որդիս հօր մեր արժանս,
Եւ խորհեսցուք մակաւելի, թողեալ զսիրոյն հրապուրանս,
Ջերծ 'ի լքծոյ առնել զաշխարհ մեր և բզմեզ իսկ ինքնին՝
Քան բբռնանալ 'ի հոգիս որք անձնատուր ոչ լինին։

ՓԱՌՆԱԿԷՍ

Գիտակ է նա խորհրդոյդ· Սբխալէի՞, ո՛ դբչխոյդ։
Ահաւադիկ այդ շահ անձին՝ բբռնաբարիչն քոյ հոգւոյդ·
Աւադիկ հայր քո և Հոռոմք զոյց կբշտամբանս առնես յիս։

ՔՍԻՓԱՐԷՍ

Գիտեմ՝ և ոչ զբզդացմունս սրրտին իւրոյ բզդաղտնիս·
Այլ թարց յոչինչ բաղձալոյ, տէ՛ր, հեշտաբար հաճէի՝
Թէ խելամուտ խորհբրդոցն իւր՝ հանդէտ քո՝ զանձն դբնէի։

ՓԱՌՆԱԿԷՍ

Լաւ էր քեզ առնել այդպէս· այլ ես առնեմ զոր պարտիմ.
Օրինակ քո ոչ երբէք լցէ օրէնք ինչ վասն իմ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Իսկ ես 'ի վայրս յայսոսիկ ոչ ճանաչեմ և ոչ զոք
Ոյր ոչ լցէ պարտ անշուշտ վարել իմն օրինակօք։

ՓԱՌՆԱԿԷՍ

Կարէիր դու բարբառել 'ի Կոլքոս այդ օրինակ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Զոր 'ի Կոլքոս բշնոյն և այսր իսկ գործելոյ եմ ատակ։

ՓԱՌՆԱԿԷՍ

Կարեւ սակայն պատահել կորբստեան քո աստանօր։

ՏԵՍԻԼ Դ.

ՄՈՆԻՄԷ, ՓԱՌՆԱԿԷՍ, ՔՍԻՓԱՐԷՍ, ՓԻԴԻՄԷ

ՓԻԴԻՄԷ

Արքայորդի՛ք, 'ի նաւաց մակածածկի ծոցն բոլոր։
Եւ ինքն իսկ՝ 'ի դերեւ հանեալ զմահուն սուտ համբաւ՝
Միհրդատ դայ հասանէ 'ի ծովածոցն ըշտապաւ։

ՄՈՆԻՄԷ

Միհրդա՛տ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Նա ինքն հայրն իմ։

ՓԱՌՆԱԿԷՍ

Ա՛յ, զի՞նչ է զոր լքսեմ արդ։

ՓԻԴԻՄԷ

Արագասոյր.ք քանի.ք ինչ նաւ.ք նախ հասին մեզ պատմել զայդ։
Նա ինքն իսկ է։ և Արբատ ըստ պարտուց իւր այժմ գքնայ
Ի յափանց աստի 'ի բաց՝ 'ի հանդիպումքն նորա։

ՔՍԻՓԱՐԷՍ (՝՝՝ Մ՝՝Ն՝Ն՝)

Եւ զի՞նչ արդեօք գործեցա.ք։

ՄՈՆԻՄԷ (՝՝՝ Ք՝Ն՝Ի՝՝Ն՝)

Ողջամբ մնասցես, իշխա՛ն։ Զի՛նչ լուր։

ՏԵՍԻԼ Ե.

ՓԱՌՆԱԿԷՍ, ՔՍԻՓԱՐԷՍ

ՓԱՌՆԱԿԷՍ (Ռ՝Կ՝՝Ն՝)

Վերադառնա՛յ Միհրդատ։ Ճակատագիրդ ո՛վ տքխուր։
Ի վտանգի են աւուրք իմ և սէր իմ միանգամայն։

Հռովմայեցիք ոյց կամ դէտակն հասցեն կարի անագան։
(Ա՝ Ք՝ Ի՝ Ի՝ Ը՝)

Զի՞նչ առնել մինայ մեզ արդ · լըսեմ զթառանչս քոյ ոգւոյն ·
Եւ ծանեայ զմիտս ողջունին զոր արդ իսկ ետ քեզ դըշխոյն ,
Իշխա՛նդ · սակայն այս բնաւք խընդրեն այլ ժամանակ , իսկ այսօր
Կան առաջի մեզ 'ի կըշռել հոգըք յաւէտ կարեւոր ։
Անդրադառնայ Միհրդատ՝ յոյժ անամոք այժմ թերեւս ·
Ցորչափ 'ի վիշտս է համակեալ՝ է ահաւոր նոյնչափ և ս ։
Վըտանգն յաւէտ է տագնապիչ՝ յաւէտ քան զոր դուդ կարծես ·
Պատժապարտ եմք արդարեւ , որպէս յայտ իսկ է և քեզ ·
Սիրելութիւն դուն ուրէք չիջուցանէ զցասոյթ իւր ,
Եւ որդւոյն իւր յաւէտ քան զինքն չիք անաչառ դատաւոր ·
Եւ տեսեալ իսկ մեր ըզնա 'ի յերկուանս իւր անխընայ՝
Զոհել զկըրկին իւր զորդիս իրաւամբ իմն դուզնաքեայ ·
Երկիցուք զանձանց մերոց նա և ս զանձնէ դըշխոյին ,
Կարեկցութիւն իմ 'ի նէ մեծ է ցորչափ սէր արքային ,
Տարփաւոր եռանդալից , այլ նախանձոտ անողոք ,
Հըզօրագոյն է քէն նորա քան ըզսիրոյն իւր բորբոք ։
Հապա և մի՛ իցէ քեզ վըստահել 'ի սէր նորուն ,
Ոչ նուազ ինչ հըզօր լիցի յայդմ մոլութիւն նախանձոտն ,
Խորհեա՛ բարեօք , է քո դրաւեալ արդէն ըզսիրտ ըսպային ,
Եւ ինձ հասցէն օգնութիւնք զոր այժմ յայտնել ոչ կամիմ ։
Հաճի՞ս լըսել ինձ · փութասցուք զներումն իւր մեզ վաւերել ,
Եւ ճեպեսցուք դու և ես ըզբերդարէս զայս դրաւել ·
Եւ արասցուք զի սահմանել չը կարասցէ նա որդւոյն
Բայց թէ պայմանքս դաշանց ընդունելիս 'ի նոցունց ։ (1)

ՔՍԻՓԱՐԷՍ

Ըզյանցուածս իմ քաջ գիտեմ · և ճանաչեմ զհայրն իմ ես ,

(1) Այն է՝ մոլութիւն նախանձոյն իւրոյ ոչ թեթեւագոյն ինչ լինի սակս հայրական սիրոյն · ապա ապստամբեցուցեալ քո զբանակն և իմ օգնեալ զօրութեամբ (օտարին՝ այն է Հռովմոց որոց դէտակն կամ) արկցուք զնա 'ի նեղ , այնպէս զի պարտաւորեսցի դնել ընդ մեզ դաշինս հաճոյականս ։

Եւ բաց յիմոցն և յաւելուն յիս յանցուածք մօրն իմ և ես,
Սակայն թէպէտ և սէր իմն չբլացուսցէ բղմիտս իմ։
Յերեւել հօրն իմ ոչ գիտեմ բայց հրպատակ կալ նմին։

ՓԱՌՆԱԿԷՍ

Հաւատարիմ մնասցուք գոնեա ուրեմն մեք իրերաց,
Դու տեղեակ ես իմայնոց և ես հրմուտ քոց գաղտնեաց,
Ի վտանգաւոր դարձուածս բանից միշտ հնարագէտ է արքայ,
Եւ զէնս անձին հայթայթեսցէ 'ի խօսից մեր դուշնաքեայ։
Գիտես նորուն ըզսովորս։ և թէ ընդ ո՛ր դորովանք՝
Քինութիւն իւր գիտէ ծածկել զնենգապատիրն իւր եղանգ։
Օ՛նուրեմն, 'ստ որում պէտք են, գընամ ըզհետ քոց շաւղաց։
Այլ մի՛ լիցուք 'ի հպատակելն մեր մատընտուք իրերաց։

ԱՐԱՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՄՈՆԻՄԷ, ՓԻԴԻՄԷ

ՓԻԴԻՄԷ

Ա՛ռ իմէ՞ լցես դու ասա՝ մինչ Միհրդատ ժամանէ,
Եւ ամեն ոք ընդ առաջ իւր 'ի ծովեզր անդրը դիմէ։
Զի՞նչ գործեսդ, տիրուհիդ իմ. և ո՛ր յիշումն՝ յեղակարծ,
Արդելու զքեզ և այսրէն տայ քեզ առնել վերադարձ։
Ո՞չ նախատինս առնես այսպէս յարքայն որ զքեզըն պաշտէ,
Որ ամուսին գոդ լեալ քո ....

ՄՈՆԻՄԷ

Ոչ տակաւին այր իմ է,
Ո՛վ Փիդիմէ. և թուի ինձ եթէ պարտ իմ է մընալ
Նմա աստանօր մանաւանդ քան յընդունել զնա գընալ։

ՓԻԴԻՄԷ

Պակայն չէ նա հասարակ ոք սիրող, ո՛ տիրուհիդ.
Ի հօրէդ քո խոստացեալ գոլով մեծի արքայիդ,
Հայեա՛ց, կըրես ըզսիրոյն իւր զհանդիսականն դըրաւ
Զոր կարէ՝ երբ կամիցի՝ գործել վաւեր առ բագնաւ։
Լուր ինձ ապա, երեւեսցիս և ընդ առաջ իւր ելցես։

ՄՈՆԻՄԷ

Նայեա՛ց յորում կացութեան զերեւիլն իմ պահանջես.
Ցես զերեսս արտասուաթոր, և մանաւանդ ասա՛ ինձ,
Զի թարց ըզնա խընդրելոյ՝ զանձն 'ի նմանէ թագուցից։

ՓԻԴԻՄԷ

Եւ զի՞նչ ասեսդ. ո՛վ աստուածք։

ՄՈՆԻՄԷ

Ա՛Հ մահառիթ վերադարձ։

Զբաղականքդ, զիա՞րդ երեւեցայց իւր աչաց՝
Ցեղեր նորուն 'ի ճակատուս, սակայն 'ի խոր սրտին իմ,
Փիդիմէ՛ . . . . իմանաս զբանս իմ և աչս զի շիկնիմ։

ՓԻԴԻՄԷ

Այսպէս ուրեմն անկանիս անդրէն 'ի նոյն շրջիցդ յոյզս
Որք արտասուս յորդառատ ետուն քամել քեզ 'ի ցոյնս.
Եւ Քսիփարէս դայ եղուչս արկանել քեզ միշտ և յար։

ՄՈՆԻՄԷ

Մեծ են ազէտք իմ մեծ յոյժ քան զոր կարծել է քեզ հնար։
Քսիփարէս յանյժամ ոչ այլ ինչ երեւէր իմ ուշին
Բայց եթէ ոմն լի շնորհօք՝ փայլեալ 'ի փառս բնաւին.
Եւ ես իսկ ոչ գիտէի եթէ յաղագս իմ Քսիփար
Քան զամենայն մահկանացուս դըրտանիցի սիրավառ։

ՓԻԴԻՄԷ

Սիրէ՞ նա զքեզ, տիրուհի՛։ Եւ այդ դուցաղնդ ցանկալի....

ՄՈՆԻՄԷ

Վատաբաղտիկ է նոյնչափ՝ որչափ եմ ես եղկելի,
Պաշտէ նա զիս, Փիդիմէ՝ և մի և նոյն ցաւք տըխուր
Որք աստանօր զիս խանդէին՝ տառապէին զնա այլուր։

ՓԻԴԻՄԷ

Գիտէ՞ արդեօք թէ քանի յարդանս առնէս դու նըմա,
Գիտէ՞ զի դու ես սիրես զինքն։

ՄՈՆԻՄԷ

Փիդիմ, զայդ ոչ գիտէ նա։
Հասին 'ի թէկըն ինձ դիք, և սիրտ իմ կացեալ զգաստ՝
Զասաց ինչ, կամ կիսով չափ ե՛ անորիշ ինն եկն 'ի յայտ։
Ո՛Հ, գիտացեալ թէ էր քո քանի՛ այս սիրտ տըխրագդեաց՝
Առ 'ի պահել լըռութիւն անձամբ անձին բուռն եկաց.
Քանի՛ քանի մերթ յարձակմունս տարի 'ի յիս և պայքար։
Այլ, Փիդիմէ, ոչ ես տեսից ըզնա՝ թէ է ինձ հընար.

Քանզի թէպէտ և ճրգունս անբաւս յանձն իմ գործեցից,
Տեսեալ ըզվիշտս նորա լռել ոչ մարթի լիցի ինձ։
Եկեալ խլեսցէ նա յանկամն իմ զդաւանութիւնդ զայդ յինէն.
Սակայն չէ փոյթ, թէ սիրեն զիս՝ վայելք իւր կարճ տեւեսցեն։
Այնչափ գընոց տացից նըմա զնսիհդ զոր ոչ գիտէ ցարդ,
Այնպէս զի լաւ ևս թուեսցի թէ գիտացեալ չէր դեռ զայդ։

ՓԻԴԻՄԷ

Գան ահա այսր։ Զի՞ գործեսդ, ո՛ տիրուհիդ։

ՄՈՆԻՄԷ

Ոչ մարթեմ.
Ոչ երբէք երեւեցայց 'ի խռովութեանս յորում եմ։

ՏԵՍԻԼ Բ

ՄԻՀՐԴԱՏ, ՓԱՌՆԱԿԷՍ, ՔՍԻՓԱՐԷՍ, ԱՐԲԱՏԷՍ, ԹԻԿՆԱՊԱՀՔ

ՄԻՀՐԴԱՏ

Իշխա՛նք, թէպէտ և պատճառանս յառաջ ածել կարասջիք,
Այլ դարձեալ գալ դեգերել աստանօր ոչ պարտէիք,
Եւ ոչ թողեալ լքանել՝ 'ի կարեւորս այս վայրկեան՝
Դու՝ ըզՊոնտոս, դո՛ւ զկոլքոս որք 'ի խնամն ձեր յանձնեցան։
Սակայն է ձեր դատաւոր հայր մի որ զձեզըն սիրէ։
Հաւատացիք համբաւուն զոր ես հանի յինքենէ.
Ընդ չքքմեղս դընեմ ըզձեզ՝ ըստ որում դուքդ կամիք,
Եւ փառք երկնից որ անդրէն զմեզ ժողովէ աստ այժմիկ։
Թէպէտ խցեմ ես յաղթեալ և հաղիւ զերծ 'ի մրրկաց,
Սակայն երկնեմ յիս խորհուրդ արժան իմոց քաջութեանց։
Տեղեկասջիք 'ի մօտոյ դուք լիովին զայնմանէ,
Երթարո՛ւք այժմ և թողէ՛ք զիս առնուլ անդորր մի ըոպէ,

ՏԵՍԻԼ Գ

ՄԻՀՐԴԱՏ, ԱՐԲԱՏԷՍ

ՄԻՀՐԴԱՏ

Հուսկ ապա՝ յետ միոյ ամի տեսանես զիս, ո՛վ Արբատ,
Սակայն ոչ եւս՝ որպէս երբեմն՝ զերջանիկն այն Միհրդատ՝
Որ յարեւեթ մետակըշռեալ զճակատագիրն Հրոմայեցոյ
Ըզտիւզերս 'ի դեղեւման ունէր ընդ իս և ընդ նա.
Յաղթեցայ։ Պոմպէ օգուտ՝ 'ի գիշերոյն անդ քաղեաց,
Գիշեր որ ոչ իսկ թողոյր գոգցես տեղի քաջութեանց.
Զօրականք իմ կիսամերկք՝ զահի հարեալք 'ի մառին,
Ամենուստեք ոչ բարուսք կալեալ դուպարք բանակին,
Անկարգութիւն յամեն կոյս կրկնեալ զաղմուկ շրփոթին,
Մեր իսկ ընդդէմ իրերաց շրջեալ ըզզէնս մեր ինքնին,
Գանգիւնք ժեռից սոսկալի եւս անդրակրկնեալ զկառաչիւն,
Ի մի բան՝ համայն սարսափք խաւարային, ճակատուն. (1)
Զի՞նչ էր առնել քաջութեան 'ի յաղմուկդ այդ դժոխադէմ.
Կէսք զօրաց մերոց անկան փախուստն ղերծոյց զայլս ամէն.
Եւ յընդհանուրդ այդ արհաւիրք եւս իսկ ըզկենանս իմ պարտիմ
Առ հրաչակ և եթ մահու իմ զոր թողի ըզհետ իմ։
Անցի ընդ մէջ փասիոյ՝ ժամանակ մի անծանօթ,
Ի՝ անտի յառաջ խաղացեալ մինչ Կաւկասին 'ի ստորոտ,
Փութանակի նաւօք իմովք՝ կաղմք յեւքսինեանն ծովածոյ՝
Հասեալ գրտի ըզմնացորդ դընդայն իմոց ցբրուելոց։
Ահաւասիկ յո՛ր աղետից վանեալ՝ հասեալ 'ի Բոսփոր,
Գտանեմ աղէտս որք տակաւին մընային ինձ ստանօր։
Նովին սիրով տեսանես զիս բորբոքեալ հանապազ.
Այս սիրտ արեամբ պարարեալ՝ և չքողեալ 'ի պատերազմ,

---

(1) Ասին հռետորական պերճախօսութեամբ առանց դիմաւոր բայի քաղցրագոյն եւս տայ նկարագրել ստանօր Միհրդատայ զձախողումն իւր վեցեքին տողիւքդ։

Հակառակ ամաց բեռին և խոշտանկիչ բաղդին իմ,
Զբգէ զհետ իւր ամենուրեք զսէր իւ կապի առ Մոնիմ.
Եւ չեն իւրում հակառակորդք որք եղիցին ատելի
Թոյժ քան զանձիր որդիս երկուս զորս աստանօր այժմ դքտի։

ԱՐԲԱՏԷՍ

Երկու ասես որդիս, տէր։

ՄԻՀՐԴԱՏ

Լո՛ւր · 'ի զայրոյթն իմ իսկ և ս
Կամիմ քաջ իսկ որոշել յեղբօրէն իւր զԲսիփարէս ·
Գիտեմ զի նա յարաժամ հրամանացն իմ հրլու՝
Հասարակացն մեր թքնամեաց է՝ իբրեւ զիս՝ անարգու ·
Եւ տեսի զնա քաջութեամբ իւր՝ առ հաճել ինձ պարապեալ՝
Արդարացիս առնել վասն իւր ըզգորովանս իմ ծածկեալ։ (1)
Գիտեմ նաեւ՝ գիտեմ իբր յուսաբեկ լեալ յինքեան՝
Ըղպարտիս իւր նախամեծար դասեալ քան զշահս ամենայն,
Սուրհաց հանել նա 'ի սուտ ըզմայրն իւր նենգաւոր
Ի'ի յանցուածոց նէրա գիտաց ձրգել անձին փառս նոր ·
Ոչ կարեմ ես տակաւին՝ ոչ խորհել իսկ իշխեցիս
Թէ որդիս այս հաւատարիմ խընդրեալ է վիշտս տալ ինձ։
Սակայն սոքա երկոքին իսկ աստանօր զի՞նչ խընդրէին ·
Ժըմերտեցա՞ն մին կամ միւսն ակն դընել դըշխոյին ·
Թո՞ 'ի նոցունց 'ի գաղտնիս նէ համակամ թուի կալ,
Եւ ինձ որո՞վ հայեցմամբ պարտէ առ նէ մերձենալ։
Խօսեա՛ց · թէպէտ և տենչ իմն զիս առընթեր ձրգէ իւր,
Այլ պարտիս տալ ինձ ըզսրտից նոցուն համար անստերիւր ·
Զինչ անցք իցեն պատահեալք · զի՞ տեսերդ · զի՞նչ ինչ գիտես ·
Թորմէ՞հետէ՝ և ի՞բրեւ՝ և առ իմէ՞ աստ իցես։

ԱՐԲԱՏԷՍ

Աւուրք են ութ յորմէհետէ, տէ՛ր, անբմբերն փառնակէս

---

(1) Առ 'ի յայտնել զնշանաւոր խորագիտութիւնն Միհրդատոյ՝ տայ նմա ծածկել հեղինակդ մինչև իսկ զհայրականն գորով յորդ-ւոյն իւրոյ սիրելւոյ՝ առ 'ի չտալ նմա տեղի պահանջանաց։

Ի քստորոտ ամրոցիս եկն մերձեցաւ նախապէս ·
Եւ ըզմահուն քո ըզհամբաւ նա տարփողեալ հաստատէր ,
Եւ 'ի պատուարս այսուիկ վաղվաղակի՝ մուտ խընդրէր ·
Ի ժմերտականդ այդ աղմուկ ես ոչ կասեալ կացի աստ ,
Եւ յոչինչ սականջէի՝ թէ եղբայրն իւր պայազատ
Հասեալ այսր՝ ըզխարուանայրն քոյոց ոչ վրկայէր
Արտասուօք իւրովք յաւէտ քան թէ խօսիւքն իւր , ո՛ տէր ։

ՄԻՀՐԴԱՏ

Վերջապէս զի՞նչ գործեցին ։

ԱՐԲԱՏԷՍ

Այն ինչ եհաս փառնակէս ,
Վաղեաց խօսել առ թագուհին զտրուփանուցն իւր փութապէս ·
Եւ վաւերել խոստանայր նմա հարսանեօք իմն մօտալուտ՝
Զապարօշն զոր 'ի ձեռաց քոց ընկալեալ էր դըշխոյդ ։

ՄԻՀՐԴԱՏ

Ա՜յ նենգաւոր · առանց ինչ ժամ տալոյ առ նէ 'ի ձունել
Արտասուս զոր սէրքն իւր իսկ 'ի յաճիւնն իմ պարտէր ,
Այլ եղբա՞յր իւր ։

ԱՐԲԱՏԷՍ

Եղբայր իւր մինչեւ ցայսօր , տէր , փարթար
Ի խորհուրդս իւր ոչ բնաւին յայտնեաց սիրոյ ինչ նըշմար ·
Եւ կարեկից եղեալ սրտիւն իւրով առ քեզ հանապազ՝
Ոչ առ այլ ինչ թուէր ցանկալ բայց թէ 'ի վրէժ և 'ի ռազմ ։

ՄԻՀՐԴԱՏ

Սակայն դարձեալ՝ ո՞ր նըպատակ մըտաց ըզնա աստ վարէր ։

ԱՐԲԱՏԷՍ

Թէ կանուխ թէ անադան հասու լիցիս յայդ , ո՛ տէր ։

ՄԻՀՐԴԱՏ

Խօսեաց , հրաման քեզ առնեմ · կամիմ ըզբնաւն ուսանել ։

ԱՐԲԱՏԷՍ

Տէ՛ր , ցորչափ ինչ կարող եղէ մինչ ցայսօր զեկ լինել՝
Սա է միայն՝ զի պայազատդ յետ մահուդ մտրթել կարծեաց

Առ գերել ըզդեհեսս զայս 'ի թիւ իւրոց գաւառաց։
Եւ փոխանակ օրինաց զարութիւն իւր գիտացեալ՝
Գայր պաշտպանել զօրութեամբ որ ինչ յինքն էր վիճակեալ։

ՄԻՀՐԴԱՏ

Ո՜հ, թէ երկինք ինձ տացեն հրամայել իմ բաղդին,
Սա փոքրագոյնն լիցի 'ի վարձս որոց նա ակն ունիցին։
Այո՛, Արբատ՝ չունչ առնում, և բերկրանք իմ յոյժ մեծ են։
Երկընչէի, խոստովանիմ, և վասն որդւոյս զոր սիրեմ,
Եւ վասքն իմ՝ զի գուցէ մի՛ զայդ նեցուկ կորուսցից,
Ի՝ախոյեան ոմն որպէս ըզնա 'ի մարտընչել ունել ինձ։
Թո՛ղ հասուսցէ փառնակ ինձ չար, առ ցասոյթն իմ նուիրի
Հակառակորդ մի 'ի վաղուց փոյթ լինել ինձ ատելի,
Որ ընդ Հոռոմն 'ի ծածուկ ըսքանչացեալ միշտ և յար՝
Ընդդէմ նոցա յակամայս է եթ եկեալ 'ի պայքար։
Եւ Մոնիմէ թէ գոլով ամբաստանեալ վասքն իւր՝
Գիտաց ածել այլուրեք ըզսէր որ ինձ եթ պարտիւր,
Վա՛յ այնքմ պատժապարտին որ գայ յինէն զնէ հանել,
Եւ որ իշխէ նախատինս առնել ինձ ե՛ոչ ծառայել։
Նէ սիրէ՞ զինքն։

ԱՐԲԱՏԷՍ

Աչեմ զի գայ աստ թագուհին ահա, տէ՛ր։

ՄԻՀՐԴԱՏ

Ո՛վ աստուածք որք տեսանէք աստ ըզքէն իմ և ըզսէր,
Զեմեղեցէ՛ք ինձ յաղէտս իմ և հաճեցէ՛ք արգիլել
Զի մի այլ ևս գբտից աղէտս զորս նրկբրտիմ ես խընդրել։
Բաւ է այսքան, Արբատէս։ Թո՛ղ զիս միայնակ ընդ նրմին։

ՏԵՍԻԼ Դ

ՄԻՀՐԴԱՏ, ՄՈՆԻՄԷ

ՄԻՀՐԴԱՏ

Վերակոչէ զիս հուսկ ուրեմն երկինք առ քո, ո՛ տիկին,
Եւ մատուցեալ գէթ նրպաստ ըզձիցն իմոց անձկալից՝

Գեղանի յոյժ քան երբեմն ցուցանէ ըզքեզ ինձ։
Ո՛չ կարծէի ես երբէք թէ տեսանել հարկեցայց
Զանազանելն ցայս վայր աւուրն մերոց հարսանեաց,
Եւ ոչ անդրէն 'ի գտանելս ըզքեզ՝ այս դարձն իմ տքխուր
Զխարուանս իմ քեզ պարզեսցէ և ոչ եթէ զսիրոյս հուր։
Սակայն դարձեալ նոյն իսկ սէր որ տայ յարկի տեղի յիս
Ընտրել բաղում 'ի տեղեաց եթ ըզվայրդ յոր դու գըտանիս.
Եւ մեծամեծ իսկ չարիք քաղցր ինձ լինել կարասցեն՝
Թէ ոչ չար ինչ թուիցի քեզ ներկայութիւնն իմ այսրէն։
Կարծեմ շատ իսկ խօսեցայ թէ ինձ լըսել կամէիր։
Անշուշտ՝ աւուրքս այսմիկ յոգնուստ դէտակըն կայիր.
Եւ տանիս յինքեանդ, տիկին, զուխտիցն իմոց ոբբունայն
Որ ասէ քեզ թէ ՝՝՝ ե՝՝՝, ե՝ ասէ զայս յօր ամենայն։
Օ՛ն փութասցուք ճըշդըրտել զփոփոխն զայս ուխտ իրերաց.
Հըրաւիրեն զքեզ և զիս փառք իմ հեռի 'ի յաստեաց.
Ի՝ոչ վայրկեան մի թարթափեալ առխորհըրդեանդ այդ աղնիւ,
Այսօր եղեալ իմ քեզ յայր՝ պարտիմք առնել չու վաղիւ։

ՄՈՆԻՄԷ

Տէ՛ր, կարող ես յամենայնի. զի յորոց կեանս ընկալայ
Թողին քեզ իշխանութիւն ինն վերհագոյն յիմ վերայ.
Եւ 'ի կիր յորժամ արկցես զայդ իրաւունք անսահման՝
Խոնարհելով և եթ քեզ պարտիմ առնել պատասխան։

ՄԻՀՐԴԱՏ

Այսպէս ուրեմն կա՞զմ 'ի տանել 'ի քեզ զլուծ բըռնութեան,
Ոչ գընասցես բայց եթէ զեդ պաարուճակ 'ի մեհեան.
Եւ ես իսկ՝ երբ բռնաւոր սըրտին որ զիմն նաբաղէն,
Հարմնացուցեալ զքեզ ինձ՝ ևս ոչ շահեցայց ինչ 'ի քէն։
Ո՛հ տիկին, և իցէ՞ սա գոհունակ ինչ զիս առնել։
Հարկ լիցի՞ ինձ յայսմհետէ՝ չխորհեալ հաճոյ քեզ լինել,
Զի ոչ այլ ինչ խընդրեցիս բայց բըռնանալ եթ 'ի քեզ։
Թշուառութիւնք իմ, 'ի մի բան, ըստի՞ն առնեն զիս այսպէս
Ա՛հ, 'ի ձեռնարկն իմ անդրէն յաշխարհակալ նոր մըրցմունս,

Թէպէտև ոչ գտանել էր ինձ ուղիս հարթեալս յամէն կոյս՝,
Թէ և բաղդին ոխերիմարկեալ էր զիս և ս 'ի վայր,
Ընկճեալ՝ յաղթեալ՝ հալածեալ՝ անապաւէն և թափառ,
Փախըստական ծովէ 'ի ծով յաւէտ և ս հէն քան արքայ,
Ի յամենայն պերճութեանց՝ եթ զանուն պահեալ Միհրդատայ,
Գիտասջիր զի զհետ ձրգեալ իմ զայդ անուն մեծափառ՝
Ըզրոպէիցն կարէի զաչս յիս յառել յամեն վայր.
Եւ զի ոչ՝ գոն թագաւորք, արժանք անուանդ թէ ի՞ցեն,
Որք 'ի գահոյս անդ բազմեալ թերեւրս ոչ ցանկայցեն
Ընդ գերագոյնն քան զփառս իւրեանց՝ ընդ մրրկակոծն իմ
վիճակ՝
Զոր Հռոմ և ամք քառասուն դըժուարաւ իմն հանին յանդ։
Դու իսկ այլով իմն ակամբ հայէիր յիս, ո՛վ տիկին,
Եթէ Հելլենք քո նախնիք 'ի հոգւոջ քում ապրէին։
Արդ՝ ըստ որում պէտք իսկ են զի եղէց քեզ ամուսին,
Ո՞չ աղնիւ և ս լինէր արդեօք և քեզ յաւէտ արժանին՝
Յաւելուլ 'ի յայդ պարտիս ըզհաճութիւն քոց կամաց՝
Եւ ըզյարգանս քո դընել ընդդէմ բաղդիս ըզկանաց՝
Եւ առնել զիս ապահով՝ ումեկ տալով իմ վըշտաց՝
Ի յերկմիտ կասկածանաց՝ աղիտիցն իմ զուգընթաց։
Եւ ի՛բրու. չի՛ք պատասխան քո առնել ինչ ինձ՝, տիկին։
Ի չբփոթե՞լ զքեզ ծառայէ միայն բընաւ եռանդն իմ,
Ապաբանեալ կաս մընաս. թէ և խորհիս չըխօսել,
Բայց տեսանեմ, զուր ճըգնիս, զարտասուսդ մերձ 'ի հոսել։

ՄՈՆԻՄԷ

Ե՞ս՝, տէր իմ։ Առ 'ի հեղուլ չեն արտասուք յիս բնաւին։
Հնազանդիմ.—մի՞թէ յայս բառ ոչչատ իսկ միտք իմ պարզին։
Եւ ո՞չ ի՞ցէ բաւական...

ՄԻՀՐԴԱՏ

Ո՛չ ոչ, չէ դա բաւական.
Առաւել քան զոր կարծեսդ զներցիկ բանիդ իմանամ.
Նըշմարեմ զի ստոյգ ասացին. ե՛ալդարասցին նախանձն իմ

Ի նոյն իսկ խօսքից քոյոց առնի յաւէտ ևս մեկին։
Եւ տեսանեմ զի որդի մի ժանտ՝ 'ի գեղոյդ գըրաւեալ՝
Խօսեցեալ է քեզ ըզսիրոյն և քո նըմա է լուեալ։
Արկանեմ զքեզ նորուն յաղագս յահ և 'ի հոյ նորանոր։
Այլոչ'նդ երկար վայելս գըտցէն յարտասուս քո նենգաւոր,
Տիկին։ ե՛աստի և անդր կացցեն լուռ առ օրէնս իմ բընաւք,
Ապա թէ ո՛չ, տեսեալ է քո ըզնա վերջին 'ի նուագ։

(առ պահակս)

Կոչեցէ՛ք ըզՔսիփարէս։

ՄՈՆԻՄԷ

Ո՛հ, զի՞նչ կամիսդ առնել նմա։

Քսիփարէս ...

ՄԻՀՐԴԱՏ

Դաւեալ ըզհայր իւր չէ երբէք Քսիփարէայ։
Առ ուրանալ զնա առաւիր փոյթ կեղծ 'ի գեղ ցուցանես։ (1)
Եւ ըզնմանէ 'ի գորո

ՏԵՍԻԼ Ե·

ՄԻՀՐԴԱՏ, ՄՈՆԻՄԷ, ՔՈԻՓԱՐԷՍ

ՄԻՀՐԴԱՏ

Մատի՛ր որդեակ իմ, մատի՛ր· Ահա հայր քո է դաւեալ։
Ժամերտ որդի մի ձաղաձանակ ըզկործանումն իմ առնէ
Խոչընդոտն կայ նպատակիս, նախատէն զիս և սպանէ,
Սիրէ զդըշխոյն՝ վերջապէս, հաճոյ է նմա, և չորթէ
Ցինէն ըզսիրտն որոյ պարտն ինձ ծառայել և եթ է։
Այլ երանի՛ երանի՞ զի 'ի չարիս այս՝ միայն
Ըզփառնակեայ ըզձեռաց հարկիմ լինել ամբաստան,
Եւ զի մայր մի սիրադրուժ և եղբայր ոմն ժըպիրհ
Զատելին իւրեանց առ քեզ տան զօրինակն առաւիր։
Այո՛ որդեակ իմ, դու միայն՝ յոր վըստահել ի՛ցէ ինձ,
Դու միայն զոր ընտրեցի վաղուց արժան գործակից
Ի մեծամեծ 'ի խորհուրդս՝ որք 'ի սիրտն իմ պատրաստին,
Եւ ժառանգորդ գաւազանիս և մանաւանդ անուան իմ։
Ի վայրկենիս այս ոչ փառնակ ե՛ոչ վրթարեալըն իմ սէր
Ոչ զօրեն ինչ առանձինն ըզմիտըս իմ պարապել։
Կարեւոր իմն ռահորդութեան հոգք 'ի լինել արդ պատրաստ,
Նաւատորմն իմ՝ զոր պարտ է ունել սիշտ կազմ յառագաստ,
Զօրականք իմ՝ զոյց կամիմ առնուլ ըզփորձ հըլուութեան,
Սայք ամենայն զայցելութիւնն իմ խընդրեն յայսմ իսկ վայրկեան։
Սակայն դու աստ հըսկեսցես վասն հանդըստեանըն իմոյ,
Եւ ոսոխի միոյ յանդուգն զդաւադրութիւնն կասեցո՛։
Մի՛ միայնակ թողցես զդըշխոյն, և թէ է մարթ՝ դու ինքնին
Արա՛ զի նէ գըտցի հաւան յիղձս սիրողի արքային։
Ընդ ընտրութիւն իւր այպնալից տո՛ւր նմա լինել ապաշաւ։
Դու իբր անմասն ոք դատաւոր յորդորեսցես զնա հեշտեաւ։

Ի մի բան, բաւ լիցի նըմա փորձել այսչափ ղդորոշն իմ.
Եւ ըզսոյն իսկ խանդաղատանս իմ վարեսցէ մի՛ բնաւին —
Զի՞նչ գիտեմն — 'ի ցասութիւնս՝ յորոց ոդիս վրթարեալ
Ոչ երբէք ըստրջասցի բայց թէ ըզվրէժ իւր լուծեալ։

ՏԵՍԻԼ Զ.

ՄՈՆԻՄԷ, ՔՍԻՓԱՐԷՍ

ՔՍԻՓԱՐԷՍ

Զի՞նչ ասացից՝, տիրուհիդ, և ի՞բր պարտիմ իմանալ
Զայդ հրրաման և զայդ խօսս զորս ըմբռնել չէ ինձ կար։
Ճըշդրի՞տ իցէ, աստուածդ մեծդ, թէ 'ի քէն յոյժ սիրեցեալ
Փառնակեայ՝ ցասմանըդ այդ է իրաւամբ արժան լեալ.
Փառնակեայ իցէ ինչ մասն 'ի խառնաղանճոդ այդ դըժխեմ։

ՄՈՆԻՄԷ

Փառնա՛կ ասես. ո՛վ երկինք. Փառնակ. և զի՞նչ զոր լըսեմ.
Ո՞չ շատ ուրեմն ինչ իցէ զի սրդալիցըս այս օր
Ա՞նդարձ յինէն տրոհեսցէ ըզսիրեցեալսն իմ բոլոր,
Եւ ո՞չ է բաւ՝ ըստրուկս թըշուառ պարտուցն իմոց օրինաց՝
Զի ընկապճեալ յաւէրժական 'ի տառապանս տեսից զանձն,
Յաւելուցուն, վշտաց իմոց և նախատինս 'ի վերայ՝
Առգրրելով զարտասուս իմ հեղեալ 'ի սէր Փառնակեայ.
Կարծի յինէն նա սիրեցեալ՝ ատելութեանս հակառակ.
Թողում յարքայն որ կոպանեալ է ցասմամբ՝ զայդ վըրիպակ,
Եւ որ դաղտնեացըն իմոց ոչ ատակէ գոլ հասու.
Սակայն դովի՞ն ընթացիւք վարիս ընդ իս, տէ՛ր, և դու։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ներեա, տիկին, աղաչեմ, տարփածուոյ իմն մոլորեալ,
Որ ինքն իսկ ևս դըժընդակ իմն 'ի պարտուց կաշկանդեալ
Աչէ զանձն մօտ զբրկիլ բնաւին և ոչ իշխէ վրէժխընդրել,
Այլ 'ի ցասմանց արքային զի՞նչ պարտ է ինձ ենթադրել։
Բողոք բառնայ զի սիրոյն իւր դէմ յառնէ սէր իմն օտար.

Ո՞ր երջանիկ մեղապարտ կարէ լինել յայսմ պատճառ.
Ո՛. խօնեաց։

ՄՈՆԻՄԷ

Ի՛շխանդ, կամաւ խոշտանգել զանձնէդ խընդրես.
Արդահատեա՛ ազետիցդ, և յաւելցուս մի՛ այլ և։

ՔՍԻՓԱՐԷՍ

Քաջ իսկ գիտեմ՝ ո՛ր խոշտանգանքս պատրաստեմ ես իսկ յիս։
Դոյն ինչ է ինձ տեսանել զհայրն իմ կին ածել զսիրելիս՝
Տեսանել և զոսոխ ոմն պատուեալ 'ի քոյ արտասուաց.
Անտարակոյս՝ սա է վասն իմ լքրումն և ծայր դառնութեանց.
Ցանկանամ թեանն իմ սակայն բարդել ըզվիշտս իմ խընդրեմ։
Օն՝ գթա՛ յիս, տիրուհիդ իմ, և ծանո՛ ինձ աղաչեմ.
Ո՞ ոք իցէ այդ տարփաւոր, զումմէ՞ պարտիմ կասկածել։

ՄՈՆԻՄԷ

Դիժուարի՞ն ինչ իցէ քեզ այդչափ ըզնա ճանաչել.
Երբեմն՝ յորժամ յանիրաւ 'ի բռնութեանցն խուսէի՝
Առ ո՞ արդեօք ամբաստան ըզփառնակեայ լինէի.
Յո՞վ արդեօք սիրտն իմ փութայր երբեմն խնդրել ապաստան,
Որոյ սիրոյն անդ 'ի լուր ունկըն դնէի թանց ցասման։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛վ երկինք. զի՞նչ. ե՞ս իցեմ պատժապարտդ այդ երանեալ
Յոր հաճեցար շնորհաձիր իմն 'ի նայեաց ակըն տալ.
Ի՝արտասուք քո քսիփարեա՞յ վասն հեղանիլ անկ դատեցան.

ՄՈՆԻՄԷ

Ա՛յո՛ իշխան. և ոչ ևս է ժամանակ կեղծութեան.
Տագնապին ցաւք իմ յաւէտ յոյժ 'ի լռութեանն իմ անդէն։
Թէպէտ հարկըք բուռըն պարտուց 'ի կալ համր զիս ըստիպեն,
Այլ հուսկ ուրեմն պէտք իսկ են՝ խիստ օրինացն հակառակ՝
Խօսել իբրեւ առաջին և 'ի վերջին 'ի նուադ.
Ի վաղընջուց սիրեաս զիս. նոյնահանդէտ իմն գորով
Բազմաց հետէ՝ վասըն քոյ՝ տառապէ զիս և տայ խռով.
Ա՛ծ ըզմբտաւ, յաւուր յորում գեղեցկութիւնս սրգաբեր
Արծարծեայ 'ի սրտի քո մեծ քան զարժանն իւր ըզսէր.

Ցիշեա՛ բզյոյն որ ընդ երկար 'ի քեզ տեւեաց ոչ բնաւին
Եւ բգշբփոթն յոր ըզքեզ տարփանք հօրքն քո արկին,
Եւ զվիշտդ յինէն զրկելոյդ և աչելոյդ զնա բաղդեալ,
Եւ զխբստութիւնքն հարկին ընդդէմ ըզձիցդ յարուցեալ.
Ո՛չ է քեզ մարթ, տէր, այսոցիկ ըզյիշատակն դբծադրել՝
Եւ 'ի պատմելդ զաղէտքս քո՝ զպատմութիւնն իմ չբյարել.
Եւ մինչ ըզշարս ցաւոցդ 'ի քէն յայսմ աւօտու լքսէի,
Ի՝ես իսկ զինէն 'ի սրտին իմ՝ զնոյն իսկ քո բանս կրկնէի.
Համակրութի՛ւն անօգուտ մակաւելի սրգադէմ.
Ցոյժ կատարեալ միութիւն արտալածեալ 'ի բաղդէն.
Ո՛հ որով անպուլթ խնամով երկինք 'ի մի զօդեցին
Ըզսիրտս կրկին զորս առ իրեարս վիճակել ոչ կամէին.
Քանզի թէպէտ և միտութիւն ինչ ձբգեսցէ զիս 'ի քեզ,
Զայս ասեմ քեզ, տէ՛ր միանգամ և կրկնեցիս և ոչ ևս.
Պատիւն իմ ձայն ածէ ցիս և վարէ զիս 'ի բաղինն,
Ուր գբնացիս երդնուլ քեզ յաւէրժական լքռութիւն։
Լքսեմ՝ յոգւոց ելանես, սակայն այս են խարուանքն իմ,
Ո՛չ քոյդ եմ ես բբնաւին, այլ առ հայր քո պատկանիմ։
Ի խորհուրդս իմ այս և քեզ իսկ պարտ է լինել ինձ սատար՝
Եւ օգնել ինձ 'ի վանել զքեզ 'ի սրտէն իմ տրկար։
Հեզահամբոյրն 'ի քոց բարուց ակընկալեմ գէթ զայս ես.
Զի յայսմ հեռէ ամեն ուրեք խոյս յերեսացն իմ տացես։
Եւ ահա շատ իսկ խօսեցայ առ ածել զքեզ 'ի հաւան՝
Թէ իրաւունք մեծ են իմ առնել քեզ զայս հրաման։
Եւ ըզկընի ժամուս այս եթէ վերհանձրն քս սիրտ
Առ Մոնիմայ բորբոքեալ վառի 'ի սէր ճշմարիտ,
Ցայսքմ և եթ գիտացիս զանսքտութիւն քո բանին
Զի յարաժամ փոյթ կալցես փախչել յինէն բբնաւին։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛վ մեծ աստուածք, ողորմելի սիրոյ և զի՛նչ այս նըշմար.
Քանիցս անգամ երդանիկ՝ 'ի մի վայրկեան և թշուառ.
Որո՞ց փառաց 'ի լրութենէ ե՝երանութեանն 'ի բարձուէս

Ցոր խարափբս դալափիլս դարահոս զիս արկանես։
Ապաքէն, զսիրտ մի զերթ քոյին շարժել կարող եմ եղեալ՝
Եւ քո հաճեալ սիրել զիս։ սակայն այլ ոմն յարուցեալ
Ունիցի զայդ սիրտ որոյ իղձք յինէն էին գբրաւեալ։
Հա՛յր անիրաւ և անգութ, սակայն յաւէտ տառապեալ....
Ժըխտեալ խընդրես զի 'ի բաց գնացեալ 'ի քէն խուսեցից։
Սակայն յարէ զիս արքայն ըզհետ քոյոցըն քայլից։
Զի՞նչ ասասցէ։

ՄՈՆԻՄԷ

Զէ ինչ փոյթ, ինձ խոնարհել պարտ է քեզ(1)։
Հընարեսջի՛ր քեզ պատճառանս որով ըզնա պատրեսցես,
Դիւցազան իմն հանգէտ քո յայսմ յայտնին ճիգք գերազանց։
Խընդրեա՛, իշխա՛նըդ, խընդրեա՛ առ 'ի պատրել անձամբ զանձնդ
Զամենայն զոր՝ առ վայելքս հեշտութեանըն իւրեանց՝
Տայ հընարել սէր ինքնին տարփաւորացն իսկ գռեհկաց։
Կարճ ասեմ։ զանձն իմ ճանաչեմ, աւուրք իմ են 'ի վըտանգ,
Եւ քաջութիւնն իմ չէ վըստահ 'ի յանատակըն իմ ջանք։
Գիտեմ զի՝ զքեզ տեսեալ իմ՝ գորովալիրն յիշատակ
Կարասցէ խլել 'ի սըրտէս զանպատեհ իմն հառաչանք,
Եւ զի տեսիցզոգի իմ՝ գաղտնածածուկ ցաւատեալ՝
Վերասլանալ առ 'ի սէր յորմէ գըտաւ տըրոհեալ։
Այլ գիտեմ զայս ևս կարի քաջ զի—'ի քէն իսկ թէ կախի
Սիրելի յոյժ առնել ինձ զքաղցր յիշատակ այսպիսի—
Ոչ ինչ արգել լինիցեն՝ մինչ վըթարեալըն իմ փառք
Թէ պատժեսցէ փուրթապէս ըզխորհուրդն իմ մեղապարտ,

---

(1) Ո՞վ առ ո խոնարհեսցի։ 'ի բնագիրն է il me faut obéir այն է՝ ինչ պէտ է՝ խոնարհիլ։ իսկ միտ բանին է ինչ պէտ է՝ զի խոնարհեսցիս ինչ (խոյս յերեսացն իմ տալով)։ որպէս հրամայէ նմա սուղ ինչ 'ի վերոյ։ Զայս երկդիմութիւն ոչկամեցաք բոլորովին ջնջել, և եղաք այսպէս։

Եւ մինչ ձեռն իմ մբխիցի խընդրել ըզքեզ 'ի սրտի՝
Ի՛առ 'ի լուանալ անդ զամօթ իմ և 'ի հանել զքեզ անտի։
Զի՛ յերկարեմն։ 'ի վայրկենիս այս որ մընայ մեզ վերջին՝
Ըզդամ զանձն իմ գբրաւեալ 'ի հեշտութեանց սրգային։
Ցորչափ խօսիմքս ընդ քեզ՝ նոյնչափ և՝ տրկարիս,
Երկարել խընդրեմ զվբտանդ յորմէ խուսեմքս զարդիս։
Ի՛ո՛չ վատնելով՝ 'ի Հա Քարեաս զդուն մնացեալն իմ պնդութիւն
Ահա գբնամ։ Ցիշեա՛, Իշխա՛ն, զի յար յինէն խուսեսցես
Ի՛արժան գբտցիս արտասուացն զորբս հեղուլ ինձ տացես։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛հ տիկին։։։ փախչի և ոչ ունկն տալ ինձ կամի և։
Եւ զի՞նչ պարտիս արդ գործել, վատաբաղդի՛կդ Քսիփարէս։
Սիրեալ սիրիս և մերժիս։ Նբշմարես դու իսկ քեզէն
Զի սեփականք քո պարտիք համահանգէտք ընդ իւրսն են։
Արագ մահուամբ իմն փութա՛ ըզտառապանս քո կարճել։
Սակայն՝ մնացիր զի լբցցի ճակատագրին իւրում եկ։
Եւ թէ պէտք են զի ոսոխ ոմքն շոպեսցէ զսա յինէն,
Գէտ մի՛ թողիր բայց յարքայն 'ի մեռանելն իմ անդրէն։

ԱՐԱՐՔ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՄԻՀՐԴԱՏ, ՓԱՌՆԱԿԷՍ, ՔՍԻՓԱՐԷՍ

ՄԻՀՐԴԱՏ

Մատերու.ք, որդեակը.ք իմ, հուսկ՝ ահա հաս ժամանակ
Զի գաղտնի.ք իմ յայտնի.ք ձեր 'ի վեր ելցեն յայտորակ.
Բնաւ.ք դաշնաւոր.ք երևին խորհրդոցն իմ վեհապանձ,
Զորըս պարզել ինձ մինայ միայն առ ձեզ բաց 'ի բաց։
Փախըստեայ եմ. սապէս կամի ճակատագիրն ոխերիմ։
Սակայն քաջ իսկ դիտէ.ք դու.ք ըզպատմութիւն կենացն իմ
Առ չը կարծել թէ ընդ երկար կամ իցէ ինձ սալարել,
Եւ յամայիս այս մինալ զի եկեսցեն զիս խընդրել.
Պատերազմին են յաջողուածք՝ որպէս եւ են ձախողմունք.
Բազմիցս՝ երբեմն իմ վերադարձ արարեալ յետս ընդ կրունկ,
Մինչ թշնամեոյն ընդ փախուստըն իմ խաբեալ գլխովին՝
Յաթիռս ըզհետ ձրդէր կառացն իւր ժողովուրդ մի չնչին, (1)
Եւ քանդակեալ 'ի պղինձ(2) զյաղթութիւնս իւր անվաւեր՝
Նուաճելոցն իմ մարզից պընդէր յերկաթս ըզպատկեր,
Բոսփոր ետես զիս անդրէն պատրաստութեամբ նորանոր
Ծաւալել ահ և սոսկումն 'ի յալցիցն իւր ճախնաւոր,
Ի՝արտալածեալ ըզՀռոմն 'ի սոսափեալն Ասիոյ՝
Կործանել յաւուր միում ըզդործ ողջոյն ամի միոյ։

---

(1) Իսա՛ զդաղթականս Հռովմայեցիս որք ըզհետ գնային յաղթական բանակացն նոցուն՝ բնակել 'ի դրաւեալ երկիրս անդ։

(2) Այն է՝ 'ի դրամս. սովորութիւն էր Հռոմոց քանդակել 'ի վերայ դրամոց զնորանոր յաղթութիւնս իւրեանց և 'ի շղթայս ցուցանել զպատկեր աշխարհացն նուաճելոց։

'Ընդ ամենակին փոխին և հոգք։ Արդ Արեւելք՝ նուաճեալ՝
Նոցուն կըրկնեալ զօրութեանց կարէ ոչ ևրս տոկալ,
Եւ նըշմարէ այժմ քան երբէք մակածածկեալ զիւր աւանս
Ի Հռոմոց զորս պատերազմ առնէ փարթամն մեր յաւարս։
Ցափիշտակիչք դորսովեալք ըստացուածոց այլ ազանց,
Զորս զամենայն հրապուրէ համբաւն մերոց ճոխութեանց։
Գան սուրհացեալք տարմաբար, և ընդ իրեարս ըզչալեալ
Զաշխարհս իւրեանց դատարկեն՝ առ 'ի մերըն յորդան տալ։
Ես եթ նոցուն կամ դիմադրաւ։ մըտերմութիւնս դառնացեալ
Առ սիրելիսն իմ ծանրանայ՝ որք ի ցեն խոնջք կամ ընկճեալ։
Մէն ոք կամի առնել ազատ զդլուխ իւր 'ի յայդ բեռանէ,
Եւ Պոմպէի անուն մեծ զյաղթանակս իւր վաւերէ։
Նա արհաւիրք Ասիոյ։ ե՛իմ ոչ ըզնա ասա խընդրեալ՝
Անդ 'ի Հրոռվմ, որդեակք իմ, 'ի Հռոմ կամիմարշաւ տալ։
Ցապուշ կըրթէ զձեզ խորհուրդս, և թերեւըս համարիք։
Թէ է այսօր սա միակ յուսատութեանն իմ խայրիք։
Ներեմ ձեզ զայդ վրիպանք։ ե՛այսպիսի ինն նպատակ
Առ ի լինել հաւատալի՝ ելանել պարտ է 'ի յանդ։
Մի՛ լեցի ձեզ համարել թէ յայսոցիկ 'ի տեղեաց
Անջրպետեալ ի ցէ Հռոմ պարբսպօք յաւէրժակաց։
Գիտեմ զառհետս ամենայն ընդ որս պարտիմ անցանել։
Եւ եթէ մահ վաղ ուրեմն ոչ հասցէ ինձ կալ արդել,
Առանց յամուրդ ինչ տալոյ արդեանց բանիցն իմ բնաւին
Տարայց ըզձեզ յամիս յերիս 'ի ստորոտ Կապիտոլին։
Երկբայի՞ք թէ Եւքսին ոչ տարցէ աւուրբք երկոքումբ
Զիս 'ի տեղիսն ուր վախճան տայ գբրդանացն իւր Դանուբ
Խիթա՞յք եթէ Ըսկիւթիայ ուխտեալ դաշինքքն ընդ իս՝
Զբ բացցեն յայն 'ի կողմանս զեւրոպայ զդրունսքն առ իս։
Ասպընջացեալ 'ի նաւակայս իւրեանց՝ զբանակ մեր տեսցուք
Ըստուարանալ 'ի մէն մի քայլ նոցունցըն իսկ ըսպահիւք։
Դակէացիք՝ Պաննոնեանք՝ Գերմանիա խրոխտադէմ
Հրամանատար միայն խնդրեն առ բբռնութեանցն յառնելդէմ։

Տեսեալ է ձեր զԲՊանիա՝ զԳալլիացիսն մանաւանդ՝
Գերգերեալ զիս 'ի վերէժ դէմ պարբսպացքն իսկ անդ
Զորս մերթ ինքեանք առին 'ի մէնջ. և մինչ 'ի ցոյնս իսկ դեսպան
Առաքէին զհեղգութենէն իմմէ գոլ ինձ ամբաստան։
Գիտեն դոքա զի այդ յորձանք՝ մերձ 'ի զեղուլ յարաժամ
Եթէ քարշեալ ձգեսցէ զիս՝ հեղձուսցէ զայլս ամենայն.
Տեսջի՛ք զնոսա ըզբնաւս, լեալ կանխագդոյշ ընդ չարիս,
Առաջնորդեալ յԻտալիա և ընթանալ ևս ընդ իս։
Անտանոր իսկ հասեալ ձեր՝ գըտջիք զանունն Հռովմայ
Սոսկալի յոյժ և մախիզ քան յամենայն պողոտայ,
Եւ զտխրատեսն Իտալիա ծախել 'ի ծուխ տակաւին
Հրոյն զոր վառեաց ազատութիւն իւր անդ 'ի շունչն իւր վերջին
Ո՛չ, ո՛ իշխանքդ, ոչ թէ միայն 'ի ծագըս անդ աշխարհի
Շարաւանդիցն իւր զբեռն Հռովմ առնէ զգալի.
Այլ 'ի մօտոյ, ո՞վ Հռովմ, յանհընարին չընչեալ քէն՝
Ահեղագոյնք քո թըշնամիք առ դըրամբք քովք բընակեն։
Ա՛հ, թէ նոքա ազատարար իւրեանց ընտրել գիտացին
Զըսպարտակոսն ախընթոր՝ սուսերամարտըն այն սին(1),
Եթէ 'ի ռազմ գնան ըզհետ հուղկահարացն քինազէն,
Որո՞վ վըսեմ եռանդեամբ՝ համարիցիք զի մըտցեն

(1) Սպարտակոսն՝ այր անհնարին վիթխարի և սուսերամարտ ահաւոր՝ այլ անճետ և աննչան, ճողոպրեալ 'ի բանտէն Պադուայ՝ ուր արդելեալն էր 'ի Հռովմայեցւոց ընդ իւրովքն եօթանասուն ընկերօք, ժողովէ առ իւր զգերեալս 'ի Հռոմոց յայլև այլ ազանց և երկրաց և հարկանէ երիցս զՀռոմն որք 'ի շրջակայս։ Ընդ այս յաջողուած՝ հասանին առ նա և համախմբին ընդ դրօշակաւ նորուն արք խուժադուժք լեռնաբնակք և վրիժայոյզք՝ իբրև երկոտասան բիւրք։ Տեսեալ Սպարտակեայ առ ինքն այսպան զօրութիւն՝ համարձակի մատչել 'ի Թեթուս բաղդին և խաղայ 'ի Հռովմ յեղակարծ ինն։ Անդ Կասսիոս՝ մին յեռապետիցն (ընկեր Պամպէի և Ց. Կեսարու,) զօրաժողով լինի 'ի շրջակայիցն Հռովմայ, հարկանէ երկիցս զբանակ Սպարտակեայ և ցրուէ։ Սորա մնացեալ գրեթէ միայնակ և վէր յաղդերն ընկալեալ՝ ամենաբար պատերազմի և ան-

Ընդ դրօշակօք արքայի՝ յաղթանակի ամն յամայր՝
Որ վերանալ մինչ 'ի Կիւրոս աչէ զտոհմին իւր զհամար.
Եւ զի՞նչ ասեմ։ Ցոր վիճակի կարծէք ըզՀռոմ դըտանել։
Դատարկացեալ 'ի ոահից որք կարասցեն պաշտպանել,
Մինչդեռ համայնք հապճեպեն առ 'ի զհետ իմ արշաւել,
Կանայք Հռոմոց և տըղայք կարասցե՞ն զդէմ իմ ունել։
Ընթասցուք ւ'' Ցոց Հռոմայ ըզպատերազմ դարձուսցուք
Զոր աշխարհի ծագաց 'ի ծագս առաքեն իւր մոլութիւնք,
Հարցուք 'ի մէջ բերդիցն իւրեանց զաշխարհակալսդ խրոխ-
տապանծ։
Աննի բալ կանխաւ ասաց, լուիցուք մեծ առնըն այն,
«Ոչ Ցաղթեսցին Հռովմայեցիք բայց 'ի Հըռովմ մի միայն։»
Հեղձուսցուք ըզնա յարիւն իւր՝ իրաւամբ իսկ հեղեալ.
Մըղեղեսցուք ըզկապիտոլ յորում էի ըսպասեալ. (1)
Եղծեսցո՛ւք ըզշուք նորա և ջընջեսցուք անտի ևս

կանի ընդ անթիւ հարուածովք տիգոց և նետից 'ի վերայ դիակացն Հռոմոց զորս ձեռամբն իւրով շեղջակուտեալ և բարդեալ էր շուրջ զիւրև։ Պոմպէոս՝ վերադարձեալ յԱսիոյ՝ հարկանէ խսպառ սպուռ զմնացորդ դնդացն նորա որք անդրէն տաւաղեալէին 'ի լերինս . . . ։

Այս դէպք իրաց պատահեալ են սուղ ինչ ժամանակաւ յետ մահուն Միհրդատայ՝ ըստ Հռովմայեցի մատենագրութեանց. այլ հեղինակդ թերևս քանասիրական էրաամբ յառաջագոյն զնա ցուցանէ։

(1) Այսինքն՝ յորում մնայր ժողովուրդ Հռովմայ տեսանել զիս կալանաւոր։ Հռոմք յորժամ 'ի գերութիւն վարէին զարքայ ոմն կամ հրամանատար բանակի, տարեալ կացուցանէին զնա անդ 'ի Կապիտոլ՝ 'ի ցոյց ժողովրդեան։ Իսկ եթէ անկեալ էր նա 'ի մարտի կամ փախստեայ զերծեալ, զանուն նորա դնէին 'ի ցանկի կախելոյ անդ որ պարունակէր զանուանս պարտեցելոցն թշնամեաց՝ սկիզբն արարեալ 'ի Պերսէոսէ արքայէ Մակեդոնացւոյ՝ պարտեցելոյն 'ի Հռոմոց։

Զորս տողքդ որք հետեւին՝ յայդ ցանկ վերածին։

Զհարիւրաւոր արքայից զամօթ և զինն իսկ թերեաս.
Եւ հուր և բոց 'ի ձեռին՝ սրբբեսցուք զբոլոր անուանս
Զորս Հրոովմայ է նուիրեալ 'ի յանվախճան նախատանս։
Ահաւասիկ այս են տենչանք յորոց ոգիս է գրաւեալ.
Այլ սակայն մի՛ համարիցիք՝ թէ յԱսիոյ հեռացեալ՝
Թողից զՀռոոմս ըստացիչս անդորրաւէտս անդանօր.
Գիտեմ ո՛ւր պարտ է ինձ գտանել նրմա պաշտպանքս հրզօր.
Կամիմ զի Հռոմ 'ի թշնամեաց պատեալ յամէն 'ի կուսէ
Առաւիր ըզՊոմպէի զօգնութիւնքն կոչեսցէ։
Պարթեւն որ է որպէս եւ ես Հռովմայեցւոցն ահն եւ հոյն,
Հաւանի գոլ բաժանորդ յարդարքն իմ բարկութիւն։
Քինու իւրով եւ աղդաւ նա միշտ պատրաստ յարիլ յիս՝
Ըզմին յորդւոցն իմ 'ի փեսայ խընդրէ դրստերն իւր զարդիս
Այս պատիւ քեզ վերածի, և ընտրեցի զքեզ փառնա՛կ,
Փութա՛ յուղի, և եղիցիս դու այդ փեսայ երանեակ.
Ի վաղիւ անդբր կամիմ զի աշալոյսքն՝ պարզեալ
Ցուցէ զնաւս իմ՝ անյապաղ՝ 'ի Բոսփորէն հեռացեալ։
Դու՝ զոր ոչինչ այսր արդելու, մեկնեա՛ց 'ի յայս վայրկենէս,
Եւ եռանդեամբ փութոյ քոյ զընտրութիւնն իմ յարգեսցես,
Զհարսանիս զայս հա՛ն'ի յանդ. ե՛անդրէն անցեալ ընդ Եփրատ՝
Ցուցցես աչացն Ասիոյ զմիւս ոմն 'ի քեզ Միհրդատ։
Թո՛ղ բռնաւորքն հասարակաց յահ և յերկիւղ սարսեսցեն,
Եւ համբաւոյդ այդ հրաչակք մինչ 'ի Հռովմ յիս հասցեն։

ՓԱՌՆԱԿԷՍ

Ըզզարմացումն իմ, ո՛ տէր, չէ ինձ 'ի քէն ծածկել մարթ,
Եւ հիացմամբ ունկընդիր կամ ձեռնարկիդ մեծի այդ,
Ըստանչանամ ես ընդ այն. յանդրգնագոյն խորհուրդ ինն
Ոչ եդ զէնքս 'ի ձեռին պարտեցելոց բընաւին։
Մակաւելի հիանամ ընդ սիրտ քո այդ անվաստակ
Որ ամրապինդ եւս թուի ընդ բեռամբ իսկ ծանրահակ,
Սակայն յանկեղծս խօսել թէ ներելի ինչ է ինձ,
Հասեա՛լ եցես ցայդ վերջին 'ի ծագ դրժիսեմ աղիտից,

Ըզմէ՞ փորձել արշաւանս ումպէտս յայդ քան հեռաստանս,
Մինչդեռ աշխարհք քո նուիրեն քեզ բազմազան ապաստանս.
Եւ առ իմէ՞ ձեռնարկել 'ի ճգնութիւնս անբսպառ՝
Արժանի յոյժ պետի իմն վրտարանդեալ և թրշուառ
Առաւել քան արքայի որ դուն յառաջն երեւէր
Ցարեւելից մինչ 'ի խրրթինն ըզյոյսըն իւր ածողել,
Եւ յերեսնից դեհից վերայ կանգնէր ըզդահրն իւր նոր,
Որոց բեկորք կազմեն դեռ ևս պետութիւն իմն հրզոր։
Դու միայն, տէ՛ր, դու միայն ըզկնի ամաց քառասնից
Հընարիս գալ 'ի պայքար ընդդէմ բաղդին արկածից։
Անողո՛ք ոսոխդ Հռովմայ և թշնամիդ հանդըստեան։
Մէն մի դիւցա՞զն համարիս զզօրականս քո զամենայն.
Կարծե՞ս թէ այդ սիրտք՝ յիւրեանց կոտորածէն զահանդեալք
Եւ յանընդհատ և տաղտաղտ 'ի նահանջմանցըն խոնջեալք,
Լիցին անձկաւ 'ի խընդիր ընդ երկնիւք իմն օտար՝
Մահու իւրեանց եւ ճգնութեանց որ քան ըզմահ ևս են չար.
Ցաչս հայրենեացըն իւրեանց՝ սոքա բազմիցըս յաղթեալ
Այլուր մոլեալ յաղթողին հընարեսցի՞ն ինչ տոկալ.
Նուա՞զ ահեղ լիցի նա և դիւրա՞ւ ևս պարտեսցի
Անդ քաղաքին իւր 'ի ծոց և դիցն իւրոց առաջի։
Պարթեւն ըզհետ քո լինի ւ՝ի քէն խընդրէ զիւր փեսայն։
Այլայդ Պարթև, տէ՛ր, որ դեղձայր տենչիւ լինել մեզ պաշտպան
Մինչ տիեզերք ամենայն զօրավիդն մեզ թուէին,
Լիցի՞ և այժմ կարեկիր անօգնական փեսային։
Գընացի՞ց ես միայնակ՝ քարուակ կացեալս առ բաղդին
Հանդուրժել սովորական յողդողդութեանն Պարթեւին,
Եւ թերեւս՝ առ 'ի վարձ այսքր սիրոյ խրոխտալից՝
Ի ծանականս ապարանին իւրում զանուն քո արկից.
Իսկ թէ պարտ է զիջանիլ և հակառակ բարուց մեր՝
Պաղատողի զկերպարանս յանօթ առնուլ և զպատկեր,
Թարց յըղելոյ զիս Պարթեւին խաղապատել 'ի ծընդունս՝
Ի՝առանց քո իսկ եղձանալոյ յարքայս քան զքեզ փոքրագոյնս

Հընարաւոր չէ՞ր մեզ ունել ուղի յաւէտ ևս ճշգրիտ.
Անկցուք աղէ՛ 'ի գիրկս անդ որք մեզ բանին խնդամիտ.
Ահա Հռոմ 'ի շնորհս մեր դիւրահաւան զիջանել...։

ՔՍԻՓԱՐԷՍ

Հռո՛մ, եղբա՛յր իմ, ո՛վ երկինք, զի՞նչ համարձակիսդ առարկել։
Կամի՞ս արդեօք զի թագաւորին ցածնուցու՝ կորասցի,
Ի՛ միում աւուր զընթացս կենին իւրում ողջոյն ուրասցի.
Վրստահեսցի՞ նա 'ի Հռոմն, խոնարհեսցի՞ 'նդ օրինաց
Որոց ընդդէմ ամն քառասուն զբոլոր արքայս պաշտպանեաց,
(Ա- Մինրդոպ)
Մի՛ իցէ քեզ կասիլ, տէր, թէպէտ պարտեալ ևս իցես։
Պատերազմունք և վրտանգք ապաստանիք քո են եղ։
Հռոմ 'ի քեզ հալածէ թշնամի ոմն ահաւոր՝
Սոսկալի յոյժ քան զԱննիբալ, յոյժ քան զնա թամբերդմնաւոր.
Թաթաւեալ յարիւն, թէպէտ կարես առնել զոր կամիս,
Արենախանձ հաշտութեան միայն դու ակն ունիցիս,
Զոր օրինակ 'ի միում աւուր հրամանագիրն քոց ձեռաց
Եւ յԱրեւելս Հռովմայեցւոց իբբր հարիւր հազարաց (1)։
Խընայեսջիր դու սակայն 'ի նուիրական գլուխ քոյին.
Մի՛ անձամբ իսկ երթիցես յերկրէ յերկիր բընաւին
Ցուցանել յազգս և յազգինս ըզՄիհրդատ կործանեալ(2)
Եւ ըզմեծի անուանդ հռչակ առնել գձուձ և անփայլ։
Իրաւացի է քէն վրիժուցդ. յայդ պարտ է գոլ ձեռնամուխ.
Այրեա՛ 'ի հուր ըզկապիտոլ, մըղեղեսցի Հռոմ 'ի ծուխ.
Այլ բաւ լիցի քեզ արդեալ ըզպողոտայս միայնակ,

---

(1) Ըստ Ապպիանոսի և Պլուտարքեայ 150,000 են Հռոմք մախառեալք 'ի միում եթ աւուր յԱսիայ՝ հրովարտակաւն Միհրդատայ զոր առաքեաց յԵփեսոսէ։ Իսկ Վալերիոս Մաքսիմիոս ութսուն հազար միայն ասէ։ Այլ հեղինակն թուի զմիջակն ընտրել տասն բիւրս ասելով զկոտորեալսն։

(2) Մինրդոպ յաղթեալ կամ ընկճեալ հասարակաց է ոճ. իսկ Մինրդոպ կործանեալ détruit մեծի բանաստեղծի պատկանի — Լա Հարպ։

Եւ տացես զայդ հուր տանել ձեռացն տակաւ անվաստակ.
Մինչ Ասիա՝ի նախճիրս զբաղեցուսցէ զփառնակէս,
Այդու միւսով ձեռնարկիւդ զքաջութիւնն իմ պատուեսցես։
Հրամայեա՛. և թո՛ղ ըզմեզ՝ զանուն քոյին ձրդեալ զհետ՝
Հաւաստել ամենուրեք թէ հարազատ քո եմք ճետ։
Զարեւմուտս և զարեւելս ծախեա՛՝ի հուր՝ի ձեռն մեր.
Ի Բոսփորէն ոչ մեկնեալ՝ գրաւեալ լըցո՛ զտիեզեր.
Հռովմայեցի՛ք՝ անկեալ յանձուկ ծագաց՝ի ծագըս՝ի սպառ,
Խիթասցեն թէ ուր իցեսդ՝ և գըտցեն զքեզ յամէն վայր։
Ի ժամոյս իսկ յայսմանէ արա՛ հրաման զի գնացից.
Աստ բնաւ՛ք ըզքեզ արդելուն, իսկ ես վանիմ յամենից.
Եւ թէ խորհուրդըդ այդ մեծ գերազանցէ զիմն ըզկար,
Այս յուսահատ մոլուցք ըմբռն գտանին վըշտացն իմ փարթար։
Երջանիկ՝ եթէ զվախճանն փութացուցեալ աղիտից՝
Մեկնեցայց . . . . ըզկեղտ ոճրի մօրըն իմոյ ջընջեցից։
Տէ՛ր, տեսանես զիս վան այնր առ ծընդամբ քովք շա-
ռադնեալ,
Ամաչեմ՝ զանձն իմ ոչ ինչ արժանաւոր քեզ դըտեալ.
Ամենայն արեամբ իմով զարատդ զայդ սեաւ սրբբեցից։
Սակայն խընդրեմ քոյոց փառաց օգտակար իմըն մահ ինձ.
Եւ Հռոմ՝ շը.քեզ մոլեգնութեանս այս մի և եթ առարկայ՝
Վայելչաւոր գերեզման լիցի որդւոյն Միհրդատայ։

ՄԻՀՐԴԱՏ (յարոյցեալ)

Որդեակ իմ, մի՛ ես խօսեսցես.ք ըզսիրադրուժ քո մօրէ.
Շընորհ ունի հայր քո՝ի քէն՝ և զնախանձ քո ճանաչէ,
Եւ ոչ երբէ.ք տեսանիցէ զքեզ ճակատել վրտանգին՝
Թէ ոչ սիրոմն հայրական առեալ անտի զիւր բաժին.
Դու ըզհետ իմ եկեսցես. կամիմ՝ ոչինչ քեցցէ զմեզ։

(Ա՛ փառնակէս)

Եւ դու, իշխա՛նդ, ՝ի հպատակել ինձ զանձնըդ կաղմ կա-
ցուսցես։
Նաւ.ք են պատրաստ.ք. և արդէն իմ իսկ հրաման է տուեալ

Հանդերձանաց և ուղեկցաց որք առ քեզ են սահմանեալ։
Արբատ՝ ում յանձն է եղեալ տանել զքեզ յայդ հարսանիս,
Փոյթ կալցէ համարըս տալ ըզհլուխենէն քո առիս։
Երթ, և նախնեաց քոց ըզպատիւ՝ի պաշտպանել գուն գործեալ՝
Ցողջագուրանս յայսոսիկ զվերջին ողջոյնն իմ ընկալ։

ՓԱՌՆԱԿԷՍ

Տէր իմ . . . .

ՄԻՀՐԴԱՏ

Իշխան, կամակութիւնն իմ քեզ շատ իսկ թուեսցի։
Հընազանդեաց . խիստ քեզ է տալ ինձ կրկնել զոր ասացի։

ՓԱՌՆԱԿԷՍ

Տէր, թէ առ քեզ գոլ հաճելի՝ պարտ է անշուշտ կորընչել,
Քան զամենայն ոք անձկայրեաց տեսցես՝ի մահ զիս դիմել.
Թո՛յլ տուր ապա զի առ աչօք քովք ռազմ մըղեալ և մեռայց։

ՄԻՀՐԴԱՏ

Հրամայեցի քեզ առ ժամայն մեկնել գընալ՝ի յաստեաց։
Իսկ յետ ժամուս այսորիկ . . . . իմանաս ինձ, ո՛վ իշխան,
Կորուսեալ ես թէ արասցես առիս այլ և պատասխան

ՓԱՌՆԱԿԷՍ

Բիւրաւոր եթէ մահունս արասցես ինձ յանդիման՝
Ոչ գիտացիս գոլ՝ի խընդիր անծանօթի աղջկան.
Ի ձեռս քո են տուուրք իմ։

ՄԻՀՐԴԱՏ

Ա՛խ, մնայի յայդ բան միայն.
Ո՛չ կարես մեկնիլ, նենգո՛ղդ . և զմիտըս քո իմանամ։
Գիտեմ վան էր՝ի հարսանեաց խուսես յոր զքեզ առաքեմ.
Դառնութիւն մեծ է հոգւոյդ լքանել զորս քո այսրէն.
Մոնիմ ըզքեզ արգելու . և տրուփանք քո մեղսամած
Խըլել ըզնէ պահանջէր՝ի հայրական հարսանեաց։
Ո՛չ եռանդն իմ որով, գիտես, խընդրեցի ես զնէ այսրէն,
Ոչ յաղերն իմ որ՝ի ճակատ իւրում կապեալ է արդէն,
Ո՛չ տեղիս այս ապաւինի յորում ըզնէ տամ պահել

Եւ ո՛չ արդարն իմ զայրութիւն չկարացին զքեզ ահարկել։
Ո՛վ մատնտուիդ, ընդ Հռոմն համակրութիւն քո անարդ
Որպէս թէ չէր առ աչս իմ բաւական սեաւ թշնամանք՝
Եւ պակասէր և նա ևս այդ նենգամիտ քո տրուփիք՝
Առ 'ի լինել պատուհաս աւուրց իմոց ա՛ՀարՀաւիրք։
Թող թէ ոչինչ ապաշաւես, այլև 'ի դէմդ նըշմարեմ՝
Զի այդ տագնապք քո միայն 'ի զայրութիւց քոց ծագեն։
Տենչիւ վառիս զի 'ի ձեռաց իմոց զերծեալ փութապէս՝
Ի կորուստն իմ ընթանայցես և Հռոմոց զիս ծախեսցես։
Այլ յառաջ քան ըզչու իմ կատարեցիս իրաւունք։
Զայս ասացի քեզ արդէն։ Օ՛ն, պահակք

ՏԵՍԻԼ Բ.

ՄԻՀՐԴԱՏ, ՓԱՌՆԱԿԷՍ, ՔՍԻՓԱՐԷՍ, պահակք։

ՄԻՀՐԴԱՏ

Ըզդա կալարուք,
Այո՛՝ նոյն ինքն ըզփառնակէս։ Երթարո՛ւք և նոյն հետայն
Արդիլեցէ՛ք 'ի յամրոցին, և մի՛ թողջիք զնա միայն։

ՓԱՌՆԱԿԷՍ

Ապաքէն՝ ոչ սընոտի անմեղութեամբ զարդարիմ.
Ցիրաւի ատելութեան քո արժանի է սէր իմ.
Սիրեմ՝ այո՛, հաւատարիմ քեզ զեկուցումն են տուեալ.
Այլ Քսիփարեայ, տէ՛ր իմ, ոչ է քեզ զամենայն ասացեալ,
Սա փոքրագոյնն է 'ի գաղտնեաց զորս նա յայտնել քեզ մարթէր.
Եւ զաւակդ այդ հաւատարիմ ուսուցանել քեզ պարտէր՝
Նովին իսկ տենչիւ բազմաց հետէ բորբոքեալ՝
Ոռթագուհին 'ւ 'ի նմանէ է սիրեցեալ։

ՏԵՍԻԼ Գ.

ՄԻՀՐԴԱՏ, ՔՍԻՓԱՐԷՍ

ՔՍԻՓԱՐԷՍ

Հաւատասցե՞ս, տէր, թէ խորհուրդ իմն պատժապարտ սոյնգունակ . . . :

ՄԻՀՐԴԱՏ

Գիտեմ առ ինչ է կարող եղբայրքն քո, ո՛վ որդեակ. Քա՛ւ, պահեսցեն զիս երկինք յերկաւանալոյ իսկ բընաւ թէ հատուսցես զերախտիսն իմ անգութ վարձու այդպիսեաւ : Եւ թէ որդիս որ եղեւ միշտ երանութիւնն իմ կենաց՝ Կարասցէ խոցել ըզսիրտ զոր հայրն իւր յինքն հաւատաց : Ոչ բնաւ նմա հաւատացիս : Երթ, թո՛ղ թէ յայդ միտ եդիս, Զվրէժ մեր միայն յայսմ հետէ 'ի նըմանէ խընդրեցիս :

ՏԵՍԻԼ Դ.

ՄԻՀՐԴԱՏ

Հաւատացիս ո՞չ բնաւ յայդ : Փաղաքշիչ յոյսըդ մնոտի : Կարի յոյժ հաւատաս դու, ո՛վ Միհրդատ եղկելի : Քսիփարէ՞ս նախանձորդ իմ. և համամիտ լեալ ընդ որ Եւ Թագուհոյն իշխեալ ինչ խարդաւանել զիս այսօր. Զի՛նչ. և յոր կոյս և ես ընդնայեացքն իմ 'ի հիւ չբրջեցիս՝ Զի.ք է եղեալ վրստահութիւն վասն իմ յամեն 'ի սրտիս : Այլուր համայն.ք լը.քանեն զիս, և աստանօր դաւեն բնաւ.ք, Փառնակ՝ դըշխոյն՝ բարեկամ.ք, և դու ևս, ո՛վորդեակ(1).

(1) Կեսարու տեսեալ զԲրուտոս 'ի միջի սպանչացն իւրոց ասէ Tu quoque, Brute ե՞ դո՞ ե՞ Բրո՛ւտէ. զնոյն տայ Միհրդատայ ասել աստ հեղինակդ :

Դու ոյր բարուցն վեհութիւն վերտացն իմոց ըստիպանք...
Այլ միթէ ո՞չ ճանաչեմ ես ըղնենդամիտն ըղփառնակ,
Է՞ր վարանել ինձ իցէ համարել զնա մոլի ոմն
Զոր կամ զայրոյթ ինչ նախանձոտ զինէ ընդդէմ իւր եղբօրն՝
Եւ կամ որոյ յուսատութիւն՝ վրդովեալ զիս սուտ բանիւ,
Առաւելու՝ առ ի զերծիլ՝ պատժապարտացն ըզթիւ,
Ո՛չ՝ ոչ երբէք հաւատացից, և ոչ շտապաւ փութացեալ՝
Նկատեցից՝ քննեցից։ Այլ ուստի սկիզբն արարեալ։
Ո՞ ուսուսցէ ինձ զիրաւն, ո՞ր են վրկայք, ո՞ր նըշմար...
Ի ըոպէիս այսմ երկինք ներշընչեն յիս իմն հընար։
Կոչեցէ՛ք ըզթադուհին։ Այո՛, ոչ յայլ ինչ դիմեալ՝
Նըմա լուայց. ընտրութիւնն իմէ յայդ վկայ կայացեալ։
Մէր անձկանօք հաւատայ փաղաքշանաց բընաւին
Ո՞ լաւագոյն քան զբարեդրուժն յայտնեսցէ զիւր հոմանին։
Տեսից զո՛ ոք յերկոցունց արդեօք սէր իւր մատնեսցէ.
Թէ դառն դընել չէ ինձ վայել այլ արժանի այնըց է։
Պատրեցից որ խափեն զիս. ե՛ի ճանաչել զմատընտուն
Ոչ այլ հնար ինձ գուցէ... բայց նըշմարեմ՝ գայ դըշխոյն.
Կեղծեցից և 'ի սրտէն՝ դըգուեալ յուսով վայրապար,
Զճըշմարտութիւն քաղեցից, խաբէութեամբ իմն ճարտար.

ՏԵՍԻԼ Ե

ՄՈՆԻՄԷ, ՄԻՀՐԴԱՏ

ՄԻՀՐԴԱՏ

Ահա բանամ զաչս իմ 'ի լոյս և խընդրեմ զանձն իմ ղ ատել.
Սըգաբեր իմքն ձունիս է գեղոյ քո նըւիրել՝
Թէ ընդ սիրոյս իմ յանդիման քեզ կացուցից, ո՛ տիկին,
Ըզ հասակն իմ և զաղէտս զորըս ձըգեմ ըզհետ իմ։
Մինչև ցայս վայր ճակատագիրն և ուղմին իսկ յաղթանակ
Ընդ եռեսուն թագուվք ըզհերս իմ ծածկէին զըսպիտակ,
Ոչ ևս կայ նոյն ժամանակ. արքայ էի, ե՛այժմ փախչիմ.

Ամբ իմ յանկարծ բաղմացան և եղծեալեն փառքքն իմ,
Եւ ճակատն իմ՝ մերկացեալ 'ի վրանեն իւր պերճանաց
Հանէ 'ի տես ըզնախատինս խամրեցուցչացըն տարեաց,
Այլ և խորհուրդք բաղմադիմիք ըզմիտս իմ զբաղեն արդ.
Լսես զբբբիւն բանակին որ 'ի մեկնել կայ պատրաստ.
Պարտիմ 'ի նաւ մըտանել՝ այն ինչ ելեալ 'ի նաւաց.
Ցարագահասդ այդ 'ի չու զի՞նչ ժամանակ հարսանեաց,
Տիկին։ Եւ ո՞ր երեսոք բաղդակից ինձ առնել զքեզ,
Մինչ ո՛չ այլ ինչ բայց պատերազմեթ և ըզմահ խընդրեմ ես։
Սակայն դըլա՛ դադարեա՛ 'ի խընդրելոյ զփառնակէս.
Ցորժամ սահմանն դնեմ անձին՝ պարտ է առնել քեզ նոյնպէս։
Ոչ երբէք հանդուրժեցից զի այդ որդիս խշտրելի՝
Զոր արդ ես յաչաց իմոց յաւէժ 'ի բաց վանեցի,
Ցանկասցեալ յինքն ըզսէր որ զբլացեալն է առ իս՝
Արասցէ զքեզ դաշնաւոր ընդ նոսին իսկ Հռովմացիս։
Գահն իմ առ քեզ պատկանի. թո՛ղ թէ 'ի զեղջ ինչ եկիր,
Այլ յառաջ քան ըզչու իմ ըզքեզ 'ի յայն յարուցիր՝
Եթէ միայն կամիցիս զի սիրելին ինձ ձեռն այն՝
Որդեակքն իմ՝ արժանի կէտ դորովոյս հայրական,
Քսիփարէս, միով բանիւ, եղեալ 'ի քեզ ամուսին՝
Ի փառնակեայ զվրէժ իմ առցէ և հատուսցէ քեզ զպարտն իմ,

ՄՈՆԻՄԷ

Քսիփարէ՛ս, նա ինքքն, տէ՛ր։

ՄԻՀՐԴԱՏ

Այո՛ նա ինքքն, տիկի՛ն։

Այլ վասքն է՞ր յայդ անուն խառովք 'ի հոգւոջ քո ծնանին,
Ո՞ զքեզ ընդդէմ յարուցանէ այսր ընտրութեանն իմ արդար,
Արհամարհա՞նք ինչ ոգւոյդ՝ յոր յաղթելչէ քեզ հընար։
Ըզնոյն ահա երկրորդեմ, նա է միւս ոմքն ես։
Նա որդի իմ յաղթական, որ սիրեն զիս՝ զոր սիրեմն,
Հակառակորդն Հռոմոց՝ ժառանգորդ և ապաւէն
Պետութեան իմ և անուան որ ծքնցի յինքքն անդրէն։

Եւ իշխեցեալ թէպէտ ի՛ցես խոստանալ զսէր քո այլում,
Ոչ աւանդել զքեզ կարեմ բայց թէ 'ի ձեռըս նորուն։

ՄՈՆԻՄԷ

Զի՞նչ ինչ ասեսդ։ Ո՛վ երկինք. ի՞ցէ՞ քեզ մարթ հաւանել...
Առ իմէ՞, տէ՛ր, առ իմէ խընդրես սապէս զիս փորձել։
Դադարեա 'ի խանդելոյ ըզհոգի իմ վըշտացեալ.
Գիտակ եմ զի միմիայն վասըն քո եմ վիճակեալ.
Գիտեմ զի յայսմ վայրկենիս՝ սակս միութեանդ հանդիսին,
Պատրուճակըն, ո՛վ տէր, մեզ ըսպասէ անդ 'ի բագնին։
Երթիցուք։

ՄԻՀՐԴԱՏ

Նըշմարեմ քաջ զի զուր լիցի ինձ ճըգնել.
Ահա, տիկի՛ն, փառնակեայ կամիս զանձըն քո պահել։
Արհամարհանք քո անիրաւ ծանօթ ինձ են միշտ և յար,
Յոր վիճակի աւասիկ նա և որդին իմ չքաւառ։

ՄՈՆԻՄԷ

Ատե՞մ ըզնա։

ՄԻՀՐԴԱՏ

Տիկի՛ն, մի ևս ըզդըմանէ խօսեսցուք.
Յարատեւեա՛, բորբոքեա՛ց այպնալից սիրոյդ բոցիւք։
Մինչ ես դընամ ընդ որդւոյն իմ՝ 'ի հեռաւորս քոց յաչաց
Խընդրել 'ի ծագս աշխարհի մեզ դերեզման իմն փառաց,
Այլ սակայն դու ընդ եղբօրն իւր ծառայեա՛ աստանօր,
Եւ վաճառեա՛ Հոռոմոց այսպէս զարիւնըն քո հօր։
Օն ուրեմն. չդիտեմ պատժել զարհամարհանս քո լաւ ևս՝
Բայց թէ ես ինքն եղեալ ըզքեզ յանարգասէրն իւր 'ի ձեռս։
Եւ յայսմ հետէ զփառաց քոց առանց ինչ փոյթ ունելոյ՝
Ըզ յիշատակ քո անգամ կամիմ ջնջել 'ի յուշոյ։
Աղէ՛, տիկին, երթիցուք։ Գընամ ես ըզձեզ 'ի զօդել։

ՄՈՆԻՄԷ

Երանի թէ կամէիր դու բիւր մտհու զիս պատժել։

ՄԻՀՐԴԱՏ

Առաւիր հակառակիսդ · ըզդամ ըզմիտս զըլացմանդ ։

ՄՈՆԻՄԷ

Ցոր ծայրայեղ աղէտս , տէ՛ր, բըռնադատեալ դտանիմ արդ ,
Այլ հուսկ ուրեմն հաւատամ քեզ, և ոչ խորհել կարեմ ես
Թէ 'ի կեղծել այսպէս ընդ ձիգ զանձնըդ ստիպել կարասցես։
Վըկայ են դիւք՝ զի հաճելի առ քեզ լինել որոշեալ՝
Հոգին իմ ամենեւին զինքն առ 'ի բաղդն էր լքեալ։
Սակայն եթէ տըկարութիւն ինչ մարթեցաւ զիս խռովել,
Թէ անկ եղեւ սըրտին իմ բոլոր ճըգամբն իւր զինել,
Մի՛ իցէ քեզ կարծել բնաւ , տէր , թէ հաւակն իմ յուզմանց՝
Փառնակէս արժեալ իցէ չիտ մի իմոց արտասուաց ։
Այլ որդին քո յաղթական զոր շընորհօք քովք յարդես ,
Կենդանին այն քո պատկեր ընդ որ հաճիսդ մեծապէս ,
Հակառակորդն Հոռոմոց՝ միւս ոմն դու՝ վերջապէս
Քսիփարէս , տէր թագաւոր , զոր ինձ սիրել հրամայես . . .

ՄԻՀՐԴԱՏ

Սիրե՞ս ըզնա ։

ՄՈՆԻՄԷ

Թէ զիս առ քեզ վիճակեալ ոչ էր բաղդին՝
Երանութիւն իմ մեծ լինէր ունել ըզնա ամուսին ·
Զառհաւատչեայս զայս առ իս մինչ առաքեալ քո չև էր՝
Մեք սիրէաք զմիմեանս . . . Զդոյնս երեսացդ շըրջես , տէր ։

ՄԻՀՐԴԱՏ

Ո՛չ՝ տիկի՛ն , բաւ է այդքան ։ Երթամ ըզնա քեզ յըղել։
Ե՛րթ ժամանակ է մեծագին , 'ի կիր զայն պարտ է ածել ·
Ըզյօժարումդ 'ի հպատակել առ իս քաջ իսկ տեսանեմ ·
Շընորհունակ եմ՝ 'ի քէն ։

ՄՈՆԻՄԷ ('Ի ԴԻՒՆԷՆ)

Երկի՛նք · դաւեա՞լ ինչ իցեմ։

ՏԵՍԻԼ Զ·

ՄԻՀՐԴԱՏ

Սիրեն զիրեարս · ուրեմն ըզմեօք խաղ առնէին սայք այսպէս։
Ո՛վ որդիդ ապաշքնորհ, դու 'նդ ամենից հատուսցես։
Կորիցե՛ս դու։ Գիտեմ իսկ ցորչափ անուան քո հրոչակ
Եւ լաւութիւնք քո սափասուտք են թելադրեալ զիմն բանակ։
Ո՛վ նենդաւորդ · կամիմ հարուածս անվրիպելիս քեզ հանել։
Առ 'ի զքեզ չիք առնել անշուշտ՝ պարտ է զըմբոստս նախ քերքել,
Եւ զառաջոյ իմ առաքեալ ըզխռովայոյզս ամենայն՝
Ղակիչս առիս պահել զօրաց հաւատարիմքս միայն,
Երթայց հապա · բայց առանց ինչ յայտնելոյ դէմս վրթարեալ՝
Կեղծեցիկ ևս ժամանակ մի որպէս սկիզբն եմ արարեալ։

ԱՐԱՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՄՈՆԻՄԷ, ՓԻԴԻՄԷ

ՄՈՆԻՄԷ

Ո՛վ Փիդիմէ, յանուն դից, ըզբաղձանս իմ կատարեա՛.
Երթ՝ տես զինչ անցք անցանեն, և՝ եկ պատմել ինձ ըզնոսա.
Ոչ ինչ գիտեմ. սակայն միտք իմ հանդարտել ոչ կարեն.
Հազար կասկածք սոսկալիք զոգիսըն իմ կափառեն։
Քանի յամէ Քսիփարէս, և ո՞ւստ՝ յապաղդ այդ իցէ,
Գալ կատարել զփափաքանս զոր հայրըն իւր վաւերէ։
Հայրըն իւր 'ի Թողուլն զիս՝ դընայր յըղել զնա ինձ ատտ....
Սակայն կեղծէր նա Թերեւս, պարտէր ըզբնաւն կալ յուրատտ։
Կեղծէր արքայն։ Եւ ես զիսորհուրդս մըտաց իմոց մերկացեալ....
Ո՛վ աստուածք, ը.քանէի՞ք 'ի յայս վըտանգ զիս՝ Թողեալ։
Հընարաւո՞ր է արդեօք զի առ զայրոյթըս նորին
Անհանգուշն իմ սէր իցէ մատնեալ զիմքս սիրելին։
Սակայն զի՞նչ, ո՛վ պայազատդ. մինչ՝ լի սիրով ծայրայեղ՝
Առ 'ի զգաղտնիս իմ գիտել արկանէիր զիս 'ի նեղ,
Անդբթագոյն զբլացմամբ բազմիցս 'ի քէն ծածկեցի.
Առ կորզելոյդ զնա յինէն ես իսկ ըզքեզ պատժեցի. (1)
Եւ մինչդեռ հայր քո Թերեւս 'ի կասկածանս է 'ի քէն,
Զի՞նչ ասեմն. մի՛նչ, ո՞ գիտէ., 'ի վըտանգի կեանք քո են,

---

(1) Ակնարկէ 'ի Զ. Տեսիլ Բ. Արարքին, յորում Մոնիմէ պատուիրէ Քսիփարեայ խոյս տալ յար յերեսացն իւրոց, այսու պատուէրիւն պատժեալ համարի զՔսիփարէս վասն կորզելոյն նորա 'ի նմանէ զգաղտնիս սիրոյն։

Ըզքէն խօսիմ. և հեշտապէս 'ի խաբիլ զանձն իմ թողեալ՝
Ցուցանեմ ձեռին հօր քո զսիրտն յոր հարուածս խնդրէ տալ։

ՓԻԴԻՄԷ

Ո՛հ, ըզնմանէ, տիկի՛ն, յաւէտ արդարապէս խօսիցիս.
Արքայ ոմն մեծ խոնարհի՞ մինչ 'ի կելուրս այդպիսիս։
Ո՛ զնա գիտաց ըստիպել 'ի յայդ դարձուածքս ճարտար,
Մինչ դու գնայիր անմրուունչ յառաջ քան զինքն 'ի տաճար։
Կամէ՞ր մատնել 'ի կորուստ զորդին իւր յոյժ սիրելի։
Մինչեւ ցայս վայր ելք իրացն զխոստմունսն առնեն հաւաստի.
Ասէր նա քեզ, տիրուհի՛դ, թէ կարեւոր խորհրդիւ՝
Ցանկամբս իւր՝ բբռնաբարեալ է թողուլ զքեզ 'ի վաղիւ.
Այս եթ խորհուրդ զբաղէ ըզնա. և ըզչու իւր հապճեպեալ՝
Ինքն իսկ թոպրէ զամենայն՝ 'ի ծովեզերքն կացեալ.
Նաւատորմիլն իւր յամէն կոյս բեռնաւորի 'ի սպայից,
Եւ քսիփարէս ընկերէ ամէն ուրեք իւր քայլից։
Նախանձամոլ ոսոխի այսպիսի՞ ինչ է ընթաց.
Եւ ո՞ տեսեալ է երբէք եղծիլ խօսիցն 'ի յարդեանց։

ՄՈՆԻՄԷ

Սակայն փառնակ յարգելանս արկեալ նորուն հրամանաւ
Գտանէ 'ի նմա ըզխբստութիւն ոսոխի իմն ըզբընաւ.
Եւ քսիփարեայ առաւե՞լ շնորհս արասցէ, ո՞վ փիդիմ։

ՓԻԴԻՄԷ

Պատուհասէ նա 'ի փառնակ ըզհոռոմոցն մբտերիմ.
Սիրոյ թեթեւ են կարիք 'ի կասկածանս իւր արդար։

ՄՈՆԻՄԷ

Փաստից քոյոց տեղի տամ ցորչափ իցէ ինձ հընար,
Որք փարաւազս տան սուն ինչ տուայտանացս աղեկէզ.
Սակայն ահա և ցարդ ևս ոչ երեւի քսիփարէս։

ՓԻԴԻՄԷ

Սին վբրիպանք տարփածուաց՝ որք ակաղձեալք 'ի դեղձից՝
Կամին զի դէպք բնաւք տեղի տացեն իւրեանց հաճոյից,

Եւ որք յար փոյթք 'ի դրդռիլ 'ի չքնչեենեաց իսկ խոչից . . . ։

ՄՈՆԻՄԷ

Է՛հ, Փիդիմդ իմ, ո՛ կարասցէ դող խելամուտ այդր հրաչից.
Ցետ երկեմեայ տուայտանաց՝ զոյց դու գիտես զծանրութիւն,
Զի՛նչ, կարացից ոգի առնուլ իբր 'ի նուագ առաջին,
Ա՛հ, սիրելի՛դ իմ իշխան, ընդ քեզ տեսի՞ց զիս զօդեալ.
Եւ անխոհեմն իմ գորով ոչ թէ 'ի վտանգ զկեանսդ արկեալ,
Այլ և դու իսկ զպարտուց քոց և ես զիմոց զդաստ բարուց՝
Տեսցուք զսէր մեր պրսակեալ՝ սէր մաքառեալ 'ի յոգնուստ.
Եւ լիցի ինձ յաւուրս ամէն հաւաստել քեզ զի սիրեմ։
Ընդէ՞ր ոչ գաս։

ՏԵՍԻԼ Բ

ՄՈՆԻՄԷ, ՔՍԻՓԱՐԷՍ, ՓԻԴԻՄԷ

ՄՈՆԻՄԷ

Տէր իմ, արդ եւբս խօսէի ես ընդքէն.
Եւ ոգի իմ ընձիւք խնդրէր աստանօր զքեզ տեսանել,
Եւ առ քեզ . . . .

ՔՍԻՓԱՐԷՍ

Ահա ժամ է մինա բարեաւ քեզ ասել։

ՄՈՆԻՄԷ

Մինա բարեա՛ւ.

ՔՍԻՓԱՐԷՍ

Այո՞ տիկին, և ցկեանս իմ բինաւին։

ՄՈՆԻԷ

Զի՞նչ լսեմ։ Ասէին ցիս . . . Ո՛հ, ուրեմն զիս մատնեցին։

ՔՍԻՓԱՐԷՍ

Տիկի՛ն, ո՞ր հակառակորդ գաղտնածածուկ՝ ոչ գիտեմ,

Յայտնեալ զգաղտնիս մեր՝ զքեզ մատնէ և 'ի կորուստ զիս վարէն,
Թագաւորն՝ որ մերթ բանիցն փառնակեայ ոչ տայր հաւատ,
Զամենայն որ 'ի սիրտս մեր անցանեն՝ գիտէ արդ.
Կեղծաւորէն և գրգռէ զիս՝ ծածկէ զխորհուրդս իւր մբտաց.
Այլ զարգացեալ եմ 'ի ծոց իւր յանտիսական հասակաց՝
Ամենից իւրոց շարժմանց եմ կարի քաջ փորձառու,
Եւ 'ի հայեացս իւր կարդացի զմօտալուտ քէն վրրիժու,
Շտապէ ե'ի չու ստիպէ զամենն զոյց խարուանքն իմ կարէին
Ի յբմբոստնուլ թելադրել զվբշտակցութիւնքն սբրտին։
Նբշմարեցի զի բռնանայր յանձն 'ի կեղծել ձիրս շնորհաց,
Եւ Արբատայ միմիայն բան զտարակոյսն իմ փարատեաց.
Նա գիտաց մերձենալ յիս, և արտասուք յականողիս,
«Գիտէ նա զբնաւն. աճապարեա՛ զերծիր յաստուստ» ասէ ցիս,
Զարհուրեցոյց զիս այս բան առ վբտանգի թագուհւոյս,
Եւ այս միակ քաղցրիկքն հոգ վարեալ ածէ զիս յայսկոյս։
Վասքն քո իսկ երկբնչիմ, ե'անկեալ 'ի գուճքս գամ ես,
Ընդեղձանել քեզ, դշխո՛յդ իմ, և զքեզ յողոք շարժել քեզ։
Կախեալ դբնիս դու աստանօր ընդ ձեռամբ անագորոյն
Զոր դուն ուրեք ահաբեկէ արիւնն ադամ սիրելոյն.
Եւ ոչ իշխեմ ասել քեզ թէ յորպիսի անգթութիւնս
Նախանձախոցքն Միհրրդատ փբրթի յաճախ 'ի զայրոյթս։
Թերեւս առ իս միայն ելցեն ըսպառնալիքն իւր մոլի,
Թերեւբս զիս կորուսեալ՝ քեզ խբնայել կամիցի։
Հաճեա՛ց, յանուն դից, հաճեա՛ց օգուտ անտի քեզ քաղել
Մի՛ նորանոր ժբխտութեամբ ելցէ քեզ զնա գբրգռել։
Ցորչափ նբւազ սիրես ըզնա՝ նոյնչափ հաճել նմա ջանա՛.
Կեղծաւորեաց, գո՛ւն գործեա, խորհեա՛ց զի հայր իմ է նա
Ապրեա՛ դու. և թոյլ տուր ինձ զի յաղէտս իմ ամենայն՝
Առ սէր քոյ եղէց պատճառ արտասուելոյ մի միայն։

ՄՈՆԻՄԷ

Ո՛հ, ես ըզքեզ կորուսի։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ո՛վ Մոնիմէ վեհասիրտ,
Զարակըտուան իմ աղետից մի՛ համարիր զքեզ առիթ.
Եզականք քո լաւութիւնք չեն բնաւ որք չար ինձ առնեն.
Զբաւական ոմն եմ ես՝ մըշտահալած 'ի բաղդէն.
Եւ է սոյն իսկ բաղդ որ յինէն զդորոփանս հօրիմ կորզեաց,
Որ նախաձորդ զնա ինձ յարոյց, յբմբոստ ըզմայրն իմ սադրեաց
Եւ աւասիկ յարուցանէ 'ի ժանտաժուտս յայս վայրկեան՝
Գաղտնորոգայթ մի թըշնամի 'ի մատնել զմեզ զերկոսեան.

ՄՈՆԻՄԷ

Եւ զի՞ արդեօք. անգիտե՞ս զթըշնամին զայն տակաւին.

ՔՍԻՓԱՐԷՍ

Ի յաւելուած դառնութեանց՝ ոչ ճանաչեմ զնա, տիկին.
Երանի՛ թէ մարթէի նախ քան 'ի սպանդ իմ վարեալ՝
Ծակոտել զսիրտն նենգաւորին որոյ ելցէ զիս ցուցեալ։

ՄՈՆԻՄԷ

Ապա, ո՛ տէր. պարտ ինձ է ածել ըզնա քեզ'ի յայտ.
Մի՛ 'ի խընդիր լիցիս այլուր դաւանենգի թամիդ այդ,
Տո՛ւր ինձ զհարուածդ, ոչ պատկառանք ինչ եղիցին քեզ արդեալ.
Ես արարի զայդ ամենայն, և զիս պարտիս դու պատժել։

ՔՍԻՓԱՐԷՍ

Դո՞ւ։

ՄՈՆԻՄԷ

Ո՛հ, Իշխանդ, թէ գիտէիր որպիսի իմքն կելիւք
Անագորոյնքն այն եկն դաւադրել զիմն գորովիւք.
Ո՞րպիսի սերտ սիրելութիւն կերպարանէր վասըն քո,
Տեսանել զքեզ ինձ ամուսին՝ ցուցանէր զանձն հաճ և գոհ.
Ո՞ չհաւատայր ... Սակայն ոչ, սէրն իմ՝ յաւէտ կտսկածոտ՝
Պարտէր ըզքեզ չբ մատնել չընորհացն իւր ժանտաժուտ։
Ատուածք որ յիս ներշընչէին՝ ե՛ոյց չանսացի ես բարւոք՝
Բերանսեցին զիս երիցս գաղտնածածուկ խորհրդովք,
Յամառեալ պարտէր ինձ յայդմ. մինչ'ի վախճան ինձ պարտէր...
Զի՞նչ գիտեմն. պարտ էր ինձ ոչ գոլ քեզ այդչափ վշտաբեր.

Պարտ էր այո՛, ինձ երկնչել 'ի ձրրիցն իւր թունալից ·
Եւ եթէ դու ներեսցես ինձ՝ ես անձամբ զանձն պատժեցից ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Զի՞նչ, տիրուհիդ · դո՞ւ իցես · սէր ինքն որ զիսն վրտանգէ ·
Եւ չարիք ինձ հասանեն 'ի յայդ չբքնաղ 'ի յառթէ ·
Վրսեմն քո սէ՞ր իցէ մատնեալ զգորովալիրն մեր գաղտնիս ·
Եւ երանեակ զիս արարեալ՝ անձամբ ըզքէն գանգատիս ։
Եւ զի՞նչ այլևս խընդրեցից · հաւատարիմ միշտ սիրոյս
Մեռայց փառօք ։ Այլ իմին բաղդ կոչէ ըզքեզ 'ի գահոյս ·
Հաւանեա՛ց յայդ, տիրուհի՛դ իմ · ե՛ոչ հակառակ կացեա՛լ ևս
Հան 'ի յամբովկ ըզհարսանիսդ որ ամբառնայ անդ ըզքեզ ։

ՄՈՆԻՄԷ

Եւ զի՞նչ արդեօք · կամի՞ս զի առն բբռնաւորի հարսնացայց՝
Ոյր նողկտալին տրուփանք քեցէ ըզմեզ յաւերժ 'ի միմեանց։

ՔՍԻՓԱՐԷՍ

Խորհեա՛ զի յայսմ առաւօտու՝ հնազանդ ըզձիցն իւր հեշտեաւ՝
Ուխտէիր առն լինել նբմա և չտեսանել զիս բընաւ ։

ՄՈՆԻԽԷ

Է՛հ, ծանօ՞թ էր ինձ յայնժամ տմարդութիւն իւր ամենայն ·
Ո՞չ կամէիր և դու իսկ զի 'նդ կըտղանս իւր լեալ հաւան՝
Յետ ըզքեզ տեսանելոյս 'ի հարուածոցն ծակոտեալ՝
Գընայի անդ 'ի բագինն բբռնաւորին հարսնանալ,
Եւ զի 'ի մէջ ձեռին իւրոյ թաթաւելոյ յարիւն քո
Մերձեցեալ զձեռն դընէի, ո՞հ, ըզձեռն քոյդ սիրուհւոյ ։
Մեկնեա՛ց աստի, և խորհեա՛ զանձնդ պահել յիւրոց զայ-
րութիւն՝
Թանց աստանօր թարթափելոյ առ յորդորանըս տալ ինձ ։
Ներշընչեսցեն յիս երկինք զոր ինչ առնել պարտ իցէ ։
Այլ զի՞նչ լիցի, աստուածք մեծք, թ՝ եկեալ նա զքեզ
աստ դըտցէ ·
Զի՞նչ ասեմն · ոմբն գայ այսր ։ Երթ՝ վազեա՛ց և ապրեսջիր ·
Համբե՛ր գեթ առ 'ի գիտել՝ ո՛ր լիցի իմ ճակատագիր ։

ՏԵՍԻԼ Գ.

ՄՈՆԻՄԷ, ՓԻԴԻՄԷ

ՓԻԴԻՄԷ

Տիրուհի՛դ իմ, առ ո՞ր 'ի վտանգ արկանէր զկեանս քսիփարէս,
Ահա՛ արքայն։

ՄՈՆԻՄԷ

Հա՛ս յօգն իւր 'ի ծածկել զելն 'ի վայրէս։
Փութա՛ և մի՛ թողուր զնա. և պատուիրեա՛ զգուշանալ
Ի վքճռելոյ բաղդ անձին մինչչեւ է զիմն դիտացեալ։

ՏԵՍԻԼ Դ.

ՄԻՀՐԴԱՏ, ՄՈՆԻՄԷ

ՄԻՀՐԴԱՏ

Երթիցուք ա՛ղէ, տիկին։ Գաղտնախորհուրդ իմն առիթ
Ըզմեկնիլն իմ արագէ և տայ թողուլ ըզտեղիդ։
Մինչ զօրականն իմ՝ պատրաստ արքային իւր հետեւիլ՝
Անդրէն 'ի նաւս ելանէ խաղալ ընդ իս և մեկնիլ,
Ե՛կ արի, և զի խոստումն իմ լրացեալ 'ի բաղնին
Յաւէրժական անդ 'ի զօդս խառնեսցէ զմեզ զերկոսին։

ՄՈՆԻԷ

Ըզմեզ, ո՛ տէր։

ՄԻՀՐԴԱՏ

Եւ ի՞բր, տիկին. համարձակի՛ սդ դանդաղել։

ՄՈՆԻՄԷ

Ո՛չ ապաքէն արդիլեր դու զիս 'ի յայդ իսկ խորհել։

ՄԻՀՐԴԱՏ

Այնպէս պատշաճ էր յայնժամ, մոռասցուք զայն, ո՛ տիկին.
Իսկ յայսմհետէ խորհեա՛ միայն պատասխանել սիրոյն իմ.
Խորհեա՛ զի զերթ ըստացուած իմն սիրտ քո տուեալ է առ իս։

ՄՈՆԻՄԷ

Սակայն, ո՛տէր, է՞ր երբեմն աղատ 'ի կամս թողեր զիս։

ՄԻՀՐԴԱՏ

Զի՞նչ. ըզբաղեալ քո 'ի միտս վասըն որդւոյն իմ անձիր՝
Համարէի՞ր . . . .

ՄՈՆԻՄԷ

Այսպէս ապա, տէ՛ր, ուրեմն զիս խաբէիր։

ՄԻՀՐԴԱՏ

Ո՛վ մատընտուիդ, յարատեւել յայդ խօսս է քեզ ճահաւոր,
Քեզ՝ որ սէր իմն 'ի սրտի պարարելով նենգաւոր՝
Հաղբս ինձ պատրաստէիր խաւարադէմ մատնութեան՝
Մինչ ես ըզքեզ ամբառնայի 'ի ծագ փառաց անսահման,
Ո՞չ ևս 'ի յուշ քեզ լինի, սիրտ յողդողդուն և պատիր,
Զի՝ քան զՀոռոմս ամենայն անձամբ անձին դաւադիր՝
Ցոր վեհագոյն 'ի դասուէ հաւանեցայ խոնարհել
Առ ամբառնալ զքեզ 'ի դահ, յոր չիշխէիր իսկ հայել։
Մի՛ նայեսցիս յիս որպէս յոմն յաղթահարեալ և թափառ
Տե՛ս յիս դարձեալ զնոյն յաղթականն և ահաւորն յամեն վայր։
Խորհեա՛ց որով եռանդեամբ զքեզ յեփեսոս սիրեցի՝
Եւ 'ի հարիւր թաղաւորաց դբստերց ըզքեզ ընտրեցի.
Եւ զբլացեալ քոյդ աղագաւ առ դաշնակիցս երանեակ՝
Քանի՞ քանի առ ոտքս քո դընէի դեհս և վիճակ։
Ա՛խ, եթէ յայլ իմն 'ի սէր անընկճելիդ միտութիւն
Ցաւուրց անտի առնէր զքեզ անբզդայ չնորհին իմում,
Ընդէ՞ր խընդրել 'ի հեռաւորս ամուսին ոմն նողկալի.
Եւ առ իմէ՞ լքեալ մինչև եղեալ քո յուղի.
Ըսպասէի՞ր՝ առ առնել ինձ զդաւանութիւնդ սրգալից՝
Զի ոխերիմն բաղդ խըլեսցէ յինէն որ ինչ մընայր ինձ,
Եւ զի՝ յամէն 'ի կուսէ տեսեալ զանձն իմ կոչկոճեալ
Ի քեզ և եթ ըսփոփանքս գբտանել ինձ մընայր։
Սակայն մինչդեռ ըզթըշնամանսդ զայդ մոռանալ խընդրեմ ես
Եւ 'ի սրտէն իմմէ խպառ ծածկել զայդ տիպ տըխրատես,

Դու ժըմերտեսդ զանցեալն աչաց իմոց առնել յանդիման,
Եւ մինչդեռ ետն եմ վբթարեալ՝ զինէ՞ն լինիս ամբաստան,
Տեսանեմ զի սակս նենդողին յոյս աղաւաչ պատրէ զքեզ.
Ցո՞ր փորձութիւնս, ո՛վ երկինք, ըզմիհրդատ արկանես։
Որով ծածուկ հրապուրիւք մարթ լիցի ինձ սանձարկել
Ըզզայրուկսն իմ անաչառ՝ դիւրաբորբոք 'ի պատժել։
Քաղեա՛ օգուտ 'ի վայրկենէս զոր շնորհէ սէրն իմ առ քեզ.
Իբր 'ի վերջին ասեմ 'ի նուագ, ե՛կ հրամանն իմ է այսպէս։
Մի՛ յանձն քո բընաւին վտանգս աւելորդս ձըգեսցես
Սակս որդւոյս լըպըրշադէմ զոր ոչ այլևբս տեսցես։
Ոչ զարդարեալ զքեզ վասըն իւր ուխտիւք որ յիս պատկանին՝
Կորո՛ նորուն ըզյիշատակ և զյոյս տեսոյն բընաւին.
Եւ յայսմ հետէ ըզգայուն գըտեալ բարեացն իմ միայն՝
Արժանասջի՛ր ներելութեանց որ այժմ առ քեզ շնորհեցան։

ՄՈՆԻՄԷ

Ոչ մոռացեալէ իմ բնաւ որ երախտիք փոխադարձ
Հըպատակել պարտաւորեն զիս ընդ քոյոց հրամանաց.
Թէև երբեմն բարձր 'ի կարգ հասեալ նախնիքն իմ իցեն
Փառք նոցուն յայդչափ հեռուստ ոչ զնայեացս իմ խըստըզեն,
Ընդ միտ ածեմ յարգանօք թէ քանիսն իմ ծընունդ
Խոնարհագոյն է առընթեր հարսանեացդ այդ մեծաշուք.
Եւ հակառակ նախկինն իմ խորհրդոց և միտութեան
Առ որդին քո՝ մեծն ըզկնի քո քան ըզմարդիկ ամենայն.
Ցաւուր յորում 'ի ճակատն իմ եդաւ այն յաղեր՝
Ցուրաստ եղէ յիշխանէն և յանձնէն իմ իսկ, ո՛ տէր։
Երկոքեան իսկ համամիտք զոհել զանձինս մեր կամաւ՝
Ի մոռանալ զիս նա 'ի բաց գնայր յինէն իմն հրամանաւ։
Ընդ ըստուերաւ թագնութեան պարտ էր հըրոյս այս յատիչել.
Եւ ես իսկ ոչ կարէի ըզբաղդէն իմ տըրտընջել,
Զի հուսկ ուրեմն՝ քաղցրագոյն ըզձիցն իմոց վընասու՝
Ջերանութիւն գործէի դիւցազնի ոմն որպէս դու։

Դու միայն, տէր, դու միայն կորզեցեր զիս և հաներ
Ի հլութենէս յայսմանէ առ որ ուխտեալ իսկ իմէր.
Եւ զսրդաբերբն զայն սէր յոր յաղթեցի նուաճեալ՝
Ըզհուրն այն զոր կարծէի 'ի մոռացօնս յափուցեալ՝
Ի'ոյր շարժառիթն 'ի տեսոյն իմ գնայր 'ի բաց յաւիտեան,
Դաւանք քո զայն ըմբռնեցին՝ ւ'ածին զիս յայն 'ի հաւան (1)։
Զայդ խոստովան եղէ քեզ, պարտիմ'ի յայդբմ տեւել.
Ի նանիր գուն գործեսցես զյիշատակ իւր եղծանել.
Ի'ամօթապարտ դաւանութիւնդ այդ առ ոչ զիս ստիպեցեր՝
Կացցէ մնասցէ յաւիտեան անդ 'ի յուշին իմ 'ի ներ.
Անվբստահ համարեցիր ուխտին իմոյ միշտ ըզքեզ.
Եւ գերեզման, տէր, վասըն իմ լիցի նուազ տրխրատես
Քան զառաջաստ փեսային որ զիս այսպէս նախատեաց,
Որ զանոզորմն այս յաղթութիւն 'ի վերայ իմ յինքն շահեաց,
Եւ որ տաղտաղտ իմն առ իս յաւերժական պատրաստեալ՝
Յամօթ զերեսս իմ շառագնեաց սիրով որ չէր յինքն տուեալ։

ՄԻՀՐԴԱՏ

Այդ է ապա պատասխանիդ. ւ'առանց գոլ ինձ հաճելի՝
Տարամերժես ըզպատիւն զոր քեզ առնել խընդրէի.
Ի մի'ս առ քաջ։ Եւ ես սպասեմ զորոշումն իմ հաստատել։

ՄՈՆԻՄԷ

Ո՞չ, տէր արքայ, առաւիր կարծես սարսափ յիս ածել։
Ճանաչեմ զքեզ. գիտեմ քաջ զոր ինչ անձին պատրաստեմ,
Եւ տեսանեմ քանի՛ քանի չարիս 'ի գլուխ իմ բարդեմ.
Այլ խորհուրդ իմէ սահմանեալ, ոչինչ կարէ զիս շարժել։
Դատեա՛ ապա՝ 'ստ որում սապէս համարձակիմ քեզ խօսել
Եւ զանցանեմ անդր քան ըզչափն ըզդաստութեանն իմ նախկին
Ըստ որ մինչև 'ի յայս կէտ ոչ ելեալ իմ էր ըբնաւին։

---

(1) Vos détours l'ont surpris, et m'en ont convaincue. Մի՛ն բանին է — դաւանօք վերահասու եղեր սիրոյն իմոյ, և հաւանեցուցեր զիս տեւել յայնմ, մինչ ես մոռացմամբ չիջուցանել զնա կարծէի։

Ըղձբդաբերն իմ ըղձեռն դու քեզ գործի ընտրեցեր
Առ 'ի մրխել զաւակին քոյոյ 'ի սիրտ ըզսուսեր.
Ես ըզդաղտնիս մատնեցի անմեղապարտն իւր սիրոյ.
Եւ թէպէտ ոչ կորուսցէ բայց ըզդորով հօրն իւրոյ,
Մեռցի նա այդր աղագաւ։ Ոչ ուխտն իմ ե՛ոչ սէրս բոլոր
Այդր անողորմ խաբէութեանդ կարասցեն դոլ տբրիտուր։
Ցետ այսորիկ դա՛տ արա. կորո՛ զօրուարդս դբլխակառ,
Սպառազինեաց իշխանութեամբդ զոր յիւր վերայ ըստացար.
Ըսպասեցիր վբճռոյն իմոյ. դիւրին է քեզ տալ հրաման։
Թողեալ զքեզ աստ՝ համարձակիմ խընդրել 'ի քէն զայս միայն.
Հաւատա՛ ինձ (զճշմարտութիւն առ լաւութեան դաւանիմ)(1)
Զի ես միայն դաւեցի զքեզ՝ և գործակից ոչ է իմ,
Եւ զի կամք քո աղողուածով մեծաւ 'ի յանդ լինէին՝
Եթէ էր իմ, տէ՛ր, ունկընդիր եղեալ որդւոյ քո ձայնին։

ՏԵՍԻԼ Ե.

ՄԻՀՐԴԱՏ

Թողու զիս նէ և գընայ։ Իսկ ես լուութեամբ իմն ցածուն
Հաւանութիւն տալ երեւիմ ընդ լբրբութիւն իւր չուոյն։
Փոքբր միւս ևս և սիրտքն իմ՝ հակամիտեալ յիւրն 'ի թեր
Դատապարտ զիս էր կացուցեալ իբբ զանգութ ոմն բբռնասէր.
Ո՞ եմ ես, Մոնի՞մ է նէ։ Եւ ես իցե՞մ Միհբրդատ.
Ո՛չ՝ ոչ ևս ներելութիւն՝ ոչ ևս սէր յայդ ապիրատ։
Անդրադառնայ յիս զայրոյթն իմ, և ըսթափիմ ես 'ի յիս.
Ի մեկնիչն իմ տացից 'ի մահ զապախտաւորս իսկ զերիս։
Գընամ 'ի Հռոմ։ Եւ յայսպիսի նուիրական 'ի ձօնիս
Պարտ է ինձ հաշտ կացուցանել կատաղութեանն իմ ըզդիս։

---

(1) Իմա՛, զճշմարտութիւն ասել պարտիմ 'ի փառս կամ յաղագս առաքինութեան. Je dois à la vertu cette justice.

Զայս պարտիմ ես և կարեմ. չի՛ք օգնական ես իւրեանց,
Եւ խաղմարարքն իւրեանց համհարզք արդէն հեռի են յա-
փանց։
Ոչ ինչ խբտիր արարեալ թէ զո՛վ ատեմ՝ զո՛ սիրեմ,
Գնացից ըսկիզբն առնել 'ի Քսիփարեայ իսկ արդէն։
Այլ ո՞ր է այս մոլեգնութիւն 'ի յիս, և զինչ դադաշիմ.
Զոհել գընաս.... սակայն զո՞վ, չուառակա՛նդ—զքո զորդին.
Զորդիդ յորմէ Հռովմ սարսափի, ե՛որ թափեսցէ զվրէժ
իւր հօր.
Առ իմէ՞ հեղուլ զարիւն որ է ինձ յոյժ կարեւոր։
Ո՞հ, յայս վիճակն իմ սրդալից յորում եդ զիս իմ անկումն՝
Մինթէ աղէտքքն իմ թողի՞ն յիս բարեկամքս բաղում։
Խորհեցայց մակաւելի շահել զգորոշն իւր ոգւոյ.
Քինահանի ինձ պէտք են և ոչ եթէ սիրուհւոյ։
Նա զի՝ թէ հարկ է 'ի նմանէն զբրկել՝ ո՞չ լաւ իցէ ես
Թողուլ ըզնէ զաւակիս զոր ինձ պահել կամիմ ես։
Թողից ըզնէ։ Ջան վայրապար որ զիս հրմուտ եթ առնէ
Տըկարութեան ոգւոյն իմոյ որ հրապուրի յինքենէ.
Բորբոքիմ՝ սիրեմ ըզնէ. թող թէ ըզնէ վանեցից....
Ա՛խ, օճիր իմն է տակաւին՝ որ վասն ըզնէ պատժեցից։
Ո՞ր գթութիւն ունի զերկչոտն իմ զբզդացմունս կալանդեալ.
Զէ՞ իմ երբեմքն ըզփոքրագոյն զյանցանաւորքս դատեալ։
Ո՛վ Մոնիմէ, ո՛վ որդեակ։ Վարկպարագի բարկութիւն։
Եւ դո՛ւք՝ Հռո՛մք երջանիկք, վասքն ձեր ո՞ր բերկրութիւն
Թէ զկորանս իմ դիտէիք, և թէ համբաւ անստերիւր
Ըզպայքարացն իմոց անզօր ածեալ առ ձեզ էր ըզլուր։
Զինչ. երկուցեալ ընդ դաւանս ձեռացն ինձ յոյժ սիրելի՝
Ընդդէմ թունից՝ ամենայն սպառազինիլ փութացի.
Եւ գիտացի ճարտար իմն ճբգնութեամբ հանապազօր
Դիմագրաւել զոյժ դեղոցն մահահրաւէր և հրզօր.
Այլ, ո՛հ, բարեօք ես լինէր և ըզդօն յոյժ ե՛ռանեալ՝
Թէ ըզհերձակս վըտանգալից սիրոյն վանեալ և մերժեալ՝

Զբթոդուի լընանել թիւնապարար եռանդեամբ
Զայս սիրտ վաղուց սառուցեալ տարեացն իմոց ցբրտութեամբ։
Ընդ դրժընդակս այս ընդ չիրս ուստի՞ ինձ ելս գբտանել։

ՏԵՍԻԼ Զ.

ՄԻՀՐԴԱՏ, ԱՐԲԱՏԷՍ

ԱՐԲԱՏԷՍ

Տէ՛ր, զօրականք քո ամենայն զլանան յուղի ելանել։
փառնակ զնոսա արդելու։ փառնակ առնէ նոցա յայտ
թէ դու խընդրես Հրոմվմայ ընդդէմ վարել նոր իմն մարտ։

ՄԻՀՐԴԱՏ

Փառնակէ՞ս։

ԱՐԲԱՏԷՍ

Նա նախապէս ըզպահակս իւր հրապուրեաց։
Ի՝ անուանն միայն Հրոմվմայ ըզխրոխտադոյնս սոսափեաց։
Հազարաւոր վտանգս քաջքնելիս յաչքս իւրեանց պատկերեն։
Ոմանք փութան մոլեգնաբար յետս 'ի ծովափքն անդրէն,
Այլք որք 'ի չու էին արդէն՝ յալիս ծովուց տան զանձինս,
Կամ զգեղարդունս իւրեանց ցուցեալ ահաբեկեն զնաւաղինս։
Շրփոթ յամէն կոյս ծաւալեաց։ և թո՛ղ թէ մեզ անսայցեն,
Զհաշտութիւն պահանջեն, կամ անձնատուր դոլ ասեն։
Փառնակ նոցին կայ 'ի գլուխ, և շողոմեալ ղիրձս նոցուն
Հռովմայեցւոյն 'ի դիմաց խոստանայ այնց հաշտութիւն։

ՄԻՀՐԴԱՏ

Ո՛վ մատքնտուին։ Աճապարեա՛, եղբայր իւր ասա կոչեսցի։
Նա ըզհետ իմ եկեսցէ, յօգնութիւն հօրն փութասցի։

ԱՐԲԱՏԷՍ

Ոչ մեկին ինձ են միտք իւր։ այլ աղեկարծ իմն եռանդ
Ի՚ջոյց ըզնա և սուրհացոյց անդ 'ի նաւացն հանդերձուանդ։
Եւ ասեն իսկ՝ թէ 'նդ գումարտակս հաւատարիմ ըսպայից

Տեսին ըղնա խառնիլ ընդ մէջ ապբստամբացքն դընդից։
Ահա ամենն զոր գիտեմ։

ՄԻՀՐԴԱՏ

Ա՛խ, զի՞նչ է, զի՞նչ լսեմն արդ
Ո՛վ նենգաւորք, վրէժխընդրութիւնն իմ յապաղեաց կարի շատ։
Այլ ես 'ի ձէնջ չերկընչիմ բնաւ։ Թէ և ժբպիրհք յոյժ ի ցեն
Վրտարանջեալք առ երեսօք իմովք տոկալ չիչխեսցեն։
Բաւ՝ թէ տեսից միանգամ զայնս, և այլ ինչ ոչ իսկ խընդրեմ
Բայց առ աչօք նոցուն զենուլ զերկուս որդիս լրկտադէմ։

ՏԵՍԻԼ Է։

ՄԻՀՐԴԱՏ, ԱՐԲԱՏԷՍ, ԱՐԿԱՍ

ԱՐԿԱՍ

Տէ՛ր, ամենայն ինչ կորեաւ։ ապբստամբեալքն՝ փառնակէս
Եւ Հռոմք դան հասանեն շուրջ զամրոցիդ խրոնապէս։

ՄԻՀՐԴԱՏ

Եւ Հռոմ՞ք։

ԱՐԿԱՍ

Ի Հռոմոց դընին ափունքդ ծածկեալ,
Եւ սուղ ինչ ևս՝ ա՛հա գրտցիս 'ի յակառիդ պաշարեալ։

ՄԻՀՐԴԱՏ (՝՝՝ Ա՛խ՝՝՝)

Ո՛վ երկինք։ ճեպեսցուք։ Լուր։։։ 'ի խոշտանգանս իմ վրշտաց
Ոչ ընդ երկար վայելեսցես, ո՛վ թագուհիդ ուխտազանց։

ԱՐԱՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՄՈՆԻՄԷ, ՓԻԴԻՄԷ

ՓԻԴԻՄԷ

Յո՛վ սուրհանաս, տիրուհի՛դ իմ. ո՞ր յոյզք կարեաց կուրային
Եղեռնապարտ իմին ճըգունս տան քեզ փորձել քում յանձին
Եւ ի՞բր արդեօք. կարացե՞ր, անձամբ անձին քո անգութ,
Ինուիրական յապարօշէդ յօրինել կապ ժանտաժուտ.
Ո՞չ նըշմարեսդ զի աստուածք՝ առաւել ևս մեծագութք՝
Խորտակեցին նոքին իսկ 'ի ձեռին քո զայդ դըրոյսք (1)

ՄՈՆԻՄԷ

Զի՞նչ. և որո՞վ մոլեգնութեամբ՝ յամառեալ զհետ իմ պընդել՝
Կամի՞ս և դու ընդդէմ կամացս առ 'ի կեալ զիս ըստիպել։
Քսիփարէս ոչ ևս ապրէ. իսկ Թագաւորն յուսահատ՝
Անվրիպական իմին մահու եթ ըսպասեալ մընայ արդ.
Ի պատժապարտ ժըտութենէդ զի՞նչ խայրեաց կաս ակընկալ,
Ո՛վ նենգամիտ, կամի՞ս միթէ զիս փառնակեայ մատըն տալ։

ՓԻԴԻՄԷ

Ո՛հ, գէթ սակաւ ինչ համբեր զի համբաւ ինչ անստերիւր
Հաստատեսցէ զմեռանելն տարաբաստիկ եղբօրն իւր։
Ի չըփոթիդ այդ խառնաղանճ զոր մեք լուաք իսկ արդ ևս՝
Անտեղի՞ ինչ իցէ թէ աչք պատրեալք իցեն դիւրապէս։
Յառաջապէս, գիտես և դու, նախատալից հրաչակ իմն

(1) Մոնիմէ՝ կամեցեալ խեղդամահ զանձն առնել վարսակալիւն իւրով՝ ոչ աջողեցաւ խղելոցն նորա 'ի մէջ ձեռացն իւրոց։ Տես 'ի յառաջաբան հեղինակին։

Կարդեալ դրնէր զնա 'ի կողմն ապրստամբաց բանակին,
Եւ ահա այժմ ասեն քեզ թէ ինքեանք իսկ վտարանջեալք·
Զեղեռնաւորն իւրեանց զէնս ընդդէմ նորուն են շրջեալք·
Ըզմին միւսովքն դատեա՛, և հաճեաց ինձ շականջել···:

ՄՈՆԻՄԷ

Ոչ ևս ապրէ Քսիփարէս· ոչ է պարտ յայսմ երկբայել·
Ելք դիպաց ոչ հանին բնաւ ըզկասկածանս իմ 'ի զուր·
Թէպէտ և չէր իմ առեալ զարիւնաղանդբդ այդ լուր՝
Պարտ էր թուել զնա մեռեալ· և յայսմ վկայք են հրաշք
Արութիւն իւր և անուն առ Հռոմն յոյժ ահաւոր:
Ա՛խ, 'ի վաղուց հետէ պասքեալ յաշնուականդ այդ արիւն՝
Հբռովմ ունի արդ տյժմիկ անվրրէպ զիւր յաղթութիւն:
Ո՞ր թշնամի ըզբազուկ իւր դրնէր նոցուն յանդիման·
Այլ յո՞վ իշխես տալ զյանցուած քո, ո՞վ Մոնիմէ չուառական:
Զի՞նչ· տեսանել ո՞չ կամիս թէ դո՛ւ զնա խոշտանգես,
Ի՛'ի խարուանս իւր ամենայն զոճիր քո ոչ ճանաչես:
Քանի՛ քանի բսպանչաց ետու զնա պաշարել·
Զիա՞րդ մարթէր 'ի հարուածոցդ յայդ քանեաց նա զերծանել·
Ի Հռոմոց և յեղբօրէն ըզգուշանայր առաւիր,
Ո՛չ ընդնա ես իսկ մատնէի մոլեգնութեան հօրքն իւր:
Ես ինքն որ զայնս յարուցեալ նախանձաւորս իրերաց՝
Արծարծեցի զհուրքն զայն որ զամենայն մաղաղեաց:
Ես խանձողքս չբմորեց վրշկապարիս դրժոխոց՝
Զոր սատանքն Հբռովմայ կերպարանեաց և սքնոյց·
Եւ ես ապրեմ, և մինամ զի յարիւն այնց թաթաւեալ(1)
Փառնակ այսրէն եկեսցէ 'ի Հռոմոց ընկերեալ՝
Եւ առ աչս իմ փայլեցուսցէ զեղբայրադաւ իւր հրճուանս:
Այլ սակայն մահ՝ անյուսութեան հորդէ ուղիս բաղմաղանս·
Այո՛, անգո՛ւթ աղախինք, 'ի զուր ճրգունք ձեր ումպէտ՝
Ըզդամբանին ինձ փակեն ըզհամառօտն արահետ,
Հեշտի դրտից ես ըզմահ 'ի մէջ բաղկացքն իսկ ձեր:

(1) Իմա՛ յարիւն եղբօրն իւր և հօրն:

Եւ դո՛ւ՝ հիւսուա՛ծդ սրդադէմ, չրուառականքդ՝ յեզեր.
Դու շարժառիթ և վրկայ ցաւոց իմոց բընաւիցս,
Շամիրա՛կդ՝ զոր ես լուացի արտասուօք իմ հաղարիցս,
Փարթար աւուրցն իմ տուեալ և տուայտանացքս վախճան՝
Ո՞չ էր քեզ մարթ հարկանել ինձ ըսպաս մի մահական.
Կորեա՛ց, դրլա՛ յերեւելոյ աչացն իմոց տրխրատես,
Են՝ են այլ զէնք որք դիտասցեն յօգն ինձ լինել առանց քեզ
Եւ կորիցէ օրքն այն և ձեռքն այն մահաբեր
Որ վաղ երբեմն զքեզ զառաջինքն 'ի ճակատն իմ կապէր (1)։

ՓԻԴԻՄԷ

Գան առ այսր, տիրուհի՛դ իմ. և ես յուսամ զի Արկաս
Ուղղէ ըզքայլս իւր առ քեզ փարաւեալ զքոյդ արհաւրանս։

ՏԵՍԻԼ Բ

ՄՈՆԻՄԷ, ՓԻԴԻՄԷ, ԱՐԿԱՍ

ՄՈՆԻՄԷ

Լըրացեա՞լ է ամենայն ինչ, Արկա՛ս. ե՛անդուրթն փառ-
նակէս . . .

ԱՐԿԱՍ

Զամենից որ անցանեն՝ ոչինչ առ իս դու հարցցես,
Դըշխոյդ. պաշտօն մի յաւէտ ևս տրխուր ինձ յանձն արարին.
Եւ այս բաժակ մահահրաւէր ասէ քեզ զկամս արքային։

ՓԻԴԻՄԷ

Վատաբաղդի՛կըդ բամբիշն։

ՄՈՆԻՄԷ

Ա՜հ, որ լըրումն խընդութեան.

---

(1) Անուանքդ օրքն և յեռքն յոդնակի խնդրեն զբայս կոչէցէ և կապէր. այլ Ռասին բանաստեղծական և տաղաչափական իրաւամբ եզակի է եդեալ, և մեք նոյնպէս թարգմանեցաք։

Մատո՛, Արկա՛ս, ասասցես՝ որ զայդ յԲՂէ յիս՝ յարքայն,
Թէ յամենայն 'ի պարգեւացն զորս ետ ինձ իւր վեհութիւն՝
Զայս ընդունիմ իբր ըզյոյժ քաղցրն և իբրեւ զյոյժ ըղձալին։
Հուսկ ապա ահա հանգնում, և զերծ առնէ զիս երկին
Ի տաղտկալի ըսպասուց որք 'ի կեալ զիս ստիպէին։
Տիրուհի անձամբ անձին քաղցր ինչ է ինձ զի միանգամ
Կարացից գէթ ըստ կամն իմ ըզբաղդէն իմ տալ հրաման։

ՓԻԴԻՄԷ

Եղո՛ւկ։

ՄՈՆԻՄԷ

Կարճեա՛ զաղաղակդ, և ընդ անճահ քո լալիս
Մի՛ խառնվեսցես ըզվայելս երջանկութեան վայրկենիս։
Յայնժամ պարտ էր քեզ գեր գործել, Փիդի՛մ, թէ զիս սիրէիր
Յորժամ դըշխոյ տըխուր անուամբ եկին առ իս շքքաղդիր,
Եւ յորժամ քաղցր 'ի ծոցոյն քարշեալ ցունաց աշխարհին՝
Ի խուժադուժ յայս երկիր ըզտիրուհիդ ձըգեցին։
Վերադարձիր այժմ յերկիրդ երանաւէտ բնակչաց։
Եւ թէ անուն իմ առ նոսա պահի տակաւ անմոռաց,
Ասա՛ նոցա զոր տեսանեսդ, և զամենայն փառացն իմ
Զեղերականն ըզպատմութիւն արա՛ նոցա, ո՛վ Փիդիմ։
Եւ ո՛վ դու՝ որ 'ի սըրտէս՝ յորմէ պաշտեալ սիրեցար,
Նախանձաւոր ճակատագրաւն 'ի յաւիտեանս տրոհեցար,
Դիւցա՛զնդ, ընդ որ՝ 'ի կատարած կենացս թէպէտ և հասեալ՝
Եւ ոչ իշխեմ խընդրել 'ի նոյն գերեզմանի միանալ,
Ընկա՛լ աղէ՛ զայս պատարագ։ Եւ ի՞ցէ թէ սոյն իսկ թոյն
Ի քաւութիւն եղիցի այժմ արեանն իմոյ սիրելոյն։

ՏԵՍԻԼ Գ.

ՄՈՆԻՄԷ, ԱՐԲԱՏԷՍ, ՓԻԴԻՄԷ, ԱՐԿԱՍ

ԱՐԲԱՏԷՍ

Դադարեա՛, տիկին, կասեա՛ց։

ԱՐԿԱՍ

Եւ զի՞ գործեսդ, ո՛վ Արբատ։

ԱՐԲԱՏԷՍ

Դադարեա՛· և կատարեմ զոր հրամայեացն Միհրդատ։

ՄՈՆԻՄԷ

Ո՛հ, թողէ՛ք զիս····

ԱՐԲԱՏԷՍ· (ընկեցեալ ոտքն)

Դբլա՛՝ ասեմ, դադարեա՛ և թո՛յլ տուր ինձ,
Իշխանուհի՛դ, զի ըզկամս թագաւորին լրցուցից·
Ապրեա՛, և դու ինքնդ, Արկա՛ս, զաղողուածէ պաշտօնիս
Փութասցի՛ր՝ վազեա՛ց աղէ առ Միհրդատ տալ աւետիս։

ՏԵՍԻԼ Դ·

ՄՈՆԻՄԷ, ԱՐԲԱՏԷՍ, ՓԻԴԻՄԷ

ՄՈՆԻՄԷ

Ա՛յ անողորմդ Արբատէս, յոր չարիս զիս մատքն տաս·
Մինթէ՞ թեթեւ յոյժ թուիցի տակաւին իմն պատուհաս·
Եւ թագաւորն՝ ըզչարեալ ընդ կանխազրաւն իմ օրհաս՝
Ի յադուրդ քինուն իւրում կամի մահունս ինձ անբաւս։

ԱՐԲԱՏԷՍ

Ընդ հուպ ըզնա տեսցես աստ· և հաւատալ իշխեմ ես,
Եթէ դու ևքս ընդ իս ըզնա ինքքն ողբասցես·

ՄՈՆԻՄԷ

Զի՞նչ· արքայն····

ԱՐԲԱՏԷՍ

Արքայն 'ի ժամ իւր է հասեալ 'ի վերջին,
Եւ նքշմար իմն լուսոյ և եթ մընայ ինքեան, ո՛ տիկին·
Մեկնեալ՝ թողի արիւնաներկ ըզնա բարձեալ 'ի սպայից,
Եւ Քսիփարէս՝ արտօսր յական ըզհետ նոցուն գայ քայլից։

ՄՈՆԻՄԷ

Քսիփարէ՞ս. Ա՛հ մեծ աստուածք։ Խիթամ զի մի՛ 'քուն լիցիմ,
Եւ ոչ իշխեմ բայց երկիւղիւ հաւատոյ տալ ունկանն իմ։
Քսիփարէս կեա՛յ տակաւին. Քսիփարէս զոր իմ լալօնք....

ԱՐԲԱՏԷՍ

Կենդանի է լի փառօք բայց և ընկճեալ ընդ ցաւօք։
Ի յայսոսիկ վայրիս համբաւն մահուն իւրոյ սերմանեալ՝
Ո՛չ թէ ըզքեզ միայնակ տարաբարտուց է խռովեալ.
Հռոմ՝ որ զայդ հաւատէին 'ի սիւրուս 'ի ձայն բարձրալուր՝
Սառեցուցին զՀոգիս համայն 'ի սրգայինդ այդ 'ի լուր.
Եւ թագաւորն ինքն իսկ խաբեալ ետեղ արտօսրս առատ,
Եւ յայնմհետէ ըզգինուց իւր զաջողուածէն յուտահատ,
Վրտարանչող 'ի յորդւոյն յամէն կուսէ պաշարեալ,
Ցուսակորոյս յօգնութենէ՝ մերձ 'ի լինել ձերբակալ,
Եւ նշմարեալ՝ 'ի յաւելուած քինուն իւրոյ և ցաւոց՝
Խառն ընդ դրոշիցն իւրոց զարծուէնըչանն Հռոմոց,
Ոչ յայլ ինչ ևս տենչացաւ բայց ռահ հորդել իւր անձին (1)
Առ 'ի խուսել յեպերանացն անկանելոյ 'ի ձեռս նոցին,
Նա զառաջինքն փորձեաց ըզզօրութիւնս մահաբեր
Թունից զորս ինքն իսկ յաւէտ անվրիպելիս համարեր.
Այլ ըզդոսա եդիտ զամենն անազդեցիկս ա՛ապիկար։
«Ունայն նըպաստք, ասէ նա, ընդ որս եղէ 'ի պայքար։
Ընդդէմ թունիցն ամենայն կալ յապահովս հոգ տարեալ՝
Զարդիւնս նոցին կորուսի՝ առ որ մնայի ակընկալ (2)։
Փորձեսցո՛ւք այժմիկ դարձեալ զանխոտոր իմն այլ միջոց,
Եւ մահ անձին որոնեսցուք սրգաբեր յոյժ Հռոմոց։»
Զայս ասաց, և ձայնատուր առ անթիւ գունդս նոցին լեալ՝

---

(1) Իմա՛, անձին առնել. զի մի՛ գերի վարեսցի յորդւոյն իւրոյ Փառնակեայ և 'ի Հռոմոց։

(2) Ակնարկէ 'ի սովորութիւնն Միհրդատայ 'ի թոյնս որք յետոյ ոչինչ ազդեցին, մինչ նա կամէր անձին առնել նոքօք առ 'ի չանկանել կենդանւոյն 'ի ձեռս թշնամեաց։

Եւ ընդ բանին՝ ըզդբրունս սարաւութին տայ բանալ·
Ի տեսլեան անդ դիմացն իւր՝ որոյ վրսեան ցասութիւն
Գամու գամու զահ և զհոյն ցանեալ 'ի կարգս էնոցուն,
Էր տեսանել զդոսա զամենն՝ ընկերկելով յետ 'ի յետ՝
Ի յանջրպետ թողուլ մեր և ինքեանց լայն արահետ·
Ի՝արդէն ոմանք 'ի նոցունց սուրային՝ յահ պակուցեալ՝
Մինչև 'ի նաւս անկանել որք ասա զինքեանս են ածեալ։
Այլ ասացի՞ց և զայս, երկինք· 'ի փառնակեայ ողերձեալ՝
Եւ ամօթոյ 'ի սիրտս իւրեանց զյանդգնութիւն զարթուցեալ՝
Քաջալերին միւսանգամ, գան զթագաւորն հարկանել
Զոր մինացորդ ինչ զօրուն էր ընդ իս 'ի պաշտպանել։
Ո՞ կարասցէ պարզաբանել թէ ո՛ր ճրգամբ անակնկալ՝
Ո՛ր հարուածս ընկերելով 'ի հայեաց իւր քրստմնեցեալ,
Բաղուկն իւր փառաւորեալ երբև վերջին 'ի նրւադ՝
Այսքր մեծի դիւցազանդ ըղքաջութիւնս տարաւ յանդ։
Հուսկ՝ համակեալ 'ի փոշի և յապաժոյժ՝ և խոնջեալ՝
Մինչ չուրջ զիւրեւ 'ի դիակացն պարիսպ չքնաղ էր կանգնեալ,
Ահա այլ ինն զօրաբաժին յառաջ 'ի մեր կոյս խաղայր
Ընդ որ Հոռոմք առ 'ի խառնիլ տան հարուածոցն դադար·
Կամէին միահաղոյն նեղել ընկճել զՄիհրդատ։
Այլ նա ասէ ցիս «բա՛ւ այսքան, ո՛վ սիրելիդ իմ Արբատ·
Կարի յառաջ վարեցին զիս մոլեգնութիւն և արիւն·
Մատնեսցո՛ւք մի՛ մակաւելի ըզՄիհրդատ կենդանւոյն։»
Զոյդ ընդ բանին վաղվաղակի մբխեաց 'ի կուրծս իւր զսուսեր·
Այլ մահ դարձեալ 'ի խարեցեալ հոգւոյն իւր մեծ բաց խուսէր։
Անկաւ դիւցազն 'ի մէջ գրկացն իմ՝ ողողեալ 'ի յարիւն՝
Նրւաղեալ, ստկայն ցասնոյր ընդ յապաղելն մահուն·
Եւ գանգատեալ իսկ առ իս ըզմնացորդէն իւր կենաց՝
Վերամբառնայր միւսանգամ ըզձեռն իւր ծանրացած·
Եւ ցուցեալ բաղկին իմում ըզկայան սրրտին իւրոյ՝
Երեւէր հայցել ըզնորհ անխոտոր իմն հարուածոյ։
Այն ինչ ես իսկ ըմբռնեալ տարապայման 'ի վրշտաց՝

Պատառոտել մանաւանդ խորհէի ես անձամբ զանձն,
Ի՛ահա գոչիւն մեծաձայն յանկարծ զնայեացն իմ շրջեաց.
Եւ տեսի, ո՞ հաւատայր, տեսի՝ յամեն 'ի կողմանց
Ըզփառնակէս և զՀոռոմն՝ յաղթահարեալ և ընկճեալ՝
Զասպարէզն լքանել՝ 'ի նաւս իւրեանց խոյս տուեալ,
Եւ յաղթողին մերձեցեալ եկեալ յառաջ դէպ առ մեզ՝
Ցուճապելոցն իմ աչաց երեւեցոյց զՔսիփարէս։

ՄՈՆԻՄԷ

Արդա՛ր երկինք։

ԱՐԲԱՏԷՍ

Քսիփարէս հաւատարիմ միշտ կացեալ՝
Եւ զոր յաղդոջ պատերազմին դումարտակ մի վտարանջեալ՝
Շրջապատեալ պաշարէր եղբօրն իւրում հրամանաւ՝
Ի՛որ 'ի ձեռաց նոցուն ապա ճողոպրել զանձն մարթեցաւ,
Նեղեաց ըզբուռն ապրստամբս, և զմնացելոցն շահեալ սիրտ,
Յաղետալիցդ յայդ պահու՝ երանեակ և խրոխամիտ,
Հազար մահունս դիմադրաւեալ՝ յաղթանակ՝ եռանդավառ,
Հորդէր անձին մինչև առ հայր իւր ճանապարհ մեծափառ։
Դա՛տ արա՝ ո՛ր սոսափիւնք յաջորդ են այսր խընդութեան.
Բաղուկն իւր յոտս արքային դնելոց էր զինքն անկենդան,
Այլ ամենայն ոք փութացաւ՝ եկաց արդել մոլութեանն,
Ի պահուդ այդ տրխրատեսիլ հայեցաւ ինքն ինձ արքայն,
Եւ ասէ ցիս 'ի ձայն իմն զոր արձակէր դըժուարաւ,
«Վազեա՛ փրրկել ըզթագուհին՝ թէ ժամանակ դոյ տակաւ,»
Այս բան սարսուռ էարկ յիս վասըն քո և Քսիփարեայ,
Ընդ գաղտնի իսկն հրաման կասկածեցի և երկեայ։
Թէպէտ խոնջեալ էի բնաւին, բայց երկիւղն իմ և աւիւն
Յաճապարել գալ ետուն ինձ նորոդ իմն զօրութիւն.
Եւ հակառակ մերս աղետից՝ դընեմ զանձն իմ բարեբաստ
Խափան եղեալ հարուածոյդ որ կորուսէր զերկոսեանսդ։

ՄՈՆԻՄԷ

Ո՛հ, իբր շուարեալ իրաւապէս 'ի յայդ քանեաց արհաւրաց՝

Ողբամ զտրխուր ճակատագիր արքայիդ այդ մեծապանծ։
Եղո՛ւկ եղուկ. և երանի թէ անողորմ իւր բաղդին՝
Հընար լինէր ինձ անձամբ ձեռընտու ոչ դոլ ընաւին,
Եւ թէ՝ վրկայ սոսկ դրտեալ չարակտուտն իւր աղետից՝
Թանց մեղապարտ գոլոյ՝ ողբալ ըզնա այժմ մարթ լինէր ինձ։
Ահա գայ ինքն։ Զոր խռովով նոր յարուցանեն յոգին իմ
Ապաժոյժ հօրն, ո՛վ երկին, և արտասուք որդեկին։

ՏԵՍԻԼ Ե.

ՄԻՀՐԴԱՏ, ՄՈՆԻՄԷ, ՔՍԻՓԱՐԷՍ, ՓԻԴԻՄԷ, ՊԱՀԱԿՔ (Ցոր յեղեալ Մեհրդատայ)

ՄՈՆԻՄԷ

Զի՞ տեսանեմն, ո՛հ՝ ո՛տէր, և ո՞ր է այդ բաղդ քոյին։

ՄԻՀՐԴԱՏ

Դրլացէ՛ք, կասեցուցէ՛ք զլալոնս ձեր դուք երկուքին։
(Ցոյցեալ ղՔսիփարէս)
Բաղդն իմ նորուն 'ի գորովոյ և 'ի սիրոյն իսկ քումմէ
Ա՛յլ ըզգացմունքս և ոչ վրշտակցութիւն պահանջէ.
Եւ փառքն իմ՝ յաւէտ քան սքանչանալոյ արժանի՝
Ոչ է պարտ զի արտասուօք պատուակորոյս լինիցի։
Զտիեզերաց լուծի ըզվրէժ որչափ մարթ էր լուծանել.
Մահն և եթ ինձ 'ի յընթացս խորհրդեանս այս եալ արդել։
Ես Հռոմոյ և բբռնաւոր պետութեան միշտ ոխերիմ՝
Յանարգական նոցուն 'ի լուծ ոչ հակեցի ըզգլուխն իմ.
Եւ պարծել իսկ համարձակիմ զի հոյակապ 'ի յանուանց
Զորրս քէն՝ հանգէտ իմոյս՝ ընդդէմ նոցուն 'ի յայտ ած,
Ի՛ոչ մին դրնոյ ծանու ծախեաց նոցս քան զիս զյաղթութիւն,
Եւ ոչ աւուրբք վատախտարակ ելից զնոցուն պատմութիւն։
Իսկ երկինք ոչ հաճեցան զի իմ զխորհուրդս կատարեալ՝

Մահանալ զիս 'ի ծոց իւր տեսցէ Հռոմիմ մեղեղեալ։
Սակայն գոնեա հրճուանք ինչ զիս 'ի մահուս փոփոգեն,
Մեռանիմ 'ի թշնամեաց պատեալ զորս ես խողխողեմ.
Թանալ զձեռն իմ մարթ եղեւ ինձ յարիւն նոցա 'ի զոզիր,
Եւ նայեացն իմ վերջին ետես զՀռոմն փախչիլ ցան և ցիր։
Ընդ նբսիհդ այդ շնորհապարտ եմ յորդին իմ Քսիփարէս.
Նա խընայէ զօրհասքն իմ յերեսաց այնց ժանտատես։
Հի՞մ ոչ կարեմ տալ 'ի տրիտուր այդքր մեծի երախտեաց
Զամենայն զոր ունէր գահն իմ երբեմն՝ փառս վեհապանձ։

(Ա՝ Մ՝ՆԻՄ)

Դու եթ ունիս ըզտեղի գահոյիցն իմ և թագին,
Այժմ դու միայն մընաս ինձ. հաճեա՛ց զի զքեզ տայ նբմին,
Տիկին. և զիղիձս ընաւ զորքս մերթ պահանջէի ես 'ի քէն,
Սիրտն իմ արդ վասն Քսիփարեայ 'ի քէն խընդրէ զայնս ամեն։

ՄՈՆԻՄԷ

Ապրեա՛, ո՛ տէր, ապրեա՛ դու յերանութիւն աշխարհի
Եւ 'ի նորուն աղատութիւն որ հատատատ քեւ եթ պահի.
Ապրեա՛ դու յաղթանակել ընդ նբւաճեալ թշնամին,
Եւ թափել վրէժ . . .

ՄԻՀՐԴԱՏ

Բնաւն լրացեալ է և կեցի շատ իսկ, տիկին։
Եւ դո՛ւ՝ որդեա՛կ, խորհեա՛ 'ի քեզ, և մի՛ ընդ միտ հարցի քեզ
Թէ 'նդ դէմ այդքան թշնամեաց պաշտպանել զանձնդ
կարասցես։
Ընդ հուպ Հռոմն բովանդակ 'ի կորանացն դրդռեալք՝
Եկեսցեն այսր 'ի վերոյ քո յամեն կուսէ յարձակեալք։
Մի՛ ծախեսցես ըզժամանակդ զոր տայ փախուստ նոցին քեզ՝
Շերմին իմոյ արկանել շուքս յոյց զքեզ ուղատ դընեմ ես։
Այդքան Հռոմն կենտակոսոյսք՝ յամեն 'ի վայր ցան և ցիր
Պատուեն զաճիւն իմ լիովին և են ինձ բաւ արդադիր։
Ծածկեա՛ զանուն քո և ըզկեալդ առ ժամանակ մի 'ի յայնց.
Եթէ և ըզդոյշ լեր անձինդ։

ՔՍԻՓԱՐԷՍ

Ե՛ս, տէ՛ր արքայ, ե՛ս փախեայց.
Փառնակ կացեալ անպատուհաս, Հռովմայեցիք յաղթական
Զառնուցուն զփորձ վաղընդ փոյթ....

ՄԻՀՐԴԱՏ

Ո՛չ, արդեւրում առքեզ զայն.
Թէ կանուխ՝ թէ անագան և կորիցէ փառնակէս,
Ընդ առ Հռովմիս ըզհոգ պատուհասին իւր թողցես։ (1)
Բայց իմանամ ըզնուաղելն ոգւոցն իմոց և ուժիս.
Ըզդամ ահա զի մեռանիմ։ Մատի՛ր, որդեա՛կ իմ, առ իս.
Յողջագուրանս այսոսիկ ոյր զիս սիրիցէ քաղցրութիւն
Մատի՛ր աղէ և ընկա՛լ զՄիհրդատայ ըզհոգին։

ՄՈՆԻՄԷ

Մեռանի՛։

ՔՍԻՓԱՐԷՍ

Հապա, դըշխոյդ, զցաւս մեր 'ի մի խառնեսցուք,
Եւ ընդ տիեզերս համօրէն նմա քինահանս խընդրեսցուք։

ՎԵՐՋ

---

(1) Ընդվզեալ ապա փառնակեայ ընդդէմ Հռովմայեցւոց պարտեցաւ 'ի Յուլիոսէ Կեսարէ յառաջնում իսկ դաշտամարտին և կորեաւ յերկրորդին. և Կեսար գրեաց առ Ծերակոյն զառակաւորն բան. Veni, vidi, vici. Եկի՝ տեսի՝ յաղթեցի։